


14928

Ա.Ս.
ԳՈՒՇԿԻՆ

891.71.09

Կ-83



Հ Գ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

891.71.09

Բ. ՏՈՄԱՇԵՎՍԿԻ

ԼԴ - 83

ար.

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

1041
26

Պ Ե Տ Տ Ր Ա Ց

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Ց Ե Ր Ե Վ Ա Ն 1938

23 SEP 2013

14928

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



2407
39



Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԼԻՑԵՑ

(1799—1837)

Ալեքսանդր Պուշկինը ծնվել է 1799 թ. մայիսի 26-ին (նոր տոմարով՝ հունիսի 6-ին) Մոսկվայում: Նրա հայրը, Սերգեյ Լվովիչը (1771—1848), յերբեմնի հարուստ կալվածատիրական ընտանիքից էր: Նախնիքների կալվածքներից (Նիժեգորոդսկի նահանգում) նրան քիչ քան հասավ, բայց հասածն էլ նա վասնում էր, բոլորովին չհետաքրքրվելով անտեսական գործերով: Նա ծառայում էր Մոսկովյան կոմիսարիատում, բայց ծառայությամբ մտահոգված չէր: Նրա ծանոթների մեջ կային շատ գրողներ, իսկ նրա յեղբայր Վասիլի Լվովիչը անուն էր հանել վորպես բանաստեղծ: Պուշկինի տանը գրականությամբ հետաքրքրվում էին, իսկ ինքը՝ Սերգեյ Լվովիչը Ֆրանսիական կլասիկների յերկրապագու յեր և ինքն էլ գրում էր Ֆրանսերեն և ռուսերեն վոտանավորներ, վորոնք, ի միջի ալլոց, հայտնի էին միայն ծանոթներին և ազգականներին:

Պուշկինի մայրը, Նադեժդա Ոսիպովնան, ծնյալ Հաննիբալ սերում էր Հաննիբալից, Պետրոս մեծի «խափշիկից», վորը պատկերված է Պուշկինի վեպում:

Պուշկինը շփերթ դաստիարակություն ստացավ: Իրար փոխարինող Ֆրանսիացի գուվերնյորները, պատահական ուսուցիչները խորը ազդեցություն չէին կարող ունենալ մի յերեխայի վրա, վորը մեծ չափով թողնված էր իր



բախտին: Պուշկինն իր մանկությունն անցկացրեց Մուկվայում, միայն ամառներն ընտանիքի հետ մեկնում էր Ջախարովո, իր տատի մերձսովսկոյան կալվածքը: Բացի Ալեքսանդրից, Պուշկիններն ունեյին ելի յերկու յերեխա՝ մեծը՝ Ուլան և կրտսեր վորզին՝ Լեվը: Ծնողները յերեխաների վրա շատ ուշադրություն չեյին դարձնում, և, ըստ յերևութին, Ալեքսանդրն ընտանիքում սիրված յերեխա չեր:

Հետագայում նրա յեղբայրն Ալեքսանդրի մանկական տարիների մասին գրում էր. «Մինչև տասնևմեկ տարեկան հասակը նա դաստիարակվել է ծնողների տանը: Պոեզիայի սերը նրա մեջ արտահայտվեց նրա առաջին հասկացողությունների հետ միասին, ութ տարեկան հասակում, յերբ նա արդեն գիտեր կարդալ և գրել, իր ուսուցիչների վրա ֆրանսերեն լեզվով կոմեդիաներ և եպիգրամներ եր հորինում: Ընդհանրապես նրա դաստիարակությունն իր մեջ ուստական քիչ բան էր պարունակում: Նա միայն ֆրանսերեն էր լսում. նրա գուժերնյորը ֆրանսիացի լեր, խելոք և զարգացած մի մարդ: Նրա հոր գրադարանը միմիայն ֆրանսերեն գրքերից էր բաղկացած: Յերեխան անբուն գիշերներ եր անցկացնում և հոր կարինետում գողտուկ կլանում էր գիրք գրքի հետևից»:

Նրա քրոջ խոսքերից գրի առնված հիշողությունների մեջ խոսվում է նրա բնաստեղծական առաջին փորձերի մասին.

«Նրա նախասիրած վարժություններն էյին նախ՝ հանպատրաստից փոքր կոմեդիաներ հեղինակել և անձամբ խաղալ իր քրոջ առջև, վորն այս դեպքում հանդիսանում էր վորջ հասարակությունը և արձակում էր իր դատաստանը: Մի անգամ քույրը սուլեց նրա „Escamoteur“ պիեսիկը, բայց նա չվիրավորվեց և ինքն իր մասին գրեց հետևյալ եպիգրամը.

Dis-moi, pourguoi l'Escamoteur
Est-il sifflé par le parterre?
Hélas! c'est gue le pauvre auteur
L'escamota de Molière*).

Նույն ժամանակ փորձեց առակներ հորինել, իսկ հետո, յերբ տաս տարեկան էր, բավական շատ բան՝ մանավանդ Վոլտերի Հենրիադը կարդալով՝ գրեց մի ամբողջ հերոսա-կոմիկական պոեմ՝ 6 յերգից՝ Toliade անունով, վորի հերոսը ձրիակեր արքա Դագոբերտի գաճաճն էր, իսկ բովանդակությունը գաճաճների ու գաճաճուհիների միջև յեղած պատերազմը:

1810 թվին Յարսկոյե Սելոյում, Ալեքսանդր Լ-ի պալատին կից, մի արտոնյալ ուսումնական հաստատություն՝ լիցեյ ստեղծելու նախագիծ ծագեց: Պուշկինը, վոր ազդեցիկ ծանոթներ ուներ, վորոշեց իր վորդի Ալեքսանդրին տալ այդ դպրոցը: 1811 թ. հունիսին Ալեքսանդրն իր հորեղբոր, բանաստեղծ Վասիլիյ Լվովիչի հետ միասին մեկնեց Պետերբուրգ: Այստեղ, շնորհիվ Պուշկինների ծանոթ Ալեքսանդր Տուրգենևի միջնորդությունների, նրա լիցեյ ընդունվելն ապահովվեց և ոգոստոսի 12-ին նա ընդունելության քննությունները բռնեց: Հոկտեմբերի 19-ին կատարվեց նոր ուսումնական հաստատության հանդիսավոր բացումը, և այդ որվանից Պուշկինն սկսեց իր լիցեյական կյանքը: Լիցեյը փակ ուսումնական հաստատություն էր, այսինքն լիցեյիստներն ապրում էյին լիցեյում, Յարսկոսելսկի մեծ պալատի կողաշենքում: Ընդամենն ընդունել էյին 30 աշակերտ: Յեվ վորովհետև մեծ մասամբ պրոտեկցիայով էյին ընդունում, իսկ յերեխաներին լիցեյ տեղավորելը, վորտեղ նրանք պետության հաշվին էյին պահվում և վորտեղ ավարտելուց հետո նրանց ծառայության կարյերան ապահովված էր թվում, — ձեռնտու գործ

*) Ասա, ինչու թոցնողը (ճարպիկ գողը) սուլվեց պարտերից:
Ավագ, վորովհետև խեղճ հեղինակն այն թոցրել է Մոլիերից:

եր համարվում, ուստի այնտեղ տեղավորվեցին գլխավորապես միջին, նվազ ապահովված ազնվականները, յերեխաները, ազնվականները, վորոնք պաշտոնական կապեր ունեյին: Այն հասարակութունը, վորի մեջ Պուշկինն ընկավ, բոլորովին ել արխատկրատական չէր, թեև այնտեղ կային առնձինի և տիպոսավոր ծնողների միջանի յերեխաներ:

Լիցեյում դասավանդելու համար հրավիրված էյին լավագույն մանկավարժները, բայց լավագույններն ել բարձր մակարդակ չունեյին: Դասավանդութունը կանոնավոր չէր, վոր բացատրվում էր և՛ դասատուների անպատրաստվածութամբ, և՛ վարչական անկարող ղեկավարութամբ, և՛ անհաշող կազմված ծրագրով: Լիցեյում մնալու ակտութունը սահմանված էր վեց տարի, ըստ վորում այդ վեցամյա ծրագիրը բաժանվում էր յերկու յեռամյա դասընթացի: Այդ տարիների ընթացքում լիցեյը պետք է տար, բարձրագույնին հավասարագոր, ավարտված ընդհանուր կրթութուն: Ուստի ծրագրում չափազանց շատ նյութ էր մտնում, վոր այդքան ժամանակամիջոցում չէր կարող լուրացվել, և դասընթացի յուրացումը, անհրաժեշտորեն, վեր էր անվում ամենամակերեսային ծանոթացման: Դասավանդութունն առավելապես հումանիտար թեքում ուներ՝ ուսումնասիրում էյին գրականութուն և իրավաբանական գիտութուններ: Լեզուների ավանդումը վատ էր զրված:

Համեմատաբար լավ էր զրված ֆրանսերեն լեզվի ավանդումը, վորի դասատուն փորձված մանկավարժ Բուդրեն էր, Մարատի հաբազատ յեղբայրը, վոր Ռուսաստանում էր ընակութուն հաստատել:

Մյուս դասատուներից կարելի չէ հիշել Կունիցինին, վոր իրավաբանական գիտութունների դասընթացն էր կարողում. նա բարոյագիտական և քաղաքական գիտութունների աղյուսակ էր: Նա դասավանդում էր լիբերալ

վոգով (նա սովորել էր Փյոտինգենի համալսարանում): Հետագայում նա հրատարակեց իր դասախոսութունները «Բնական իրավունք» վերնագրով, վորի համար և հետո տուժեց. այդ դասախոսութունները համարվեցին «չափազանց միասակար, քրիստոնեյության ճշմարտութուններին հակասող և ընտանեկան ու պետական բոլոր կապերը տապալելու տրամադրող»: Պատմութունն ավանդում էր Կայդանովը, վորը հետագայում հայտնի յեր իր հրատարակած պատմության դասագրքերով, վորոնք յերկար ժամանակ միջնակարգ դպրոցում վորպես ձեռնարկ էյին ծառայում: Ռուսերեն ու լատիներեն լեզուները, գրականութունն ու պոետիկան ավանդում էր Կոշանսկին: Կոշանսկու դասախոսութունները դասավանդման ընդհանուր պլանում կենտրոնական տեղ էյին բռնում: Դասընթացի հետաքրքրականության մասին նա շատ էր հոգ տանում և, ըստ յերևութին, ըստ իր մանկավարժական ընդունակութունների մյուս դասատուներից բարձր էր: Մական լիցեյիստների կարծիքները նրա մասին զրական էյին վոչ միշտ: Պուշկինը նրան ընութագծել է «Իմ Արխատարխին» ուղերձի մեջ: Մի ժամանակ նրան փոխարինում էր Գալիչը, փիլիսոփայորեն զարգացած մի մարդ, վորն իր աշակերտների մեջ լավագույն հիշողութուններ թողեց: Ով սովորել չէր ուզում, կարող էր անձնատուր լինել ամենանուրբ ծուլության, — գրում էր հետագայում լիցեյի մասին Պուշկինի ընկեր Կորֆը, բայց ով ել վոր ուզում էր սովորել, նրա համար շատ քիչ յեղանակներ էյին բացվում շնորհիվ դասատուների մեծ մասի անփորձության, անընդունակության կամ անտարբերության, վորոնք նույնքան հեռու էյին կանոնադրութունը կատարելուց, վորքան և ընդհանրապես դասավանդման ամեն մի ուսցիոնսալ սխտեմից»:

Կրթության պակասը լիցեյիստները լրացնում էյին

զրսից: Արաաքին շրջապատի բնութագիրը տրված է Բուլ-
գարինի վոստիկանական մասնության մեջ, վոր նա տվել
էր վոստիկանության, հավանորեն 1826 թվին և վերնա-
գրված էր «Нечто о Царскосельском лицее и о духе
ОНОГО».

Ճարտկոյե Սելոյում կանգնած էր հուսարական գուն-
դը, ամառն այնտեղ ապրում էլին բազմաթիվ ընտանիք-
ներ, մայրաքաղաքից գալիս էլին բազմաթիվ հյուրեր,—
և յերիտասարդներն աստիճանաբար սկսեցին ստանալ հա-
սարակության մեջ շրջող լիբերալ գաղափարները: Պետք
է նկատել, վոր այն ժամանակ լիցեյում յերիտասարդնե-
րին հաճախելն ընդունված էր. նրանք նույնիսկ կամացուկ
(այսինքն՝ առանց թույլտվության, բայց բաց է բաց)
գնում էլին Պետերբուրգ, սպաների հետ քեֆեր էլին ա-
նում և Պետերբուրգում հաճախում էլին շատ մարդկանց,
վորոնք զգալի դեր են խաղում և վորոնց անունները տալ
չեմ ուզում: Լիցեյում սկսել են կարդալ բոլոր արգելված
գրքերը, այնտեղ էր գտնվում գաղտնի կերպով ձեռքից
ձեռք անցնող բոլոր ձեռագրերի արխիվը և, վերջապես,
հասավ այն բանին, վոր յեթե պետք էր լինում վերես
արգելված բան գտնել, ուղղակի գիմում էլին լիցեյ:

Ուրեմն, վոչ թե գիտությունները և վոչ էլ այդ գի-
տությունների դասավանդման ձևն են մեղավոր, վոր լի-
ցեյի սաների մեջ արմատացավ լիբերալ վոզին: Նախ՝ լի-
ցեյում քաղաքական գիտությունները քիչ և չափազանց
մակերեսորեն էլին ավանդում. յերկրորդ՝ հազիվ միջանի
մարդ էլին ջանասիրությամբ լսում՝ քաղաքական գիտու-
թյունների դասընթացը, և հենց նրանք էլ լիբերալներ
դուրս չեկան, որինակ՝ Կորֆը և մյուսները. լիբերալու-
թյուն էլին անում նրանք, վորոնք չափազանց վատ էլին
սովորում և, լինելով աշակերտ, արդեն ուզում էլին դառ-
նալ հորինողներ, ամեն բանի դատավորներ,— մի խոսքով,
հասունացածներ: Պրոֆեսորներ Կայդանովը, Կոշանսկին,

Կունիցինը,— բոլորն էլ բարի, կրթված և ուղղամիտ մար-
դիկ էլին. նրանք մեղք և հանցանք կհամարեյին բացառ-
րելու իրենց աշակերտներին այն, ինչ վոր հարկավոր չէր
բացատրել: Բայց քաղաքական ուղղությունն արդեն դըր-
սից էր տրված, և պրոֆեսորները, իրենց աշակերտների
հետ միայն դասարաններում զրուցելով, վոչ միայն չե-
յին կարող վերափոխել նրանց բարոյականությունը, այլ
նույնիսկ պատանիների հետ զրուցելիս դժվար կացու-
թյան մեջ էլին ընկնում, վորոնք շարունակ քաղաքական
բրոշյուրներից և արգելված գրքերից քաղած հարցեր էլին
տալիս: Խիստ հավանական է, վոր 1816 թ. կազմված
գաղտնի ընկերությունը, իր գործողության շրջանը շու-
տով տարածելով Պետերբուրգի վրա, լիցեյի վրա ուներ
գիտավորյալ և ուժեղ ազդեցություն:

Չնայած աչառու չափազանցությանը, վոր բղխում է
գույները խտացնելու ցանկությունից, Բուլգարինի գրու-
թյունը ճշմարտությունից հեռու չէ: Այս տեսակետից
բնորոշ է Պուշկինի ցուցմունքը, վոր տվել է 1828 թ.
«Գավրիլի աղալի» գործի առթիվ: Պուշկինը գործն ուզում
էր այնպես պատկերացնել, վոր իբր թե պոեմի հեղինակը
յերգիծաբան Գորչակովն է յեղել, իսկ ինքը, Պուշկինը, այդ
պոեմն արտագրել է լիցեյում և հաղորդում էր. «ձեռագիրը
ձեռքից ձեռք էր անցնում հուսարական գնդի սպաների մեջ,
բայց թե յես այն ումից եմ ստացել, յես բոլորովին չեմ կարո-
ղանում հիշել»: Այսպիսով, Պուշկինը ճշտությամբ ցույց
տվեց արգելված գրականության լիցեյ թափանցելու ուղին:

Յեթե ընդհանրապես գիտությունների դասավանդու-
մը լիցեյում քիչ էր հաջողակ, ապա դա առանձնապես
վերաբերում է Պուշկինին: Այդ են վկայում նրա այն
բնութագրերը, վոր տվել են դաստիարակներն ու դասատու-
ները: Ահա թե ինչ է գրված Պուշկինի մասին 1812 թ.
նոյեմբերի պաշտոնական ցուցակում. «Ունի ավելի փայլուն,
քան թե հիմնավոր ձիրքեր, ավելի վառվռուն և նուրբ,

քան թե խոր միտք: Դեպի ուսումն ունեցած ջանասիրությունը միշակ է, վորովհետև աշխատասիրությունը դեռևս նրա առաքինությունը չի դառել: Կարգալով բազմաթիվ ֆրանսերեն գրքեր, բայց առանց ընտրելու այն, ինչ վայել է նրա հասակին, նա իր հիշողությունը լցրել է հայտնի հեղինակների բազմաթիվ հաջող կտորներով. բավականին կարգացել է և ուսու գրականությունից, գիտե շատ առակներ և վոտանավորներ: Նրա գիտելիքներն ընդհանրապես մակերեսային են, թեև մի փոքր սկսում է վարժվել հիմնավոր խորհրդածություն: Ինքնասիրությունը փառասիրության հետ, վոր յերբեմն նրան դարձնում է մեծամիտ, զգայնությունը բարկացկոտության հետ, դյուրաբորբոքության բուռն պոռթկումները, թեթևսուրկությունը և մի առանձին զրուցասիրությունը սրամտության հետ, հատուկ են նրան: Միաժամանակ նրա մեջ նկատելի է նաև բարեսրտություն. իմանալով իր թույլ կողմերը, նա հոժարությամբ ընդունում է խորհուրդներ, վոր նրան վորոշ հաջողություն են բերում: Նրա զրուցասիրությունն ու սրամտությունը նոր և լավագույն ձև են ընդունել, յերջանիկ կերպով փոխելով նրա մտածելակերպը, բայց նրա բնավորության մեջ ընդհանրապես հաստատակամությունը և կայունությունը չի եղել: 1813 թ. սեպտեմբերին նա հետևյալ փոփոխության ստացավ. «Թեթևամիտ է, թեթևսուրկ, փնթի, անփույթ, սակայն բարեսիրտ է, ջանասեր, քաղաքավարի, ունի պոեզիայի սուսնաճանաչող սեր»: Լիցեյը Պուշկինն այնքան էլ փայլուն չավարտեց, բռնելով 19-րդ տեղը: Լիցեյական կրթության պակասությունները նա հետագայում աշխատում էր լրացնել ուժեղ ընթերցանությամբ:

Լիբերալ վոգու լիցեյ ներթափանցումը, բնականաբար, բացատրվում է այն ժամանակվա քաղաքական դեպքերով: Պուշկինի լիցեյում դանդաղ հենց առաջին տարում սկսվեց պատերազմը Ֆրանսիայի դեմ, վոր Ռուսաստանից

հսկայական լարումն պահանջեց: Նպադրեմնի արագ առաջընթացումը Ռուսաստանի խորքը և մտնավանդ Մոսկվայի գրավումը ֆրանսիացիներին կողմից 1812 թ. սեպտեմբերին, Պետերբուրգը՝ յենթարկում եր վտանգի, և առաջ եկավ Յարսկոյե Սելոյից լիցեյը եվակուացիայի յենթարկելու նախագիծը: Լիցեյիսաներին այս բոլորը չեղ կարող չհուղել և նրանց ուշադրությունը չդարձնել դեպի կատարվող դեպքերը: Յարսկոյե Սելոյով շարունակ գորքեր էյին անցնում: Ռազմական դեպքերը շարունակվում էյին մինչև 1815 թ.: Դեպքերը վերջացան Ֆրանսիայում Բուրբոնների նախահեղափոխական դինստիայի վերականգնումով, քաղաքագիրներին վերադարձով և նապոլեոնյան քաղաքական սիստեմի վերացումով, վորն իր ծագումով կապված եր ֆրանսիական հեղափոխության հետ: Նոր քաղաքականությունը սահմանեց Վիեննայի 1814 թ. կոնգրեսը: Ռազմական դեպքերի հետաքրքրությունը, բնականաբար, վեր եր անվում հետաքրքրության դեպի ներքին քաղաքականությունը, դեպի պետական կարգի և հեղափոխական պայքարի հարցերը: Ռեակցիոն սրբազան դաշինքի ստեղծումը, վորն իրենից ներկայացնում եր միապետական կառավարությունների կոալիցիա ավստրիական մինիստր Մետտերնիխի և ուսուց թագավոր Ալեքսանդրի գլխավորությամբ, և վորը կազմակերպված եր հեղափոխության հետևանքները վերացնելու համար, քողարկվում եր լիբերալ ֆրագներով, և Ֆրանսիա վերադարձած Բուրբոններն ստիպված էյին տալ սահմանադրություն, վոր գոյություն ունեցավ մինչև 1830 թ. դեպքերը: Լիբերալ խոսակցությունները պաշտոնապես թույլ էյին տրվում: Ֆրանսիայից վերադարձած գորքերն իրենց հետ բերին նաև «հեղափոխական վարակը»: Լիցեյի մոտիկությունն արքունիքին դարձավ պատճառ միապետի լուսապսակից զրկվելուն, վորովհետև լիցեյիսաները տեղյակ էյին Ալեքսանդր Լ-ի և նրա մերձավոր շրջապատի մասին տարածվող անհամեստ բնույթի

բամբասանքներին: Պատերազմական ցնցումը և յերկրի նյութական գրության վատթարացումը սուր անբավականության և ներքին խմորման աղբյուր էլին հանդիսանում: Գաղտնի կազմակերպությունները յերևան գալը բնական հետևանք էր: Լիցեյը դրանից մեկուսացված չէր:

Ցարսկոսելսկի գնդի հուսարների մեջ, վորոնց հետ կապված էր Պուշկինը, գտնվում էր Պ. Չաադակը, վոր Պուշկինի վրա առանձնահատուկ ազդեցություն թողեց: Լինելով քաղաքականապես զարգացած, բարձր կուլտուրական մարդ, խիստ լիբերալ տրամադրվածությունը, Չաադակը Պուշկինի հետ քաղաքական գրուցներ էր ունենում և շատ նպաստեց նրա մտահորիզոնի ընդարձակման: Պուշկինն իր ամբողջ կյանքում նրա նկատմամբ բարեկամական զգացմունքներ պահպանեց: Նրա առաջին քաղաքական վոտանավորներից մեկն ուղղված է Չաադակին:

Լիցեյիստների զբաղմունքը պոեզիայով արտահայտվում էր ձեռագիր ժուռնալների հրատարակումով, վորոնց մի մի մասը հասել է մեզ: Քաղաքական տեսակետից այդ ժուռնալները (վոր գտնվում էլին դասատուների հսկողության տակ) հետաքրքրություն չեն ներկայացնում, բայց նրանք վկայում են գրական մեծ կուլտուրայի գոյությունը լիցեյում: Այդ մանկական նմանողական գրվածքները շուտով հասնում են ժամանակակից գրականության մակարդակին, և արդեն 1814 թ. լիցեյիստների առջև բացվում են տպագիր որգանների եջերը: Լիցեյի բանաստեղծների մեջ առաջին տեղը նախ պատկանում էր Իլլիչևսկուն, վորը տիրում էր վոտանավորի մեծ թեթևության և ֆրանսերենից չափածո մանրունքներ էր թարգմանում: Բայց շուտով նա առաջին տեղը զիջեց Պուշկինին: Բացի նրանցից, վոտանավորներ էլին գրում Դելվիզը, Կյուսելբեկերը և ավելի փոքր չափով մյուս լիցեյիստները: Կյուսելբեկերը կիսագերմանական ծագում ունեն և գերմանական պոեզիայի մոլեռանդ յերկրպագուն էր: Լիցեյում նա աչքի չէր

ընկնում իր բանաստեղծական բարձր արվեստով, իսկ նրա տարրորինակություններն ընկերների ծիծաղն էլին հարուցում: Կյուսելբեկերի վրա կազմվում էլին եպիգրամների ամբողջ ժողովածուներ: Դելվիզը, վորը ղեռնա լիցեյում Պուշկինի ամենամոտիկ բարեկամներից մեկն էր, միաժամանակ մտերիմ էր նաև Կյուսելբեկերի հետ և գերմաներեն չիմանալով, նրա ոգնությամբ ուսումնասիրում էր գերմանացի բանաստեղծներին: Պուշկինը գտնվում էր ֆրանսիական գրականության ազդեցության տակ: Հրաշալի կերպով ֆրանսերեն լեզվին տիրապետելու համար նրան «ֆրանսիացի» անունն էլին տվել, մի բան, վոր Նապոլեոնի հետ մղվող պատերազմի ասարիներին բնավ պատվավոր մականունն չէր:

Նրա պոետական կարյերայի սկզբին ուսու բանաստեղծներից նրա վրա ամենամեծ ազդեցություն էլին գործում Բատյուշկովը և Կարամզինի շուրջը խմբված գրողների ամբողջ խմբակը: Պուշկինը նրանց հետ կապված էր ընտանեկան հարաբերություններով: Նրանց խմբակին էր պատկանում հորյեղբայրը, Վասիլի Լյովիչը: Պուշկինը լինում էր Կարամզինի տանը, վորն ապրում էր Ցարսկոյե Սելոյում: Արդեն լիցեյական տարիներում նա ծանոթացավ Ժուկովսկու և Վյազեմսկու հետ: Այդ խմբակի ազդեցությունն առանձնապես արտահայտվեց Պուշկինի ստեղծագործությունների վրա սկսած 1815 թվից:

Պուշկինի լիցեյական շրջանի ընդհանուր գրական հրապուրանքներից իշխողն էր XVIII դարի վերջի ֆրանսիական գրականության և հետագա դարոցների ազդեցությունը ընդհուպ մինչև ուսմանտիկական պոեզիայի նախորդները, վորը ֆրանսիայում արդեն ձևավորվել էր մի փոքր ուշ, Պուշկինի լիցեյն ավարտելուց հետո: Նա քաջ ծանոթ էր նաև XVII դարի կլասիկ գրականությանը հանձինս դրամատուրգներ Կորնելի, Ռասինի, Մոլիերի և կլասիցիզմի թեորետիկ և սատիրիկ Բուալո-Դեպրեոյի յերկերի:


Քայց արդեն լիցեյում Պուշկինի ամենաօրելի բանաստեղծն
եր XVIII դարի ունիվերսալ հանճար, ազատամիտ սկեպտիկ
Վոլտերը, վորի իզեոյոգիական տիրապետութիւնը վորոշող
եր յեվրոպական և ուսական հասարակութեան առաջա-
վոր շրջաններում: Պուշկինը հենց Վոլտերին եր պարտա-
կան և՛ իր վաղ անաստվածութեան, և՛ զեպի սատիրան ունե-
ցած հակումով, վորը, սակայն, կախված եր նույնպէս կարամ-
զինականների գրական պայքարից և Բատյուշկովի ծաղրա-
կան սատիրաներից («Витание на берегах Леты» և «Певец
в Беседе любителей русского слова»): Դարի վերջի բա-
նաստեղծների ազդեցութիւնը արտացոլել է Պուշկինի
բազմաթիվ մանրուէքներում, նրա եպիգրամներում, առաս-
պելական պատկերներում և ընկերական ուղերձներում:
Սրանց մեջ Պուշկինը վերարտադրում եր ֆրանսիական
տիպարները, հետեւելով ուսական տրադիցիային. ժուռնա-
լային պոեզիան այդ տարիներին զգալի չափով XVIII դա-
րի վերջի «մանր» պոեզիայի թարգմանութիւններ և նը-
մանողութիւններն էին: Պուշկինին հասան նաև պոեզիա-
յի ավելի թարմ հոսանքները: Ֆրանսիական պոեզիայի
միջոցով նա կրեց «ոստիանիզմի» ազդեցութիւնը. ոստիա-
նիզմն ինքնին հյուսիսային ժողովուրդների՝ շոտլանդացի-
ների և սկանդինավցիների հին յերգիչները՝ «գուսանները»
(«բարդերը») յերևակայական պոեզիայի նմանողութիւն-
կեղծումն եր: Այդ պոեզիայի հատկանիշ գիծն եր նախա-
ուսմանտիկական մոայութիւնը, վհատութիւնը, եպիկա-
կան պատմվածքի խտութիւնը, վորի մեջ տրվում էին
ուղղմիկների արյունալի կռիվները և զժբախտ սիրահար-
ների արկածները:

Վերջապես, լիցեյում մնալու վերջում, Պուշկինը յեն-
թարկվեց նոր ելեգիական պոեզիայի խիստ ուժեղ ազդե-
ցութեանը, վոր կապված եր ֆրանսիական աֆսիսի բա-
նաստեղծների գործունեյութեան հետ, ինչպէս Պարնին և
Միլվուան: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբի ֆրան-

սիական ելեգիան փոխարինեց այլոմների աշխարհիկ պա-
լատական պոեզիային և հանգավոր կոմպլիմենտներին,
սրախոսութիւններին և այլաբանական պատկերներին, վոր
տիրապետում էին Փարիզի նախահեղափոխական ազնվա-
կան հասարակութեան մեջ: Դրանք «զգացմունքի» պոեզիա-
յի առաջին փորձերն էին, վոր հակադրվում էին «սրա-
մտութեան» պոեզիային: Բանաստեղծները յերգում էին
իրենց սերը, և պոեզիայի կենտրոնում ղնում էին իրենց
ուրախութիւններն ու իրենց տանջանքները: Ելեգիայի
զարգացումը, վոր վորոշվում եր նախահեղափոխական
սոցիալական վերախմբավորումներով, զուգադիպեց զեպի
«բնութիւնը» ձգտելուն, վոր ծայրահեղ ձևով արտահայտ-
վում եր եկզոտիկայով, հարավային յերկրների բնութեան
նկարագրութիւններով: Զգաւումը քաղաքներից զեպի գյու-
ղական շրջապատը բնորոշ ե տվյալ ուղղութեան համար:
Յերբ Պուշկինն ընկավ հարավ, հարավային բնութեան բա-
նաստեղծական իմաստավորումը արդեն նախապատրաստ-
ված եր Պարնիի, Բերտենի, Լեոնարի (վորոնք ծագումով
ֆրանսիական գաղութներից էին) եկզոտիկ ելեգիայով:
Իր «աֆրիկական» եկզոտիկ ծագման զգալութիւնը Պուշ-
կինը զաստիարակեց վոչ առանց այդ պոեզիայի ազդեցու-
թեան: Պարնիի սիրային սուր ելեգիայի հետ միաժամա-
նակ Պուշկինի վրա ազդել է նաև Նապոլեոնի կայսրու-
թեան դարաշրջանում տարածված Միլվուայի և նրա հե-
տեվորների վհատ ելեգիան, վորոնք յերգում էին թոշ-
նումը, յերիտասարգ բանաստեղծի մահը և այլն: Այստեղ
նույնպէս Պուշկինի անմիջական ծանոթութիւնը ֆրանսիա-
կան բանաստեղծների հետ ամբողջովում եր ուսւ բանաս-
տեղծների, մասնավորապէս Բատյուշկովի որինսակով:

Պուշկինի լիցեյական գրական փառքը վերաբերում է
1814 թ., յերբ նա մամուլում առաջին անգամ հանդես յե-
կավ, տպագրելով «Вестник Европы»-ի հուլիսյան հա-
մարում «К другу стихотворцу» վոտանավորը: Նրա հե-

1017



տեվյալ զրական հաղթանակն եր այն, յերբ փոխազրական քննություններին (յեռամյա բարձր դասընթացին անցնելու ժամանակ) Պուշկինը կարգաց «Воспоминания в Царском Селе» հայրենասիրական ներբողը (ողան), զբված հանդիսավոր լիբրիկայի բարձր փոճով, վոր պատերազմի շրջանում հաստատվեց պոեզիայում և զրական տրադիցիայով հասնում եր XVIII դարի ներբողներին: Ընթերցումը տեղի ունեցավ 1815 թ. հունվարի 8-ին: Քննությանը ներկաների մեջ եր զառամյալ Դերժավինը, վորը հուզվեց յերիտասարդ բանաստեղծի յերկով: Այդ տարվա վերջին Պուշկինը ներգրավվեց կարամզինականների և հին ուղղության բանաստեղծների զրական պայքարի մեջ:

Հին ուղղության գրողների կենտրոնն եր «Беседа русского слова»-ն, վոր հավաքվում եր Դերժավինի մոտ: Նրա վոզեվորոդն եր աղմիրալ Շիշկովը, վոր զբաղվում եր բանասիրական հետախուզումներով: Շիշկովի մշուշապատ թերիաների, վորի ծայրահեղություններին համաձիտ չեր Դերժավինը, նպատակն եր ոուս զրական լեզվին վերադարձնել նրա սլավոնական կերպարանքը. նա այն կարծիքին եր, վոր ոուսերեն և յեկեղեցական-սլավոնական լեզուները մի անբաժանելի ամբողջություն են կազմում: Հեղինակի նացիոնալիստական, ռեակցիոն հակումները նման թերիայի ձև եյին ստանում: Իրականության մեջ նա պաշտպանում եր բարձր, հանդիսավոր փոճը: Այս բոլորը զլիսավորապես ուղղված եր արևմտայեվրոպական ազդեցությունների դեմ, վորոնց մեջ նա տեսնում եր հեղափոխական չարիքի արմատը: Շիշկովի շուրջը համախմբվում ելին անսաղանդ գրողները, վորոնք յերիտասարդ բանաստեղծների մեջ ծաղրի առարկա եյին հանդիսանում: Առանձնապես դաժանորեն նրանց ծաղրում եր Բատյուշկովը: Շիշկովի դատողությունները գլխավորապես ուղղվում եյին կարամզինի և նրա զպրոցի դեմ: Կարամզինի բացահայտ արևմտա-յեվրոպական համակրանքները Շիշկովը

գնահատում եր, այն ել վոչ առանց վորոշ հիմքի, վորպես նոր, բուրժուական (այսինքն հեղափոխական) կուլտուրալի իդեոլոգիական ազդեցության արտացոլում զրականության մեջ: Շիշկովին և «Беседа»-ին հարում եյին կարամզինի «սենտիմենտալ» փոճի հակառակորդները, մի վոճ, վոր հանդիսանում եր ժան-ժակ Ռուսսոյի և Ստերնի զրական և իդեոլոգիական տենդենցների արտացոլումը ոուսական հողի վրա: Մասնավորապես «Беседа»-ին հարեց բեդնավոր զրամատուրգ իշխան Շախովսկոյը: 1805 թ. նա կարամզինի դեմ գրեց մի կատակերգություն «Նոր Ստերն» վերնագրով. 1811 թ. նա հանդես յեկավ «Կոդուտված մուշտակներ» անավարտ պոեմով, վորի մեջ ծաղրի լեք յենթարկել է. Լ. Պուշկինին. 1815 թ. սեպտեմբերին նա բեմադրեց «Իսա կոկետներին կամ Լիպեցկի շրերը», վորտեղ ծաղրում եր ժուկովսկու բալլադները: Թատրոնական կյանքի այդ դեպքը շատ խոսակցությունների առիթ տվեց և պատճառ դարձավ «Արգամաս» ծաղրական ընկերության կազմակերպման համար, վորի մեջ միացան կարամզինականները, նպատակ ունենալով սատիրական պալքար մղել Շախովսկու և Շիշկովի «Беседа»-ի դեմ:

Ընկերությունը կազմվեց 1815 թ. հոկտեմբերին և իր գոյությունը պահեց մինչև 1817 թ. վերջը: Նրա մեջ մտան Ս. Ս. Ուվարովը՝ հետագայում ժողովրդական լուսավորության մինիստր, Դ. Ն. Բլուզովը՝ հետագայում ներքին գործոց և արդարագատության մինիստր, Դ. Վ. Դաշկովը՝ հետագայում արդարագատության մինիստր: «Արգամասի»-ի այդ առաջին անդամներն այն ժամանակ դեռ ևս բյուրոկրատական բարձր պաշտոններ չեյին զբաղվում և ոուսական ազնվական հասարակության առաջավոր մասին մոտ եյին կանգնած. հետո՝ այնտեղ եյին Ալեքսանդր Տուրգենևիչը և նրա յեղբայր Նիկոլայը, հետագայում քաղվտարանդի, վոր զեկաբրիստների գործով ի բացակայության մահ-

վան պատժի յեր դատապարտված, ժուկովսկին՝ ընկերության քարտուղարը, Պ. Ա. Վյադեմսկին՝ արդամասականների գրական իդեոլոգը, Վասիլի Պուշկինը, Դ. Դավիդովը, Բատյուշկովը. գաղտնի ընկերությունների անդամներից, բացի Ն. Տուրգենևից, կային Նիկիտա Մուրավյովը և Միխայիլ Որլովը: Սակայն «Արդամաս»-ի շարքերում քաղաքական համոզմունքների միասնությունն չկար: «Արդամասի» նիստերը վեր ելին ածվում «Беседа»-ի անդամների հասցեյին ուղղված գրական պարոդիաների և սատիրաների: Ալեքսանդր Պուշկինը «Արդամասի» մեջ մտավ արդեն լիցեյն ավարտելուց հետո և, ինչպես բոլոր արդամասականները, ստացավ իր մականունը «Сверхчок» («Ծղրիդ»), — բայց նիստերում մեծ մասնակցություն չունեց:

Սակայն «Արդամասի» դերն ավելի ընդարձակ էր, քան յերգիծաբանական արձանագրություններով ծաղրական նիստերի կազմակերպումը: «Արդամասը» հանդիսացավ «Беседа»-ի հակառակորդներին միացնող կենտրոնը: Ծաղրական ծեսերի տակ կարելի յեր նկատել գրական լուրջ պայքարը հանուն գրականության լեզուպահանայցման՝ ընդդեմ հանդիսավոր ողաների (նեբրոզների) և պոեմների բարձր ձևերի, հանուն ազնվական ինտելիգենցիայի լեզվին մոտ պարզ գրական լեզվի մշակման: Արդամասականներն իրենց համարում էին Կարամզինի գործի շարունակողներ և համախմբված էին նրա նկատմամբ ունեցած խորը հարգանքով:

Այն ժամանակվա գրական խմբավորումները «Արդամաս»-ով և «Беседа»-ով չէին սպառվում: Մեծ ազդեցություն էր վայելում գրողների այն խմբակը, վոր հավաքվում էր Գեղարվեստների ակադեմիայի նախագահ, իսկ հետո Հանրային գրադարանի ղերեկտոր Ուլենինի մոտ: Նրա մոտ լինում էին նաև «Беседа»-ի գրողները և «Արդամասի» կողմնակիցները, բայց գլխավորապես նրանք, ովքեր ծայրահեղ կուսակցությունների կողմը չէին հակվում,

կամ «Беседа»-ի այնպիսի հակառակորդները, վորոնց համար Կարամզինի սենտիմենտալիզմը վոչ պակաս ոտար էր, քան «Беседа»-ի սլավոնական բարձր վոճը: Ուլենինի սալոնում առաջին տեղը գրավում էին առակագիր Կոնիլովը և բանաստեղծ Գնեդիչը, վորը հայտնի յեր «Իլիականի» թարգմանությամբ: Պուշկինը յերկուսին ել բարձր էր գնահատում և հետագայում հաճախում էր Ուլենինի խմբակը:

Սկսած «Արդամասի» հիմնադրությունից և մինչև լիցեյն ավարտելը Պուշկինն անվիճելիորեն գտնվում էր «Արդամասի» ազդեցության տակ: Այդ ժամանակվան են վերաբերում նրա ուղերձները, գրված արդամասական վոգով և ուղղված առանձին արդամասականների: Դեռ ավելի առաջ, «Беседа»-ի դեմ պայքարելու համար, Բատյուշկովի սատիրաներով վոգեվորված, Պուշկինն այսուհետև կողմնակից է «Արդամասի» բոլոր համակրանքներին և հակակրանքներին: Կարելի յե խոսել «Արմագասի»՝ նրա նկատմամբ ունեցած գրական ղեկավարության մասին:

Մյուս կողմից, Պուշկինի նկատմամբ «Արդամասականների» ունեցած հովանավորությունն ամրանում էր նաև նրանով, վոր դեռևս լիցեյում Պուշկինն ընթերցողների մեջ հուշակ էր վայելում: Պուշկինը ձեռք բերեց շատ հուսատու բանաստեղծի համբավ. 1816 և 1817 թ. թ. հրատարակված «Собрания образцовых сочинений и переводов в стихах»-ի պրակներում ղետեղված էին նրա յերեք վոտանավորները («Առ Լիցինյան», «Նապոլեոնը Ելբայի վրա» և «Հիշողություններ Յարսկոյե Սելոյում»):

Լիցեյում մտալու ժամկետը վերջացավ 1817 թ. ամառը: Ավարտական քննությունները տեղի ունեցան հունիսի 9-ին, յերը Պուշկինը կարգաց պատվերով գրված «Безверие» վոտանավորը:

Արդամասական Ֆ. Վիգելը իր հիշողություններում գրում էր. «Յերիտասարդ Պուշկինի ավարտումը «Արդամա-

սի» անդամները համարում էյին վորպես իրենց համար մի յերջանիկ դեպք, վորպես մի հաղթանակ. նրա ծնողներն անգամ չէին կարող այնքան ավելի քնքուշ մասնակցութիւն ունենալ. մանավանդ ժուկովսկին, նրա կընքահայրն «Արգամասում», յերջանիկ եր, կարծես աստվածինքը նրան սիրելի գավակ եր պարգեել: Զավակն ինձ բավական չարածճի և անսանձ թվաց, և յես նույնիսկ ցավով ելի դիտում, թե ինչպես բոլոր ավագ յեղբայրները իրար յեակից յերես էյին տալիս փոքրիկ յեղբորը: Կհարցնեն, արդոք նա այն ժամանակ լիբերալ եր: Յեվ ինչպես կարող եր մի տասնութ տարեկան տղա, վոր հենց նոր եր ազատութիւն ստացել, և ուներ բանաստեղծական վառ յերեվակայութիւն և յերակներում յեռուն աֆրիկական արյուն, լիբերալ չլինել, և այն ել մի այնպիսի դարաշրջանում, յերբ ազատամտութիւնն իր յեռուն շրջանն եր ապրում»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(1817—1820)

Լիցեյն ավարտելուց հետո Պուշկինը նշանակվեց պաշտոնի արտաքին գործոց կոլեգիայում: Այդ հիմնարկութիւնը, վոր հետագայում (1832 թ.) վերակազմվեց արտաքին գործոց մինիստրութիւն, աչքի յեր ընկնում աշխատակիցների առանձնահատուկ ընտրութիւնով. ընդունվելու համար բարձր կրթական ցենզ եր պահանջվում: Նրա ծառայողների կազմը զբաղանապես տարբերվում եր Պետերբուրգի մյուս հիմնարկների չինովնիկական միջավայրից: Պուշկինի պաշտոնակիցների մեջ մենք գտնում ենք Գրիբոյեգովին: Պուշկինի հետ միասին այդտեղ մտան նրա ընկերներ Կորսակովը, Կյուլխերեկերը, Լամոնտովը, Գորչակովը:

Ծառայութիւն մտնելուց մի ամիս հետո Պուշկինն արդեն մինչև սեպտեմբեր արձակուրդ ստացավ և մոտ յերկու ամիս անցկացրեց Միխայլովսկոյեյում, իր մոր պըսկովյան կալվածքում: Հետո Պուշկինը յերեք տարի, համարյա առանց դուրս գալու, մնաց Պետերբուրգում (չհաշվելով 1819 թ. ամռանը Միխայլովսկոյե գնալը):

Լիցեյից հետո Պետերբուրգում անցկացրած տարիները Պուշկինն անցկացրեց գրական ուժեղ աշխատանքով: Լիցեյում յեղած վերջին մեկուկես տարում նա իր գրվածքները ժուռնալներում տպելու հնարավորութիւն չունեց: Լիցեյն ավարտելը նրա առաջ բաց արեց ժուռնալներ յեջերը: 1817 թ. նա միքանի վոտանավոր տպագրեց Զագոսկինի «Северный наблюдатель» ժուռնալում: Ծիշտ ե, այդ ժուռնալի դադարումով Պուշկինը համարյա դադարեց իր վոտանավորները տպագրելուց, բայց այդ ժամանակ նա գրադված եր իր վոտանավորների ժողովածուն պատրաստելով: Նա մտադիր եր զբանք հրատարակելու առանձին գրքուկով: Այն ժամանակ նա գլխավորապես աշխատում եր «Ռուսլան և Լյուդմիլայի» վրա, վորն սկսել եր իր լիցեյական կյանքի վերջին տարին:

Լիցեյն ավարտելուց հետո գրական միջավայրը փոխվեց: Յեթե լիցեյում վերջին տարին նշված եր «Արգամասի» իդեոլոգիական ազդեցութիւնով, այժմ արդեն, յերբ վերջապես Պուշկինը հնարավորութիւն ստացավ անմիջականորեն մասնակցելու այդ ընկերութիւն նիստերին, այն հանկարծակի իր գոյութիւնը վերջացրեց: «Արգամասի» այդ հանկարծական վախճանը բացատրվում եր նրա ամենակտիվ մասնակիցների մեկնումով, բայց իրոք գլխավոր պատճառը հանդիսանում եր այն, վոր «Веседа»-ի հետ մղած բանավեճը, վոր արգամասականների գործունեյութիւն հիմնական նյութն եր կազմում, դադարեց վորեվ կերպ ուշադրութիւն գրավելուց: Այդ տարիների իրադրութիւնը նոր խնդիրներ եր առաջադրում, վորոնք

հին «Արզամասի» կազմով լուծվել չեյին կարող: Արդեն հենց իրեն՝ «Արզամասի» մեջ նրա միջանի անդամները, մասնավորապես Մխիթարյ Որլովը և Նիկոլայ Տուրգենևը խնդիր դրեցին, վոր ժուռնալի միջոցով լիբերալիզմի գաղափարների քաղաքական պրոպագանդ մղվի, բայց համախմբող քաղաքական ծրագրի բացակայութունը «Արզամասը» դարձնում էր նման գործունեություն համար բոլորովին անընդունակ: «Արզամասը» քայքայվեց: Տեղեկություններ չեն պահպանվել, վոր Պուշկինը մասնակցել է «Արզամասին», և ըստ յերևույթին դա նշանակալից էլ չի յեղել: Մեզ հասել է միայն նրա ներածական չափածո ճառի մի անձև հատվածը.

Ցանկությունների պսակ Ուրեմն ձեզ տեսա,
Հանդուգն մուսաների մտերիմներ, ո՛վ սքանչելի Արզամաս*):

Բայց միաժամանակ և անկախ դրանից աշխուժանում էր գաղտնի ընկերությունների գործունեությունը: Պուշկինը լիցեյն ավարտեց հենց գաղտնի ընկերությունների վերակառուցման շրջանում: 1816 թ. հիմնվեց «Փրկության միություն» առաջին հեղափոխական ընկերությունը: Այստեղ համախմբվեցին սպայական առաջավոր յերիտասարդության ներկայացուցիչները. միությունն ազդեցությունը արագ տարածվեց ուռս ազնվական-լիբերալների լայն շրջաններում: Այդ ընկերությունը կազմակերպված էր հեղափոխական խիստ կոնսպիրացիայի հիման վրա, և իսկական նպատակները հայտնի էյին միայն կազմակերպչական կենտրոնի անդամներին: Շուտով միության կազմում յերևան յեկան տարածաճանություններ: Պալքարի հեղափոխական միջոցների կողմնակիցները փոքրամասնություն կազմեցին և գերակշռող հանդիսացան ուռսական լիբերալիզմի չափավոր հոսանքները, վորոնք

*) Այս և հետևյալ բանաստեղծությունների հատվածները թարգմանել է Հ. Պողոսյանը

հակված էյին սպասողական տակտիկայի և պրոպագանդայի միջոցով դանդաղ ներգործման: 1817 թ. աշնանը ընկերությունը փակվեց: Նրա փոխարեն Մոսկվայում հիմնվեց «Զինվորական ընկերություն»-ը Նիկ. Մուրավյովի (վերջին արզամասականներից մեկի) և Կատենինի գլխավորությամբ: Այդ ընկերությունը յերկար գոյություն չունեցավ և 1818 թ. հիմնվեց «Բարոցության միությունը», վորը գոյություն ունեցավ մինչև 1821 թ.: Նրա մեջ դեկապարությունը պատկանում էր չափավոր լիբերալներին: Ընկերության նպատակն էր մտցնել ներկայացուցչական կառավարչություն և ազատագրել գյուղացիներին: Ընկերությունն իր առաջ խնդիր էր դնում լայն քաղաքականությունը, վորն այդ տարիներին, չնայած կատարելապես պարզված շրջադարձին դեպի ռեակցիան, շարունակում էր լիբերալ հայտարարություններ անել և պաշտպանել լիբերալ նախաձեռնությունները: 1818 թ. է վերաբերում Արակչևեի (Ալեքսանդրի ռեակցիոն քաղաքականության վոգելչնչողի, նրա թագավորության վերջին տարիներում) նախագիծը գյուղացիների ազատագրության մասին. նույն տարվա մարտին Ալեքսանդրը սեյմի բացմանը Վարչավայում ճառ արտասանեց, վորի մեջ հայտարարում էր, թե «մտադիր է լիբերալ հիմնարկությունները (այսինքն սահմանադրական, ներկայացուցչական կարգը) տարածել Ռուսաստանի բոլոր մարզերում»: Կառավարության այդպիսի քայլերը կարծես լեզալացնում էյին լիբերալ պրոպագանդը, բայց մյուս կողմից նրանք նպաստում էյին այն բանին, վոր տիրապետություն էյին ձեռք բերում, մանավանդ Պետերբուրգում, բյուրոկրատական կենտրոնում, ամենաչափավոր հոսանքները:

Լիցեյից դուրս գալուց հետո, Պուշկինի առաջին տպավորութիւնները քաղաքական էին: Նրա քաղաքական մտահորիզոնի ընդարձակմանը նպաստեց Նիկոլայ Տուրգենևի հետ ունեցած ծանոթութիւնը, վորը գյուղացիների ազատագրութեան բռուն կողմնակիցն էր, ծանոթութիւնը Չապաևի հետ, հաճախակի շփումն իր լիցեյական ընկեր Պուշկինի հետ, վորը մտել էր գաղտնի ընկերութեան մեջ, և լիբերալ սպայութեան բազմաթիւ ներկայացուցիչների հետ, վորոնց հետ Պուշկինը դեռ ևս լիցեյումն էր կապեր հաստատեր:

Այդ բոլոր ամբիւններին եւ Պուշկինը գտնվում էր գաղտնի ընկերութեան ազդեցութեան սփերայում: 1819 թ. մարտին նա մտավ նոր կազմակերպված «Կանաչ լամպ» գրական բարեկամական ընկերութեան մեջ, վոր հավաքվում էր Նիկիտի Վսեվոլոժսկու մոտ (Պուշկինի պաշտոնակիցը կոլեգիայում) և հանդիսանում էր «Բարութեան միութեան» բաժանմունքը, վորի մասին սակայն նրա անդամները իրազեկ չէին: Գրական զբաղմունքների և ընկերական խնձույթների անվան տակ այստեղ զբաղվում էին լիբերալ գաղափարների տարածումով և այլքսանդրյան ուժիմի քննադատութեամբ:

Այս շրջանի հիմնական քաղաքական վտանավորներն են՝ «Ազատութիւն»-ը (1817), «Չապաևին» (1818), «Հեքիաթները» (1818) և «Գյուղը» (1819):

«Ազատութիւն» վտանավորի քաղաքական իդեոլոգիան վկայում է խիստ չափավոր ազատամիտ գաղափարների ազդեցութիւնը Պուշկինի վրա, վոր ժամանակավորապես տիրեցին արևմտյան հրապարակախոսութեան մեջ Բուրբոնների վերահաստատումից հետո: «Որինականութեան» (լեգիտիմիզմի) քաղաքական սիստեմի տեսակետից Ֆրանսիական հեղափոխական եքսցենաները, ընականաբար, հանգեցրին Նապոլեոնի բռնապետական ռազ-

մական դիկտատուրային. միայն որինական դինաստիայի վերականգնումը, վորը հենց իր առաջին քաղաքական Ֆրանսիացիներին սահմանադրութիւն (Քսարտիա) տվեց, յերկրի համար ապահովում է կարգ և ծագկումն: Չափավոր սահմանադրութիւն միապետական սիստեմի հետ միասին՝ անա լիբերալների այդ խմբակի իդեալը: Դա դրութեան տերերի իդեոլոգիան էր, վորոնք ոգտվելով հեղափոխութեան սոցիալական ցնցումները արդունքներով, բնավ չէին ցանկանում հեղափոխական ուժիմ: Գրավելով տնտեսական իշխող դրութիւն, նրանք ձգտում էին միայն ամրացնելու քաղաքական ազդեցութիւնը: Ամեն ինչ հանդում էր բարենպաստ որենսդրութեան պրոբլեմին, բոլոր հարցերը լուծվում էին որենսդրական հրաշքով, այսինքն՝ «լավ» որենքներ հրատարակելով և այդ որենքները պահպանելով: Պուշկինը հայտարարում է վերացական «ազատութեան» համակցումը («Կոր որենքներ») հետ: Այդ որենքը վեր է «ժողովրդից» և «թագավորներից»: Որենքի վտանահարումը ցարի, ինչպես և ժողովրդի կողմից ատելի յե Պուշկինին: Ատելի յե Պուշկինին Նապոլեոնի՝ «ինքնիշխան շաբադործի» պատկերը:

Բնորոշ է Պուշկինի ազատամտութիւնը պատկերող մի գիծ — այդ վոլտերով տարվելն է: «Անարդար» իշխանութեան («неправедная власть») հիմքը նա համարում է «նախապաշարմունքների (предрасуждение) թանձրացյալ խավարը»: 19-րդ դարի սկզբի լեզվով «նախապաշարմունքներ» համարում էին յեկեղեցական-կրոնական սիստեմը: «Ազատութեան» վեբջին տողերում Պուշկինը լիակատար պարզորոշութեամբ բաց է անում այդ այլաբանական Ֆորմուլան, «գահի պատնեշների» թվում բանտերի կողքին գոհասեղանները (алтарь) գնելով: Պաշտոնական միստիցիզմի զարգացման, Բիրլիական ընկերութեան գործունէյութեան շրջանում, գոլիցինյան մինիստրութեան հաստատ-

ման տարում այս մտախփը կենդանի արձագանք է հանդիսանում շրջապատին, թեպետ, ըստ եյության, ինչպես և շատ բան «Ազատութեան» մեջ, արտահայտում էր XVII դարի ֆրանսիական լուսավորականների տրամադրութեանները:

Ալեքսանդր I-ի թագավորման վերջին տարիների քաղաքական պայմաններում այս ներքողը կառավարութեանը շարժված ուղղակի մարտահրավեր էր: Դա առանձնապես շեշտվում էր և այն հանգամանքով, վոր ներքողը պարունակում էր բացահայտ ակնարկութեան Պավել I-ի սպանութեանը Ալեքսանդրի մասնակցութեան մասին:

Չաադակին ուղղված վոտանավորը, ինչպես և «Ազատութեան»-ն սկսվում է՝ հանուն քաղաքացիական մտախփների՝ սեր յերգելուց հրաժարվելով: Ի տարբերութեան քաղաքական ուսմունքների արատրակա շարագրանքի, վոր մենք գտնում ենք «Ազատութեան» վոտանավորում, այստեղ արգեն խոսվում է ինչ-վոր սպասելիքների մասին ուսական իրականութեան սահմաններում: Այդ սպասելիքները բավականաչափ անորոշ են և հեղինակի քաղաքական ծրագիրը պարզ չէ: «Սուրբ ազատութեան» — սա մի ֆորմուլա յեր, վոր ամեն մեկն իր ուզածի պես էր բաց անում: Բայց այստեղ այդ ազատութեանը համակցվում է ինքնիշխանութեան բեկորների հետ: «Ճակատագրական իշխանութեան ճնշում» — այս է շրջապատի բնութագիրը: Չպետք է գերադնահատել այս ուղերձի հեղափոխականութեանը, բայց չի կարելի նրա մեջ չտեսնել նաև գործողութեան թեկուղ և անորոշ, վոր բավականաչափ պարզ գործողութեան կոչ: Նման վոտանավորները հրաշալի ազդեցություն միջոց եյին, վորովհետև հնարավորութեան եյին տալիս դնել նրանց մեջ ամեն տեսակի բովանդակութեան:

«Հեքիաթները» (Noël) յերգիծաբանական վոտանա-

վոր է, ուղղված Ալեքսանդր I դեմ: Այդ վոտանավորով Պուշկինն իրեն անջրպետում է պաշտոնական լիբերալիզմից: «Թագավոր-հայրը հեքիաթներ է պատմում» — այդպես են բնութագրված Ալեքսանդրի սահմանադրական խոստումները:

«Դյուլըր», վոր գրված է Միխայլովսկոյե գյուղի յերկրորդ հաճախումից հետո, վերաբերում է ճորտատիրական իրավունքի հարցին: Վոտանավորը գրված է «դասեր ցարերին»-ի վրձով, վոր սովորական էյին դեռ ևս XVII դ. գրականութեան մեջ: Պուշկինը խոսում է ճորտատիրութեան վերացման մասին, կարծես կառավարութեանը դիմելով: Դա արդեն պրոպոզանդա յե, ուղղված ռեֆորմ կատարելու իշխանութեամբ ոժտված անձանց: «Յարի նշանով» («по манию царя») ֆորմուլան ցույց է տալիս, վոր վոտանավորը գրվել է այնպիսի պարագաներում, յերբ ճորտական դրութեան վերացման մասին խոսակցութեանները դեռ ևս պտտում էյին կառավարական շրջաններում, յերբ Արակչեևի նախագծի տապալումը դեռ ևս կատարված փաստ չէր և յերբ տվյալ հարցի նկատմամբ ինքնակալութեան հետ աշխատակցելը հնարավոր էր թվում: Այդ վոտանավորը Պուշկինի ծանոթների միջոցով ներկայացված էր Ալեքսանդրին:

Իհարկ է, կառավարութեան մոտ Պուշկինի վատ համբավ ստեղծվելու պատճառը Պուշկինի ծրագրի արմատականութեանը (радикальность) չէր: Ուշադրութեան էյին գրավում ուղղիցին տրամադրութեամբ գրված բազմաթիվ եպիգրամներ, վորոնց վորոշին անհնար է ներկայումս. Պուշկինի անունով շրջում էյին Ալեքսանդրի, Արակչեևի և ուրիշների դեմ ուղղված եպիգրամների ցիկլեր, սակայն վոր բոլորը բնավ, ինչպես կարելի յե յինթաղրել, Պուշկինին էյին պատկանում:

Ահա խավարապաշտ Յոտիի դեմ ուղղված այդպիսի հարկերամսերից մեկը:

Յանատիկոս, կիսասրեկա,
Նա հոգեոր մի զենք ունի,
Անեծք և սուր, խաչ և մարակ,
Մենք չենք ուզի, աստված չանի,
Մի այդպիսի կեղծ քաննա,
Կեսարբի և կիսասուրբ:

Գաղտնի ընկերությունների անդամների ձեռքին Պուշկինի վոտանավորները դարձան գրական պրոպագանդայի զենք: Նրանք ձեռագրերով տարածվեցին հսկայական չափով, մանավանդ սպայության մեջ և Պուշկինի համար փառք էլին ստեղծում վոչ պակաս չափով, քան մամուլում լույս տեսած նրա յերկերը:

Այդ աարիններին Պուշկինը մեծ վոզեվորությամբ թատրոն էր հաճախում: Իրաման, ոպերան, բալետը հավասարապես գրավում էլին նրան: Այդ ժամանակվա թատրոնը ինտենսիվ կյանք էր ապրում: Մոլեռանդ թատերասերները, իսկ դրանց թվին էր պատկանում Պետերբուրգի համարյա ամբողջ ազնվական յերիտասարդությունը, կազմեցին խմբակներ, կուսակցություններ, վորոնք վորևե չափով արտացոլում էլին հասարակական խմբավորումները: Այդ ժամանակ թատերական պայքարը ամենից քիչ կրում էր ակադեմիական վեճերի բնույթ՝ մաքուր արվեստի և դրամատիկ յերկերի բեմական մարմնացման ձևերի մասին: Թատրոնը մի յուրատեսակ պարլամենտ էր, և շվոցներում ու ծափահարություններում, թատերական յերեկոյթներում, ժուռնալներում տարվող բանավեճերում արտահայտվում էլին բոլորովին վոչ թատերական համակրանքներ և հակակրանքներ:

Պուշկինը, վոր թատրոնական աշխարհի հետ կապեր էր հաստատել, ընդունված էր Շախովսկու շրջանում և պատկանում էր այսպես կոչված թատրոնական բազկաթոռների «ձախ թևին» (այսպես էր անվանում իրեն թատ-

րոնական հաճախորդների, առավելապես յերիտասարդությունից ամենաառաջավոր մասը, վոր ըստ պարլամենտական կանոնների թատրոնում գրավում էր ծայրահեղ ձախ բազկաթոռները): «Կանաչ լամպում» գերակշռում էլին թատերական հեռաքրքրությունները, և թատրոնի շուրջը պտտվող վեճերը միահյուսվում էլին անգլիական սահմանադրության մասին յեղած վեճերի և ուսական ինքնակալության քննադատության հետ:

Այդ տարվա թատրոնական հեռաքրքրությունները արտահայտվեցին «Յեվգենիյ Մնեգինի» և գլխում, վորտեղ Պուշկինը տվեց 1818—1819 թ. թ. թատրոնի բնութագիրը:

Այն գրական որգանները, վորոնք բնորոշում էլին գրողների խմբավորումները Պետերբուրգում, հանգիստանում էլին հետևյալ յերեք ժուռնալները:

«Сын отечества», վոր հրատարակվում էր 1812 թվից Ն. Գրեչի խմբագրությամբ, վորը հետևում էր նրան, ով ամենամեծ հաջողություն էր վայելում, թույլ էր տալիս բանավեճեր, տպում էր հակառակ ուղղությունների հոգվածներ, և ընդհանրապես ավելի շատ հոգում էր բովանդակության հեռաքրքրականության, քան թե գրական ուղղության մասին: Մի վորոշ ժամանակ ժուռնալը համարվում էր լիբերալ, և նրա էջերում իշխում էլին արգամասականները:

«Благонамеренный» (վոր լույս էր տեսնում 1818 թվից), առակագիր Ա. Յե. Իգմայիլովի խմբագրությամբ, հանգիստանում էր «Միխայիլովսկու» անվան տակ հայտնի գրական ընկերության որգանը (նրա պաշտոնական անունն էր «Գրականություն, գիտություններ և գեղարվեստ սիրողների ազատ ընկերություն»): Ընկերությունը անկման վիճակումն էր և Իգմայիլովն ուզում էր յերիտասարդությանը գրավելով կենդանացնել այն: 1818 թ. հուլիսին Պուշկինն ընտրվեց այդ ընկերության մեջ և նույն տարին

նա «Благонамеренный»-ում տպեց մի վոտանավոր-
Բայց Պուշկինի հարաբերութիւնները Իզմայիլովի և նրա
գրական շրջանի հետ դրանով էլ սահմանափակեցին։
Յերիտասարդութիւնը շուտով Իզմայիլովից յերես դարձրեց,
և նա մնաց չափավոր միջակութիւններէ շրջապատում,
ինչպիսին էյին հովվերգու Պանասը, Ժուռնալային արհես-
տավոր Բորիս Ֆետոբրովը, դեպի «Веседа»-ն հակված Ծե-
րեթեկը և ուրիշները, վորոնք շուտով կատաղի պայքար
սկսեցին յերիտասարդութեան և մասնավորապես Պուշ-
կինի դեմ։

«Соревнователь просвѣщенія» («լուսավորութեան
նախանձորը») մի այլ գրական ընկերութեան որդանն էր
(«Ռուսաց գրականութիւն սիրողների ազատ ընկերու-
թեան» — կարճ՝ «Նախանձորդներ»), դեպի վորը յերիտա-
սարդութիւնն ավելի յեր հակված։ Բայց այնտեղ տիրա-
պետութիւնն ձեռք բերելու համար պահանջվեց պայքար,
վորը վերջացավ յերիտասարդութեան հաղթանակով միայն
1820 թ., համարյա Պուշկինի աքսորի նախօրյակին։ Պուշ-
կինը չկարողացավ մտնել այդ ընկերութեան մեջ, բայց
պահպանեց իր կապը այդ ընկերութեան մեջ գտնված
յերիտասարդութեան հետ։ Այդ յերիտասարդ գրողների մեջ
էյին նրա լիցեյական ընկերներ Դեվիզը և Կյուսիսեթե-
կերը, նրանց թվումն էր յերիտասարդ բանաստեղծ Յե.
Բարատինսկին։ Նրանք կապված էյին սերտ բարեկամու-
թեամբ և յերգում էյին այդ բարեկամութեանը «հորացիա-
կան» ուղերձներում։ Յերիտասարդ բանաստեղծների միու-
թիւնը յենթարկվում էր հակառակ բանակի հարձակում-
ներին։

Բանաստեղծների այս խմբակի գործունեութեան մեջ
նշմարում էյին վոշ միայն հին գրականութեան տրագի-
ցիաների դեմ ուղղված գրական նոր տենդենցներ, այլ նաև
պարզ արտահայտված լիբերալ ձգտումներ։ Յերիտասարդ
գրականութեան գլխավոր հակառակորդներից մեկը՝ Վ. Ն.

Կարազինը քաղաքական ուղղակի մատնութիւններ էր գրում
ներքին գործերի մինիստրին։ Այսպիսի մատնութիւննե-
րից մեկում ասում էր. «Այս խելամիտ յերիտասարդու-
թիւնն ուղում է փայել կառավարութիւնը չհարգելով»։

Պուշկինի առաջին հաջողութիւնները հակառակորդ-
ները վերագրում էյին նրա ընկերների շանքերին։

Այդ խմբակի յերիտասարդ բանաստեղծները հակված
էյին դեպի ընկերական ուղերձն ու ելեգիան։ Համեմատա-
բար փոքր չափի չափածո յերկերը այն հիմնական տեսակն
էյին, վորով նրանք գրում էյին։ Պուշկինը, վոր իր
մանր վոտանավորներում այդ ձևերից չէր հեռանում,
իր գրական խնդիրն այդ չէր համարում։ Նա հետապնդում
էր մեծ յերկ, պոեմ ստեղծելու նպատակը։

Յերկու տարվա ընթացքում — 1818 և 1819 — Պուշ-
կինը տպադրեց միայն վեց վոտանավոր. հենց այդ տարի-
ներին Պուշկինն ուժեղ թափով գրում էր «Ռուսլանն
ու Լյուդմիլա»-ն։ Պոեմ ստեղծելու գործում նա հայ-
տաբերեց գրական զգալի ինքնուրույնութիւն։ «Արգա-
մասի» ղեկավարութեան նման գրական ղեկավարութիւն
այդ տարիներին արդեն չկար։ Այդ տարիներին բոլոր
արդամասականներից՝ միայն Ժուկովսկին կարող էր պոե-
զիայում Պուշկինին ուղղութիւն տալ։ Յեւ Պուշկինի այդ շք-
շանի վոտանավորներում մյուսներից ավելի հաճախ Ժուկով-
սկու անունն է հանդիպում։ Բայց Ժուկովսկու բալլադային
ուղղութիւնը Պուշկինին մոտ չէր, վորն աճել էր Ֆրան-
սիական որինակներով, հենու Ժուկովսկու թարգմանական
պոեզիայի գերմանական կերպարանքից։ Միաժամանակ
Պուշկինը ցանկանում էր մոտենալ Կատենինին, վորը
կանգնած էր Ժուկովսկուն հակառակ դիրքերի վրա։ Կա-
տենինի «սլավոնա-ուսական» տենդենցները, վորն այդ
տենդենցները գուգակցել էր յուրահատուկ ումանտիզմի

հետ, մի ուսմանտիզմ, վոր չեր բացատում կլասիցիզմի
խիստ ձևերի առաջ խոնարհվելը, Պուշկինին տանում էյին
այլ ուղիներով, քան ժուկովսկու վոտանավորների «քաղ-
ցըրանուշ» յերագականությունն ու մշուշայնությունը:
1816 թ. Գրիբոյեդովը հանդես յեկավ Գնեդեչի և ժու-
կովսկու դեմ, պաշտպանելով կատենինին և նրա վոճի
յեռանդոտ կուպուությունը: Ավելի ուշ, 1833 թ. Պուշկինը
հայտնեց, վոր ինքը համամիտ է Գրիբոյեդովին: Ըստ
յերևույթին, արդեն 1817—1820 թ. նա այդ հարցում
ժուկովսկու կողմը չեր: -

«Ռուսլանն ու Լուդմիլան» մի վորոշ գրական զըպ-
րոցի պոեմա չէ: Իհարկե, գա յերիտասարդ գրականու-
թյան յերկ է, և ոեակցիոներ-քննադատներն իսկույն
մարտահրավերն գգացին: Բայց կարամզինականները, վորոնց
ըըջանում Պուշկինն աճում եր, նույնպես այդ պոեմը
լիովին իրենցը համարել չեյին կարող:

Պուշկինի անձնական հարաբերությունները նրան կա-
պում էյին բազմաթիվ ըըջանների հետ: Խորթ չեյին նրան
և բարձր աշխարհի սալոնները, մասնավորապես նա իշ-
խանուհի Գոլիցինայի սալոնի յեռանդուն հաճախորդն եր:
Նա հաճախ լինում եր կարամզինի մոտ, վորն իր ըն-
տանեկան և գրական կապերով աշխատում եր ղեկավա-
րել յերիտասարդ Պուշկինին: Պուշկինն իր ժամանակը
հաճախ անց եր կացնում յերիտասարդ սոպուության
ըըջանում: Քեֆերը, թղթախաղը և ամենաբազմազան
բժույթի սլրային հրապուրանքները ծառայությամբ շատ
չժանրաբեռնված Պուշկինի ժամանակ անցկացնելու սո-
վորական ձևն էյին հանդիսանում: Մայրաքաղաքի այդ
ուրախ կյանքն ընդհատվում եր միայն հիվանդություն-
ներով, մինչև վոր կտրվեց հանկարծակի հարավ արսոր-
վելով: Այդպիսի ապրելակերպը նրա համար բազմաթիվ
բուպեյական բարեկամներ ստեղծեց, վորոնց ըըջանում նա
մոռանում եր իր հին լիցեյական ընկերներին:

Նա հպարտանում եր իր ոպողիցիոն քաղաքացիական
քանաստեղծի դրությամբ: Նրա միքանի արտաուոց վար-
մունքներն ուշադրություն էյին գրավում հենց իրենց
հախորթալից բնույթով: Այսպես, որինակ, պատմում են,
վոր Լուվելի ձեռքով ֆրանսիական գահաժառանգ Բերրիե
դքսի սպանվելուց հետո (1820 թ. փետրվարի 13-ին) Պուշ-
կինը թատրոնում ցույց եր տալիս Լուվելի նկարը «Թա-
գավորներին դաս» մակագրությամբ: Այդ արարքները, և,
վոր գլխավորն է, եպիգրամները և «Ազատություն» ողան
իրենց վրա դարձրին կառավարության ուշադրությունը:
Փոթորիկը մոտենում եր, Ալեքսանդր Լվճոեց Պուշկինի
դատաստանը տեսնել և նրան արսորել Սիբիր կամ Սոլովկի:
Նույնիսկ լուր տարածվեց, թե Պուշկինին տարել են գաղա-
նի գրասենյակ և ծեծել:

Ինչպես պատմում է Ֆեդոթ Գլինկան, վոր այն ժա-
մանակ Պետերբուրգի գեներալ-գուբերնատոր Միլորադովիչի
համհարզն եր, Միլորադովիչը կանչել եր Պուշկինին, և նա
իր սեփական ձեռքով գրել եր իր բոլոր քաղաքական վո-
տանավորները: Այստեղ վորոշ համարձակություն հայտա-
բերելով՝ վորը նրա համար ապահովեց Միլորադովիչի
պաշտպանությունը, Պուշկինն ըստ յերևույթին բոլորովին
այլ տրամադրությամբ յեկավ Կարամզինի մոտ, վորից
չեր թագցնում իր վախը իր ապագալի համար: Կարամզինը,
վորին խնդրել էլին Պուշկինի համար միջնորդել (մասնա-
վորապես Չաղաևը, վորն գգուշացրել եր նրան սպառնացող
ազետի մասին), առիթից ոգտվեց Պուշկինի գլխին խրատ
կարդալու, նրանից ուղղվելու խոստում վերցնելու հա-
մար (Պուշկինն այդ խոստացավ յերկու տարով) և վեր-
ջապես համաձայնվեց նրա համար միջնորդել: Կարամզինի,
ժուկովսկու և մյուսների միջնորդության հետևանքով
վորոշվեց Պուշկինին արսորել Յեկատերինոսլավ, հարավային
յերկրամասի կոլոնիատների գլխավոր հոգաբարձու գեներալ

Ինքովի տրամադրութեան տակ: Նրա գրասենյակը գտնու-
վում էր արտաքին գործոց Կոլեգիայի տեսչութեան տակ
և այդպիսով արսորը պաշտօնով տեղափոխելու պատշաճ
ձևն ունեւր: Այդ բոլորը կատարվեց միքանի որվա ըն-
թացքում: Ապրիլի մոտ 20-ին Պուշկինին սպառնացող
աղետը հայտնի դարձավ, իսկ մայիսի 6-ին Պուշկինն ար-
դեն Պետերբուրգից պիտի մեկնեւր: Նա իր գործերն շտապ
կարգի բերեց: «Ռուսլանն ու Լյուդմիլան» արդեն մամուլի
տակ էր: Պուշկինը վորոշեց իր վտանաւորներէ ժողովա-
ծուի տպագրութեանն սպահովել, վոր ինքն արդեն
պատրաստել էր տպագրութեան համար: Այդ տպագրու-
թեանը նա հանձնարարել էր իր բարեկամ Նիկիտա Վսե-
վոլժսկուն, վորին և հանձնեց ձեռագիրը մասամբ իր խոշոր
թղթախաղի պարտքը մարելու, մասամբ էլ կանխիկ գու-
մարով: Նա հուլիս ունեւր, վոր այդ հրատարակութեանը
շուտով կիրականանա: Բայց Պուշկինի մեկնելուց հետո
ինչ վոր դժվարութեաններ առաջացան և վտանաւորներէ
ժողովածուն լույս չտեսավ:

ՀԱՐԱՎՈՒՄ

(1820—1824)

Պուշկինը նախորդ գեներալ Ռաւսկու հետ, վորի
վորդու հետ մտտիկ բարեկամներ էին, պայմանաւորվելով,
վոր նրան ուկեկցելու յե Ղրիմ կատարելիք ճանապարհոր-
դութեան ժամանակ՝ մեկնեց Յեկատերինսուլավ: Հազիվ էր
Պուշկինը Յեկատերինսուլավ հասել, վոր մրտեց և անկողին
ընկավ: Ռաւսկին նրան հիւանդ գտավ: Ինքովը հեշտու-
թեամբ իրավունք տվեց Ղրիմ մեկնելու: Յեկատերինս-
ուլավից Ռաւսկինը Պուշկինի հետ միասին նախ ուղեւոր-
վեցին Կովկաս: Այս ուղեւորութեանը մասնակցում էին
ինքը գեներալ Նիկոլայ Նիկոլաևիչ Ռաւսկին, 1812 թ.
պատերազմի մասնակիցը, նրա կրտսեր վորդի Նիկոլայը,

Պուշկինի Պետերբուրգի բարեկամը, վոր հետագայում դատի
կանչվեց ղեկաբերիստներէ գործով և տուժեց Կովկասում
ղեկաբերիստներէ հետ ունեցած «դատապարտելի» հարա-
բերութեաններէ համար, և Ռաւսկու յերկու փոքր աղջիկ-
ները՝ փոքրիկ Սոֆիան և ղեռահաս Մարիան: Կովկասյան
ջերբում նրանց սպասում էր Ռաւսկու ավագ վորդին՝
Ալեքսանդրը, վորին Պուշկինը հետագայում բնութագծել է
«Իմոն» վտանաւորում: Կովկասյան ջերմուկներում
(այժմյան Պլատիգորսկում) Պուշկինն անցկացրեց յերկու
ամիս՝ հունիսի 5-ից մինչև ոգոստոսի 5-ը, իսկ հետո
Ռաւսկիններէ հետ միասին ուղեւորվեց Ղրիմ, վորտեղ
Ռաւսկու աղգական Բորոգլինը Բուչուկ-Լամբատում կալ-
վածք ունեւր: Նրանց ճանապարհն ընկնում էր Կուբանով,
հետո Տամանից Կերչ, այդտեղից մինչև Թեոդոսիա և ապա
ժովով: Վորովհետև Բուչուկ-Լամբատում տան կառուցումն
ավարտված չէր, Ռաւսկու ընտանիքը տեղափոխվեց Գուր-
գուլում, Ռիշելյեյի տանը, վորն այդ ժամանակ դատարկ
էր: Ռաւսկիններին այստեղ սպասում էլին գեներալի կինը
և յերկու աղջիկները՝ Յեկատերինան և Յելենան: Գուր-
գուլում (կամ Յուրգուլում, ինչպես ինքն անվանում էր)
Պուշկինն ապրեց 1820 թ. ոգոստոսի 18-ից մինչև սեպ-
տեմբերի 5-ը, այսինքն խաղողի քաղելու ժամանակը:

Ղրիմում անցկացրած յերեք շաբաթը նա նվիրեց
հանգստի և ընթերցանութեան և Գուրգուլում ըստ յերե-
վոյթին վոչ մի տեղ չէր գնում: Նրա ընթերցանութեան
մասին հայտնի յե, վոր նա Ռաւսկու վորդու հետ միասին
գրադվում էր Բալրոնի թարգմանութեամբ: Կողմնակի նկա-
տառումներէ կարելի յե յենթագրել, վոր հենց այստեղ
էլ Պուշկինը կարդացել է Ս. Շենյեյի վտանաւորները, վորի
գրվածքներին, ինչպես և Բայրոնի գրվածքներին, նա
առաջին անգամ ծանոթացավ Պետերբուրգից մեկնելուց
քիչ առաջ:

Ղրիմի հարավային բնութեան միջավայրում, լեռներէ

մեջ, Սև ծովի ափին և՛ Շենյեյի անտիկ ֆրագմենտները,
և՛ Բայրոնի հարավային պոեմները բոլորովին նոր ձևով
պիտի ըմբռնվեյին: Միջերկրականի ծովափի հարավային
պատկերները ներդաշնակում էյին Ղրիմի բնությանը. Բայ-
րոնի հերոսների արևելյան բարբերը համապատասխա-
նում էյին Ղրիմի թաթարների, կամ Կովկասում տեսած
լեռնցիների կենցաղին, վորոնց յեվրոպական քաղաքա-
կրթությունը դեռևս քիչ էր շոշափել: Պուշկինի համար
այդ նոր տպավորությունները նրա ստեղծագործության
համար չէյին կարող առանց հետք թողնելու անցներ:
Հարավի ըմբռնումը զուգակցվում էր Բայրոնի նոր մո-
տիվների կամ անտիկ Հունաստանի հովվերգական պատ-
կերների ըմբռնման հետ, վոր կային Շենյեյի ֆրագ-
մենտներում, վորը կարողացավ առանց XV^{III} դարի
Ֆրանսիական պոեզիայի պալատական սեթևեթության նոր
ձևով մարմնավորել անտիկ թեմաներն իր վոտանավոր-
ներում: Ղրիմին նվիրած լիբիկ բանաստեղծությունները
ցիկլը արտացոլեց Շենյեյի ազդեցությունը. Պուշկինի հեր-
թական պոեմները նրա ստեղծագործության մեջ նոր
ըջան բացին — բայրոնիզմի ըջան:

Հետագայում, «Ռնեգինի ձամբորդությունների» անե-
րում, իր ստեղծագործության ուսմանտիկ ըջանը բնորո-
շելով Պուշկինն այն սերտորեն կապում է հարավում
անցկացրած կյանքի ու հարավային թեմաների հետ, մինչ-
դեռ ռեալիստական մոտիվները դասում է ուսական գյու-
ղում վարած կյանքի ըջանին:

Այս աները, վորպես իր տեսակի գրական մանիֆեստ,
Պուշկինը տպագրեց 1830 թ. «Լիտերատուրնայա դագե-
տա»-յի առաջին համարում՝ հետեյալ խմբագրությամբ.

Ինչ զգացմունքներ իմ մեջ կային՝
չիմա չկան, անցան ի գուր,
կամ փոխվեցին: Անցած է հին,
Հանգստացելու դու իմ հուզմունք:
Թվում էր ինձ այն ժամանակ,

Վեր պետք է մեզ և անպատ,
Ծովի ազմուկ, բարձրավանդակ,
Յեվ մի ազլեկ վե՛ն ու հպարտ:
Յեվ անանուն խոր տանջանքներ,
Ուրիշ ուրեք և յերազներ.
Բայց փոխվեցիք զուր իմ գարնան
Յերազանքներ ա՛մբարտավան:
Պոետական իմ գավաթին,
Ձուր խառնեցի բավականին:

Կուգեմ տեսնել այլ պատկերներ.
— Մի սարալանջ ալաղազատ,
Նրճիթի մոտ գույզ արտոներ,
Մուսքի դոնակ, մի ցանկապատ,
Իսկ յերկնքում գորշ ամպիկներ,
Կալի դիմաց հարզի կույտեր,
Լորենիներ, սովերում լճակ,
Ուր բաղերն են լողում արազ:
Բալալայկա — քեզ եմ սիրում,
Դոփազարն եմ հաճախ գիտում,
Յերբ գինետան մոտ են պարում:
Իդեալս ե՛ տնարար կին,
Ցանկությունս է հանգստանալ,
Կաղամբապուր միշտ ունենալ.
Անձրևային խոնավ մի օր
Անցա, մոտ անանարակ...
Թ՛ն, պրողայիկ մտքի ցնորք,
Ցլամանդական զպրօցի աղբ...
Այսպե՛ս էյի արդյոք առաջ,
Պատասխանի՛ր, Բախչիսարայ,
Միթե այդպես մտքեր իմ մեջ
Շաարվանի ձայնը ծնեց,
Յերբ յես կանգնած լուս քո դիմաց,
Յերազեցի Ձարեմային...

Իր հանգիստը հարավում նա անցկացրեց Ռուսակու-
հեա քաղաքական նորություններ քննելով, դեպի վորոնք
Պուշկինը՝ քաղաքական աքսորյալ, պետք է առանձին ուշա-
գրությամբ վերաբերվեր: 1819 թ. վերջը և 1820 թ.
սկիզբը Արևմուտքում աչքի ընկան հեղափոխական
խմորումով, և համարյա թե Պուշկինի աքսորն էլ թելա-
զրրվում էր Ռուսաստանում քաղաքական հուզմունքը

կանխելու կառավարութեան ցանկութեամբ: 1819 թ. գեր-
մանիայի պատրիոտ Չանդար սպանեց ուսուցիչ կառավարու-
թեան գործակալ գրող Կոցերուին. 1820 թ. հունվարին
Իսպանիայում տեղի ունեցավ զինվորական ապստամբու-
թյուն, վորը մարտ ամսին կատարյալ հաղթանակ տարավ,
յերբ իսպանական թագավորն ստիպված յեղավ յերզվել
լիբերալ սահմանադրութեանը: Փետրվարին սպանվեց Բերրիի
գուքսը, իսկ հունիսին Փարիզում տեղի ունեցան հուզումներ
և մեկը մյուսի յետեից դավադրություններ ելին բացվում:

Հեղափոխականների հաղթանակն Իսպանիայում և
Իտալիայում հույսեր եր տալիս, վոր այս անգամ ռեակցիոն
ուժերը կպարտվեն: Քաղաքական ազատութեան մո-
տիվները Պուշկինի համար առաջնակարգ նշանակութուն
ունեցին, ինչպես վոր այդ մասին նա հայտարարեց իր
«Կովկասյան գերի» պոեմում, վորի հերոսը վորոշ չափով
արասցորում եր իր՝ Պուշկինի արամադրությունները: Բայց
նոր ազատութեան զգրեցութեան տակ քաղաքական
ազատութեան ֆորմուլան այլևս այն չեր: Նա վերջնա-
կանապես նոր բովանդակութուն ստացավ ավելի ուշ, յերբ
Պուշկինը Քիշինեում և Կամենկայում ընկավ հարավի գաղտ-
նի ընկերութեան քաղաքական ծրագրով համախմբված
մարդկանց շրջանը:

Գուրգուֆում հանգստանալուց հետո Գեներալ Ռաև-
սկին իր վորդի Նիկոլայի և Պուշկինի ուղեկցութեամբ ձիով
մեկնեց Սիմֆերոպոլ: Լեոնային կաճաններով նրանք ան-
ցան հարավային ափը, վորն այն ժամանակ ընդհանուր
վոշինչ չունեց այժմյան պուրակ Ղրիմի հետ: Ծանապարհին
նրանք Բալակլավայի մոտ այցելեցին Գեորգևսկի վանքը
(վոր Չաստրակին նոր ուղերձ գրելու թեմա ծառայեց, վորի
մեջ Պուշկինը հիշեց նաև իր նախկին քաղաքական ուղերձն
առ նա) և հետո Բախչիսարայ, վորով Պուշկինն անցավ
հիվանդ վիճակում: Սիմֆերոպոլում Պուշկինը բաժանվեց
Ռաևսկու ընտանիքից և ուղեվորվեց իր ծառայութեան

վայրը: Այդ ժամանակվա ընթացքում Ինգոլի գրասենյակը
Յեկատերինսուլավից տեղափոխվել եր Քիշինև: Պուշկինը
մեկնեց Պերեկոպի, Խերսոնի, Ուեսսայի վրայով և, վոչ մի
տեղ կանգ չառնելով, սեպտեմբերի 21-ին հասավ Քիշինև:

Քիշինեում Պուշկինն ապրեց համարյա յերեք տարի,
մինչև 1823 թ. հուլիսը: Ծառայութեան մեջ Ինգոլը նրան
շատ չեր նեղում: Այդ մասին կարելի յե դատել թեկուզ
Պուշկինի յերկարատև բացակայությունների հիման վրա.
1820 թ. դեկտեմբերին նա մեկնեց Կամենկա, Իավիդովի՝
Ռաևսկիների ազգականի կողմածքը և այնտեղ մնաց մինչև
1821 թ. մարտ ամիսը, կարողանալով այդ ժամանակվա
ընթացքում լինել Կիևում, հետո 1821 թ. մեկնեց Ուեսսա
(մալխին), Ալեկերման և Իզմայիլ (գեկտեմբերին), 1822 թ.
նոյեմբերին նորից Կամենկա և 1823 թ. հունիսին Ուեսսա:
Վերջին ճանապարհորդությունը կապված եր նրան Ուես-
սա փոխադրելու մտադրութեան հետ: Ժամանակակիցների
հիշողությունները վկայում են, վոր Ինգոլը գեպի Պուշ-
կինը նահապետական վերաբերմունք ուներ: Պուշկինի
բազմաթիվ զանցանքները, նրա գծաություններն ու մե-
նամարտները վերջանում ելին կամ Ինգոլի հորդորանք-
ներով կամ տնային բանտարկութեամբ, վորի ժամանակ
Ինգոլը գալիս եր զրուցելու մեղապարտ Պուշկինի հետ:

Պուշկինի գալու ժամանակ Քիշինևը, վոր Ռուսաս-
տանին միացված եր 1812 թ., պահպանել եր մուլդավական
քաղաքի իր արևելյան բնույթը, իր տեղական մուլդավա-
կան արիստոկրատիայով և խառն բնակչութեամբ, վորի մեջ
կային շատ հույներ, թյուրքեր, հրեաներ և ուրիշները: Ռուս
զինվորական և քաղաքացիական աստիճանավորների մեջ
կային Պուշկինի հին ծանոթները, վորոնց մի շոցով նա
շուտով իր համար կազմեց ծանոթները մի լայն շրջան:
Նրանցից առաջին հերթին պետք ե հիշատակել Միխայիլ
Ուրլովին, վոր Պուշկինին ծանոթ եր «Արդամասից», գաղտնի
ընկերութեան անդամին, վոր Քիշինևյան զվարթի յի հրա-

մանատարն երևի և վորն այդտեղ լիբերալ կարգեր եր մտցնում, մասնավորնապես զինվորների մեջ մտցնում եր փոխադարձ ուսուցման դպրոցներ: Այդ դպրոցները ծառայում էին գաղտնի ընկերության քաղաքական պրոպագանդայի գործին: Որլովը շուտով ամուսնացավ Ն. Ռաևսկու գասեր Յեկատերինայի հետ, վոր Պուշկինին ավելի ևս մոտեցրեց նրա տան հետ: Քաղաքական վիճաբանությունների համար Որլովի մոտ հավաքվում էին գաղտնի ընկերության անդամները, սպաները, վորոնցից Պուշկինի վրա առանձնապես ազդում էին ռազիկալ դյուրաբորբոք Ոխտանիկովը, վորը հանրապետական գաղափարներ եր քարոզում, և մայոր Վլադիմիր Ռաևսկին, գաղտնի ընկերության ամենաակնազարկող ղեկավարներից մեկը, ձերբակալված 1822 թ. փետրվարին, զինվորների մեջ հեղափոխական պրոպագանդա գեղու մեղադրանքով: Վ. Ռաևսկին ինքն ել բանաստեղծ եր, և վորպես լայն կրթության տեր և հեղինակավոր անձնավորություն, վորոշ չափով ղեկավարում եր Պուշկինի պարապմունքները և նրան գրական խորհուրդներ եր տալիս: Պուշկինն այդ խորհուրդները լսում եր: Պուշկինն այստեղ հանդիպում եր նաև հունական ապստամբության գործիչներին, մասնավորապես Իպսիլանտի յեղբայրներին:

Այդ ժամանակին ե վերաբերում գաղտնի ընկերությունների վերակազմակերպումը: 1821 թ հունվարին Մոսկվայում տեղի ունեցավ Բարորության Միության անդամների համագումարը: Այդ համագումարում միությունը հայտարարվեց փակ: Այնուամենայնիվ տեղերը վերադարձած անդամներն անմիջապես ձեռնամուխ յեղան նոր գաղտնի ընկերություններ կազմակերպելուն՝ ավելի խիստ կոնսպիրացիայի պայմաններում: Հարավում կազմակերպվեց մի գաղտնի ընկերություն, վոր կազմված եր հարավային նահանգներում տեղավորված յերկրորդ բանակի սպաներից. դրա մեջ առաջին դերը խաղում եր

Պեստելը: Պեստերբուրգում Նիկիտա Մուրավյովի գլխավորությամբ կազմակերպվեց Հյուսիսային ընկերությունը, վորի մեջ ղեկավար դերը հետագայում անցավ Կ. Ռրլեյեվին: Հարավային ընկերության անդամների մեջ իշխում ելին ռազիկալ տրամադրությունները. վորոշակի դարձավ նրա ծրագրի հանրապետական ու հեղափոխական բնույթը:

Կամենկա կատարած իր ուղեվորությունների ժամանակ Պուշկինը լինում եր Հարավային գաղտնի ընկերության գործիչների շրջանում: Կամենկայի տեր Վաս. Իսովի գովը գաղտնի ընկերության ամենաակտիվ ղեկավարներից մեկն եր և, ընտանեկան հանդեսները տոնելու պատրվակի տակ, նրա մոտ Կամենկայում խորհրդակցության էլին հավաքվում «հարավցիները»: Այդպիսի հավաքույթներից մեկի ժամանակ Պուշկինը Կամենկա հյուր եր յեկել: Այսպիսով հարավում Պուշկինը մոտիկից ծանոթացավ ղեկարգիսանների հետ. նա ի միջի այլոց ծանոթ եր նաև Պեստելի հետ, վորին հանդիպել եր Քիշինիում 1821 թ. գարնանը:

Իեկաբրիստ Իվան Յակուշկինը, վոր Պուշկինին գիտեր ղեռնա Պեստերբուրգից և Կամենկայում հանդիպել եր նրան, պատմում ե մի եպիգոդ Պուշկինի այդ անգամվա Կամենկա այցելությունից: Այեքսանդր Ռաևսկուն, վոր կատկածում եր Կամենկայի հավաքույթների քաղաքական իմաստը, մոլորեցնելու համար մի անգամ գաղտնի ընկերության անդամները կազմակերպեցին զիսպուտ՝ Ռուսաստանում քաղաքական գաղտնի ընկերություն կազմակերպելու հնարավորության մասին, բայց ի վերջո ամբողջ խոսակցությունը կասակ հայտարարեցին: «Պուշկինը շատ եր հուզված. նա դրանից առաջ համոզվել եր, վոր գաղտնի ընկերությունը կամ գոյություն ունի, կամ հենց այստեղ ել իր սկիզբը կառնի, և նա կլինի նրա անդամը. բայց յերբ տեսավ, վոր այդ բոլորից միայն կատակ ստացվեց, նա վեր կացավ կարմրած ու ասաց արցունքն աչքերին. «Յես

յերբեք այնպես դժբախտ չեմ յեղել, ինչպես հիմա. յես արգեն իմ կյանքն ազնվացած եյի տեսնում և իմ առաջ մի բարձր նպատակ, և այդ բոլորը միայն մի չար կատակ եր»: Այդ բուպեյին նա իսկապես վոր գեղեցիկ եր: 1827 թվին յերբ նա յեկավ Ա. Գ. Մուրավյովային հրաժեշտ տալու, վորը գնում եր Սիբիր իր ամուսնու մոտ, ասաց, «յես շատ լավ հասկանում եմ, թե ինչու այդ պարոնները չեյին ուզում ինձ իրենց ընկերության մեջ ընդունել. յես այդ պատվին արժանի չեյի»:

Պուշկինի Քիշինեում յեղած ժամանակ քաղաքական դրությունը լարված եր. 1820 թ. ոգոստոսին Փարիզում բացվեց զինվորական դավադրություն, հենց նույն ոգոստոսին ել Պորտուգալիայում տեղի ունեցան անկարգություններ: Հոկտեմբերին Տրոպպաու քաղաքում Ալեքսանդր I մասնակցութեամբ սկսվեց կոնգրեսը, և այնտեղ յեվրոպական սեփական յուրերը միացվեցին, վորի առաջին քայլերն եյին կարբոնարների շարժման ճնշումն Իտալիայում և հին կարգերի վերականգնումը: Բայց հենց այդ ժամանակ ել Պետերբուրգում տեղի ունեցավ Սեմյոնովսկի գնդի խռովությունը. 1821 թ. փետրվարին Մուրավյովայում սկսվեց ապստամբություն Ալեքսանդր Իպսիլանտու առաջնորդութեամբ և միաժամանակ սկսվեց հունական գաղտնի ընկերությունների (եթերիաների) գործունեյությունը Հունաստանի հարավում (Մորեյայում): Ռեակցիան հաղթանակեց: Իտալական շարժման ճնշելուն հաջորդեց իսպանական լիբերալների ճնշումը Փրանսիական գործերի միջոցով: Հեղափոխական շարժման առաջնորդ Ռիեգոն գլխատվեց:

Ռեակցիոն կառավարությունների դեմ հեղափոխական խմբավորումների մղած պայքարին Պուշկինը հեռուում եր խիստ լարվածութեամբ և Քիշինեում անցկացրած տարիները

նրա համար քաղաքական աճման տարիներ եյին: Այնպիսի անձանց ազդեցության տակ, ինչպիսին Վլ. Ռակսկին եր, նա վորոշեց լրացնել իր լիցեյական կրթության պակասը և ձեռնարկեց լուրջ ընթերցանության, վորին չեր խանգարում Քիշինեում նրա անցկացրած արկածներով հարուստ, ընդհանուր առմամբ անկանոն կյանքը:

Չաադայեվին գրած նամակում Պուշկինը գրում եր-

Յես տերն եմ իմ որվա: Սիրում եմ կարգ կյանքում,
Յերկար մտածումներն տիրելն եմ սովորում,
Ազատության գրկում ուզում եմ վարձատրել
Այն, ինչ փոթորկահույզ կյանքում եմ յես կորցրել,
Լուսավորության մեջ, դարեն միշտ հավասար...

Հարավում Պուշկինի կարգացած գրվածքների մեջ աչքի ընկնող տեղ են գրավում Ռուսսոյի յերկերը: Ռուսսոյի գաղափարները յեվրոպական քաղաքակրթության և յեվրոպական «լուսավորության» արատավորության մասին ասում եյին դեպի սոցիալական վերանորոգության անհրաժեշտությունը: Պուշկինն այդ գաղափարներն անմիջականորեն արտահայտել ե «Մովին» բանաստեղծության՝ իր ժամանակին գրաքննության թույլ չտված սողերում. խոսելով Բայրոնի մասին՝ Պուշկինը գրել ե.

Այսարճն գատարկ... Հիմա դեպ ուր—
Ինձ ովկիանոս զուրս կբերես,
Նույնն ե բախար մեր ամենուր.
Ուր բարեք ե—այնտեղ են, կան,
Լուսավորություն, կամ մի տիրան:

Այդ գաղափարներն ընդունել եյին Փրանսիական հեղափոխականների ձախ թիւը՝ յակոբյանները և բնականաբար մոտ եյին Հարավային գաղտնի ընկերության ռադիկալ գործիչներին, վորոնք հեռուում եյին հանրապետական համոզմունքների: Պատմական իրադրությունը Պուշկինին մղում եր այդ ուղիով: Բուրբոնների վերականգնումից հետո Յեվրոպայում հաստատված սահմանադրական կարգը 20-ական թվականների հեղափոխական շար-

ժուճները հանդեպ յերևան բերեց իր անկայունությունը: «Որինականության» գաղափարը խախտվեց: Սոցիալական հակասություններն սկսեցին գրավել Պուշկինի ուշադրությունը, վորը դեռ ևս իր համար չէր պարզել դրանց պատմական պատճառները և այդ պրոբլեմները լուծումը վորոնում իր Բայրոնի բանաստեղծական ուսստիգմի վոգով. ըստ վորում Բայրոնի որինակը, վորն ուղևորվել էր Հունաստան տաճրիկների դեմ վարած հույների պատերազմին մասնակցելու համար, անմիջականորեն ազդեց Պուշկինի վրա: Նա յերազում էր Թյուրքիայի դեմ մղվող պատերազմին մասնակցելու, Ռուսաստանից հույների մոտ փախչելու մասին: Ռուսաստանի կողմից արևմտա-յեվրոպական քաղաքականության ռեակցիոն միջամտությանը, վորը բնորոշում էր Սրբազան զաշինքի գործունեյությունը, զեկաբրիտաները հակադրում էին Ռուսաստանի շարժումը դեպի արևելք: Պետտելի «Ռուսակայա պրավդայի» մեջ, վորը Հարավային բնկերության քաղաքական ծրագրի շարադրանքն էր հանդիսանում, այն հոդերից, վորոնք «անհրաժեշտաբար հարկավոր է միացնել Ռուսաստանին», առաջին հերթին անվանված են. «1) Սոլդավիան և 2) կովկասյան լեռնային ժողովուրդների այն հոդերը, վորոնք Ռուսաստանի իշխանության տակ չեն և գտնվում են Պարսկաստանի և Թյուրքիայի սահմաններից դեպի հյուսիս, այդ թվում նաև կովկասի արևմտյան ծովափնյա մասը, վոր այժմս Թուրքիային է պատկանում»: Այդ հոդերի նվաճման անհրաժեշտությունը Պետտելն այսպես է հիմնավորում. «Լեռնային ժողովուրդներին խաղաղ և հանգիստ հարեաններ դարձնելու բոլոր փորձերը պարզ և անվիճելիորեն ցույց են տվել արդեն, վոր այդ նպատակին հասնել հնարավոր չէ: Այս ժողովուրդներն ամենափոքր առիթն անգամ բաց չեն թողնում Ռուսաստանին ամեն տեսակի վնաս հասցնելու համար, և նրանց խաղաղացնելու համար մնում է միայն նրանց լիովին նվաճելու

միջոցը»: Պայքարը Թյուրքիայի դեմ կովկասում գերակշռություն ձեռք բերելու համար և Ռուսաստանի կովկասյան նվաճողական գաղութացման քաղաքականությունը ժողովրդականացած էր ազնվական ձախ գաղտնի ընկերությունների մեջ: Բնական է, վոր Պուշկինն արձագանքեց դրան իր «կովկասյան գերիով», նրա հայրենասիրական վերջաբանով հանդերձ (համեմատել «Ռուսլան և Լյուդմիլայի» վերջաբանի հետ), իսկ Հունաստանի ազատագրության համար պատերազմի հնարավորությանը նա պատասխանեց «Պատերազմ» վոտանավորով:

Ռուսսոյի գաղափարների բայրոնական իմաստավորումը, յեվրոպական արատավոր քաղաքակրթության հակադրումը նախնադարյան կենցաղակերպին, արևելյան ժողովուրդների նահապետական կենցաղին՝ Պուշկինն մղում էին բանաստեղծորեն մարմնացնելու իր հարավային տպավորությունները: «Բախչիսարայի շատրվանը» և «Գընչուները» (գրված մի քիչ ավելի ուշ) արտացոլեցին այդ տրամադրությունները: Պատմական հարաբերություններից դուրս յեվրոպական սոցիալական հակասությունների իմաստավորումը ուժեղ անհատի բայրոնական պաշտամունքի կապակցությամբ, զրգում էր կենտրոնացնել ուշադրությունը անհատի և հասարակության հարաբերությունների հարցի վրա: Անհատի և հասարակության այդ հակադրումը հանդիսանում է հարավային պոեմների պրոբլեմը, վոր առանձին պարզությամբ արտահայտված է «Գնչուներում»: Այդ կապակցությամբ ստիպված ենք գնահատելու նաև Պուշկինի պոեմների լրբիզմի գերակշռող տոնը: Հիասթափված բանաստեղծի, այդ վերացական անհատի գաղափարի կրողի պատկերը, վոր հակադրվում է նրա կողմից մերժած հասարակությանը, հենց հեղինակի լրբիքական զեղումների ձևով ներս է խուժում պոեմների մեջ: Գերու և Ալեքոյի թափանցիկ կեղծանունների տակ հեղինակը դառնում է այդ պոեմների հերոսը: Հուսահատվածության

տոնը առաջ է գալիս վոչ միայն Բայրոնի մոռյլ հերոս-
ների անդրադարձված ազդեցութեամբ, այլև քաղաքա-
կան աքսորի պայմաններում Ռուսաստանում և Յեվրոպա-
յում ռեակցիայի հաղթանակը դիտած ազատասեր բա-
նաստեղծի բնական սկեպտիցիզմով: Բնական է, վոր Պուշ-
կինի հերոսների սկեպտիցիզմը դուրս եր գալիս զուտ քա-
ղաքական անբավականութեան և հիասթափութեան սահ-
նաններից և շոշափում եր համամարդկային, «համաշխար-
հային» պրորբլեմներ, բայց, ինչպես հեշտութեամբ կարելի
յե համոզվել Պուշկինի պոեմների հերթական հերոսով,
դեռ ևս հարավում հղացած վեպի առաջին գլխի հերոս
Յեվզենի Ռնեզինով, այդ համաշխարհային պրորբլեմները
Պուշկինի համար որդանական չեյին: Ռնեզինում մենք ար-
դեն չենք տեսնում «տիտանական» պրորբլեմների հետքն
անգամ, վորոնք սակայն խիստ չափավոր ձևով (20-ական
թվականների ռոմանտիկական նորմերի տեսակետից) կա-
լին նաև Պուշկինի հարավային պոեմների հերոսների մոտ:

Սովորութեանը դեպի հեղինակ-հերոսը, դեպի ուժե-
ղացրած լիբիզմը, դեպի անհատի պրորբլեմի դրվածքը Պուշ-
կինի յերկերը հասցրին մի առանձին ինքնակենսագրակա-
նութեան: Պուշկինի լիբիկան և պոեմները վոչ միայն հե-
ղինակի ներքին կյանքն են արտացոլում, այլև, հեղինա-
կի անձնական կյանքի վերաբերյալ ակնարկներ մտցնելով,
շեշտում են այդ ինքնակենսագրականութեանը: Պուշկինի
կյանքը դառնում է մեկնաբանութեան նրա յերկերի հա-
մար: Բնական է, վոր այդ տարիներին Պուշկինը մի փոքր
զարդարվում է լիբիզական բանաստեղծի զգեստով, մշա-
կելով գծեր (մանավանդ լիբիկական խոստովանանքներում,
ավելի պակաս կոնկրետ վարմունքում), վորոնք հատուկ
են յերազող «տառապողի», ուժեղ կրքերի տեր աքսորա-
կանի: Սրանից է բղխում իր սրտի հրապուրանքները մի
առանձին գրական ընդգծումը, յուրահատուկ մի գրական
խաղ կիսաակնարկներով, կիսաբացվող գաղտնիքներով հան-

դերձ և այլն: Այսպես, Պուշկինի վաղ ստեղծագործութեան
էյտմոտիվը կազմում է «ծածուկ սիրո» թեման, վոր Պուշ-
կինն ապրեց Ղրիմում: Մինչև որս այդ սիրո կենսագրա-
կան հիմքերը պարզված չեն. սովորական վերսիան, թե
դա Մարիա Ռակսկայան եր (վոր հետագայում ամուսնա-
ցավ դեկաբրիստ Վոլոնսկու հետ և դեկտեմբերյան դեպ-
քերից հետո ամուսնու հետևից գնաց Միբիր), դեմ է առնում
մի շարք անբացատրելի հակասութեաններ. վոչ պակաս
հակասութեաններ են առաջ գալիս նաև յինթադրելիս, թե
այդ սիրո առարկան յեղել են Ռակսկու մյուս աղջիկնե-
րից վորեւ մեկը՝ Յեկատարինան կամ Յելենան:

Ասենք, այդ տարիներին Պուշկինը շատ եր հրապուր-
վում: Քիշինսկում, բացի այլ հրապուրումներից, նա հրա-
պուրվեց հույն կալիպսե Պոլիսթրոնիով, վորն իբր թե յե-
յել եր Բայրոնի սիրուհին:

Պուշկինի մյուս հարավային պոեմներից մի փոքր
առանձնակի տեղ է դրավում նրա «Лаврианада»-ն, գրը-
ված 1821 թ. հարկադրված ծոմապահութեան շրջանում:
Յեթե Պուշկինն զգացել է Ռուսոյի սոցիալ-քաղաքական
հայացքների ազդեցութեանը, ապա նրա կրոնական սիս-
տեմը Պուշկինի համար բոլորովին ոտար մնաց: Այս խընդ-
րում նա հավատարիմ մնաց Վոլտերին, նրա հեղնական
վերաբերմունքով դեպի կրոնի ծիսական և առասպելական
ձևերը և բոլորովին չեր հետաքրքրվում հարցի փիլիսոփա-
յական կողմով (այդ պատճառով էլ կրոնական հիմնական
հարցերը լուծելու խնդրում իրեն բավականաչափ ուժեղ
չեր համարում, իր խառնվածքով աճելի շատ հակվելով
դեպի հետևողական աթեիզմը): Դեկավար շրջաններում
միստիցիզմի տիրապետութեան տարիներին Պուշկինը, բնա-
կանորեն, կանգ առավ քրիստոնեցութեան հիմնական դոգ-
մաները պարոդիայի յինթարկելու վրա:

Բացի քիշինսկյան շրջանի ավարտված գրվածքներից,
մեզ հասել են հատվածներ և պլաններ, վորոնք վկայում

են Պուշկինի մեջ պատմական հետաքրքրութիւններ առաջանալու մասին: Այդպէս են Վաղիմի, նրա սիրած հերոսի լիբերալ գաղափարներ կրողի՝ մասին պոեմի և վոդբերգութեան հատվածները. այդպէս են նաև Վաղիմիի, Մըստիսլավի և մյուսների մասին ֆանտաստիկ պոեմների պլանները: Պատմական այդ հետաքրքրութիւններում արտահայտվեց վոչ միայն Կարամզինի «История государства Российского» աշխատութեան ընթերցման ազդեցութիւնը: Վլ. Ռեանկին, վորն իր գրական համոզմունքներով հարում իր Կատենինին և Գրիբոյեզովին, յերազում եր ստեղծելու ուս պատմական ազգային եզոպեյա, համակված ազատագրական գաղափարներով: Բայց հարավում Պուշկինն այս պլանով ավարտված վոչինչ չստեղծեց:

Պուշկինի քաղաքական տրամադրութիւնն են վկայում Բիշինեվի իր պաշտոնակից Պ. Ի. Գոլգոուկովի որագրի գրանցումները: Որինակ, 1822 թ. ապրիլի 15-ին. «Յերբ սեղան եյինք նստած, Պուշկինը դատողութիւններ եր. անում մեր գարի բարոյականութեան մասին, հետո՞ թե ինչու ուսներն իրենց լեզվից գարչում են, հայրենիքի արժեքը չգիտեն, պախարակում եր հոգևորականութեան տգիտութիւնը, խոսում եր ավյունով»: Հուլիսի 20-ի խոսակցութիւնն ավելի խիստ եր. «Քաղաքացիական աստիճանավորները սրիկաներ են ու գողեր, գեներալները՝ մեծ մասամբ անասուններ, միայն յերկրագործներէ դասակարգն ե հարգելի: Պուշկինն առանձնապէս հարձակվեց ուս ազնվականների վրա: Նրանց բոլորին ել պետք ե կախել, իսկ յեթե դա լինի, ինքը հաճույքով կձգի պարանը»:

Բնականորեն հարց ե ծագում, թե ինչու «հարավցիների» հետ այդպիսի սերտ հարաբերութիւնների մեջ գրանդվելով, Պուշկինն ինքը գաղանի ընկերութեան մեջ չներգրավվեց: Այն, վոր կարճ ժամանակով նա յեղավ Բիշինեի «Ովիդիոս» մաստնական լութայում, իհարկե, նրան քաղա-

քական կազմակերպութիւններին չմտեցրեց: Այդ հարցին միքանի պատասխաններ եյին տրվում. մի վերսիայով դեկարրիտները «խնայում եյին» Պուշկինին, չցանկանալով նրան յենթարկել վտանգի, վոր կապված եր քաղաքական դավադրի վիճակի հետ. ըստ մյուս վերսիայի, ընդհակառակը, նրան չեյին վստահում, վախենալով նրա անզուսպ բնավորութիւնից, վորը կոնսպիրացիայի կանոնների հետ չեն ներդաշնակվում: Բնական ե յենթարկել, վոր այստեղ կոնսպիրացիայի նկատառումներն իրենց դերը խաղում եյին, բայց խոչնդոտը վոչ այնքան Պուշկինի բնավորութիւնն եր հանդիսանում, վորքան աքսորական բանաստեղծի վրա սահմանված վոստիկանական և վարչական հսկողութիւնը: Գաղտնի ընկերութեան անդամների համար գաղտնիք չեր այն, վոր կենտրոնական կառավարութիւնից շարունակ հարցումներ եյին ստացվում Պուշկինի վարքի մասին, այսինքն՝ նրա քաղաքական կապերի մասին: Մասնավորապէս հետաքրքրվում եյին նաև նրա վերաբերմունքով դեպի մաստնականութիւնը: Ինկատի ունենալով, վոր հասարակութեան մեջ Պուշկինը չեր կարող շարքային անդամի դերը գրավել, բնական ե յեզրակացնել, վոր նրան գաղտնի կազմակերպութիւնների մեջ ներգրավելը մեծ ոխակ եր հենց իրենց՝ կազմակերպութիւնների համար և կարող եր «տապալման» պատճառ դառնալ, մանավանդ Վլ. Ռայեվսկու ձերբակալութիւնից հետո (1822 թ. փետրվարի 6-ին), վոր տեղի ունեցավ դիվիզիայի հրամանատար Միխայիլ Որլովի լանկաստերյան սխտեմով ստեղծված զինվորների դպրոցներում նրա կողմից հեղափոխական գաղափարներ քարոզելու պատճառով: Մ. Որլովի և Վլ. Ռայեվսկու գործունեութիւնը գրավեց բանակի հրամանատարութեան ուշադրութիւնը: Գաղտնի գործակալները մատնեցին. «Լանկաստերյան դպրոցում, ասում են, վոր, բացի գրագիտութիւնից, սովորեցնում են իրենց ու խոսում մի ինչ-վոր լուսավորութեան մասին: Զինվորներն

ասում են՝ զիվիզիայի հրամանատարը մեր հայրն է, նա մեզ լուսավորում է: 16-րդ զիվիզիան անվանում են որ- լովական... Պուշկինը հրապարակով, նույնիսկ սրճարան- ներում հայտնում է վոչ միայն ռազմական գերատեսչու- թյանը, այլ նույնիսկ կառավարութանը»:

Յերբ Վլ. Ռայեվսկուն ձերբակալելու կարգադրու- թյունն ստացվեց, Պուշկինը՝ լսելով այդ մասին Ինզովի տանը աեղի ունեցած խոսակցութունը՝ շտապեց նախա- զգուշացնել իր ընկերոջը և այսպես հաջողվեց մի բան թազցնել: Պուշկինի հարաբերութունները Վլ. Ռայեվսկու հետ զբանով չվերջացան: Պուշկինը լուր ստացավ, վոր Վլ. Ռայեվսկին թողթ է գրում իրեն բանտից: Ռայեվ- սկին բանտում գրած «Թուղթ Բիշինեվի բարեկամներին»-ի մեջ զիմում է և Պուշկինին՝ կոչ անելով իր պոեզիան նվիրել քաղաքացիական թեմաների.

Թող այլ պոեա սերը յերգի,
Ուր արյուն է—սեր չի յերգի...

Պուշկինը պատրաստվում էր պատասխանել մի գրու- թյամբ, վորի միայն առաջին տողերն են մեզ հասել.

Իզուր չեր, վոր ի՞նչ գիմեցիք
Բո մութ բանտի խուլ խորքերից...

.....
Յեա, իմ յերգիչ չեմ պարծեցի՜
Լույսայն բանով, վոր հանգերով
Կարող էյի սրտեր հուզել,
Շ. դ արցունքի հետ խաղալով:
Չեմ պարծենում, վոր շատ հաճախ,
Այդ նենդամիա իմ յերգերով,
Ձանել կույր լուս հուզվելով,
Մոռանում եր ամոթ ու վախ:
Յերգիժանքի սյունին գամած,
Պատժում էյի անառակին,
Կամ սպառնալիքն քնարս լարած՝
Մարտափեցնում բռնակալին,
Կամ այն բանով—վողկորված
Ձա՛նել թյամբ փոթորկալի,
Ազատության համար ճնշ լած,
Մարդկանց մեջ եմ դառել հայտնի:

Մի այլ բարձր վարձատրություն,
Վիճակված եր ինձ շահաբեր,
Վեհ մտքերի ուրախություն,
Ունայն քնի յերազներ:

Այստեղ վերջանում է բանաստեղծության սևազրու- թյունը: Ըստ յերեույթին հետագա տողերը նկարագրում էյին բանաստեղծի բարձր նշանակումը՝ համաձայն Ռա- յեվսկու գիմումին, վորը (Ռայեվսկին) առաջարկում էր գովերգել Ռուսաստանի հինավուրց պատմությունը, յերբ դեռ ցարերը չեյին վոչնչացրել ժողովրդի ազատությունը: Հեղափոխական կազմակերպությունների գործիչների հետ աւնեցած կապերն էլ վորոշեցին այդ տարիների նրա համոզումները:

1823 թ. հունիսին Պուշկինը, կորցնելով Պետերբուրգ վերադառնալու ամեն մի հույս, բարեկամների հոգացո- ղությունների շնորհիվ տեղափոխվեց յեվրոպական Ուկես- սա՝ ծառայության:

Հարավում յեղած տարիներին Պուշկինը Պետերբուր- գի իր բարեկամների հետ կապերը չեր կտրում: Նա ուժեղ թափով զբաղան նամակագրության մեջ եր, վորի մեջ գոր- ծարար թեմաներին հաջորդում էյին քննադատական կար- ծիքները: Այդ ժամանակվա գրագրությունից մեզ հասել են նրա նամակները, ուղղված Գնեդիչին, Ալեքսանդր Տուր- գենևին, Վյազևմսկուն, Բեստուժևին, Դելվիգին և յեղբորը, լի կենդանի հետաքրքրությամբ դեպի պետերբուրգյան գրա- կան նորությունները: Ըստ յերեույթին նա յեռանդուն գրա- գրության մեջ եր նաև Բարատինսկու հետ, վորից վոչ մի նամակ չի մնացել:

Պուշկինի նոր պեան եր կոմս Վորոնցովը, վոր 1823 թ. հոկայական լիազորություններով նշանակվել էր Նովորո- սիյսկի գեներալ-նահանգապետ: Անգլոման, իր սովորու- թյուններով և զիրքով վելմոժա, Վորոնցովն իր վերաբեր- մունքին դեպի աքսորյալ Պուշկինը տվեց խիստ պաշտոնա-

կան բնույթ, վոր վոչնչով չեր հիշեցնում ինզովի վերաբերմունքը: Վորոնցովը պահանջում եր ակնածանք: Պուշկինի բանաստեղծական տաղանդը նա չեր գնահատում. դա փոքրիկ ընդհարումների առիթ տվեց: Պուշկինը գրում եր եպիգրամներ, վորոնք հասնում եյին Վորոնցովի ձեռքը և նրան կատաղեցնում: Պետերբուրգի իշխանավորներին գրած նամակներում Վորոնցովն իր անբավականութունն եր հայտնում Պուշկինի իր մոտ լինելու առթիվ, և խղումն անխուսափելի յեր:

Պուշկինի յեղած ժամանակ Ողեսսան հացի խոշոր նավահանգիստ եր, վորն առանձնապես զարգացավ 1819 թ. այստեղ պորտո-ֆրանկո (արտասահմանի հետ անմաքս առևտրի իրավունք) հաստատելուց հետո: Վորպես քողաք նա զեռ ևս բարեկարգված չեր, բայց մեծ քանակությամբ տարազգի վաճառականները, վոր ապրում եյին այստեղ, նրան յեվրոպական բնույթ եյին տալիս: Նրա բնակչութունը խայտաբղետ եր. վաճառականների մեջ կային շատ հույներ, իտալացիներ, ռուսինացիներ: Ողեսսայում կար թատրոն՝ իտալական ոպերա, ուր Պուշկինը յեռանդով հաճախում եր: Ողեսսայի կյանքի պատկերը Պուշկինը գծել ե «Յեվգենի Ռենգինի» մեջ (Ռենգինի ձանապարհորդութունը): Պուշկինն այստեղ ընդարձակ ծանոթութուններ հաստատեց. Ողեսսայում ապրում եյին նաև Պուշկինի վաղեմի ծանոթները, որինակ՝ արգամասական Վիգելը, Վաս. Տումանսկին, Ալեքսանդր Ռակսկին: 1824 թ. այստեղ յեկավ Վլադեմակայան, Պետր Անդրեյեվիչի կինը: Թատրոնը, ճաշկերույթներն Ուոոնի ռեստորանում, թղթախաղը Պուշկինի համար նոր ծանոթներ եյին ստեղծում: Պուշկինն իր պաշտոնին վերաբերվում եր առաջվա պես, այսինքն՝ ծառայության ամեն մի հանձնարարութունից պարզապես իրուսափում եր: Նրա գլխավոր գործը «Ռենգինը» գրելն եր: Ողեսսայում ապրած ժամանակին են վերաբերում Պուշկինի հերթական սիրահրապուրանքները, վոր արտահայտվեց

նրա լիրիկայում: Ողեսսայի հասարակութունը բաժանվում եր յերկու սալոնների մեջ. բարձր աշխարհը, այսինքն՝ աստիճանավորական շրջանների ներկայացուցիչները հավաքվում եյին Վորոնցովների տանը, վորտեղ բարձր աշխարհիկ յերիտասարդութունը հափշտակվում եր սալոնի տիրուհի, կոմսուհի Յելիզավետա Քսավերևնա Վորոնցովայով: Ողեսսայի հասարակության մյուս շրջանը հավաքվում եր Ամալիա Ռիգնիչի, իտալուհու, խոշոր վաճառականի կնոջ սալոնում: Պուշկինը հափշտակվում եր և՛ մեկով, և՛ մյուսով: Ամալիա Ռիգնիչի հետ նա կարող եր ծանոթացած լինել 1823 թ. զարնանը, յերբ նա իր ամուսնու հետ միասին յեկավ Ողեսսա: Այստեղ նա մնաց մինչև 1824 թ. մայիսը, յերբ մեկնեց Իտալիա, վորտեղ և շուտով վախճանվեց: Ըստ յերևույթին նրան ե ձոնված «Простишь ли мне ревнивые мечты» («Սրգյոք կներես յերագներս իմ խանդոտ») վոտանավորը: Նրա մահն առիթ տվեց գրելու «Под небом голубым страны своей родной» («Իր հարեհիքի յերկնագույն կամարի տակ») վոտանավորը:

Պուշկինը Վորոնցովայի հետ կապված եր բարդ և անորոշ հարաբերութուններով: Հիմք կա յենթադրելու, վոր Պուշկինի և Վորոնցովի հարաբերութունների սրվելուն նպաստել ե կոմսի խանդը, վոր անբարյացակամորեն եր վերաբերվում դեպի Պուշկինի սիրահետումն իր կնոջ նկատմամբ: Յելիզավետա Վորոնցովան յոթ տարով մեծ եր Պուշկինից և ըստ յերևույթին կենցաղական գործերում նրանից ավելի փորձված: Համենայն դեպս Պուշկինի և Վորոնցովայի հարաբերութունները զուրկ չեյին նաև վորոշ սենտիմենտալ գունավորումից. նեց Վորոնցովայից եր Պուշկինն ստացել իր հայտնի սարգիտնավոր կնիքով թալիսման-մատանին, վորի վրա փորագրված եր հրեյական մակագրութուն (տես «Թալիսման») վոտանավորը): Ողեսսայից մեկնելուց հետո ել ըստ յերևույթին Պուշկինը վորոշ ժամանակ նամակագրութուն ուներ Վո-

ըննցովայի հետ: Յենթադրում են, վոր Վորոնցովայի նա-
մակները մասին ե խոսվում «Այրված նամակ» վոտանավո-
րում Այդ նամակները մեզ չեն հասել: Պահպանվել ե միայն
մի ավելի ուշ, 1833 թ. գրված, կիսապաշտոնական բնույթ
կրող նամակ, վորով Վորոնցովայն Պուշկինին հրավի-
րում ե մասնակցելու չքավորների ոգտին Ողեսսայում հրա-
տարակվելիք արմանախին: Այդ նամակն ստորագրված ե ծած-
կազիր ստորագրությամբ, և նրա մեջ կան հետեյալ տո-
ղերը. «Չգիտեմ, կարո՞ղ եմ ձեզ գրել և ինչպես կընդուն-
վի իմ նամակը՝ ժպտով, թե տաղտկալից գեմքով, յերբ նա-
մակի առաջին բառերից հետո տակը փնտուում են ձանձ-
րացնող թղթակցի ստորագրությունը... Ներեցեք, վոր դի-
մում եմ անցյալին. վերնուշը ծերության հարստությունն
ե, և ձեր ծանոթուհին իր հարստությանը մեծ գին ե տա-
լիս»: Թե ինչպիսի հիշողություններ եյին, վոր այստեղ
ակնարկում ե Վորոնցովայն, պարզել հնարավոր չե:

1830 թ. ավարտելով իր ամուրի կյանքը և հիշելով ապ-
րած սիրահրապուրանքները, Պուշկինը Վորոնցովային ձոնեց
«Последний раз твой образ милый» («Մի վերջին
անգամ քո պատկերը սիրելի»...) վոտանավորը:

Կյանքի նյութական հանգամանքներն Ողեսսայում
Պուշկինի համար կատարելապես պարզեցին, վոր նա պրո-
ֆեսիոնալ գրող ե: Մինչև այդ գրական հոնորարները
միայն կողմնակի յեկամուտ եյին և Պուշկինն ապրում եր
ոտճիկով և հոր տված միջոցներով: «Ռուսլան և Լյուդ-
միլա» և «Կովկասյան գերի» առաջին պոեմները, վոր
հրատարակել եր զբամական տեսակետից վոչ այնքան
բժախնդիր Գնեդիչը, համարյա վոչինչ չտվին: Քիշինևում,
վորտեղ ծախսելու տեղ չկար, Պուշկինը աղքատիկ միջոց-
ներով բավականանում եր: Ողեսսայում, վորտեղ գայթակ-
ղությունն ավելի յեր, իսկ հայրը դադարեց նրան դրամ
ուղարկելուց, հեղինակային հոնորարը զարձավ նրա գո-
յության գլխավոր նյութական բազան: Պուշկինը գեուև

մեծ յեկամուտներ չեր ստանում, բայց պարզվեց, վոր
այդ յեկամուտներն ունենալը հնարավոր ե: Պուշկինի
Ողեսսայում յեղած ժամանակ լույս տեսավ «Բախչիստրայի
շատրվանը», վոր հրատարակեց Վյազնասկին և զգալի
յեկամուտ տվեց. այն բարձր հոնարարը (3000 ռ.) վոր
Պուշկինն ստացավ, մի նշանակալից դեպք եր ռուսական
գրքային գործում և նույնիսկ, այդ տեսակետից, մամու-
լում քննության առնվեց: Հրատարակիչներից Պուշկինն
սկսեց ձեռնտու առաջարկություններ ստանալ: «Յես
յերգում եյի այնպես, ինչպես բուլկեգործն ե թխում,
գերձակը կարում, Կոզլովը գրում, հեքիմը բուժում — փողով,
փողով, փողով, — այդպես եմ յես իմ ցինիզմի մերկությամբ»
— սրախոսում եր Պուշկինն իր յեղբորը գրած նամակում:
Նույն բանը նա արտահայտել ե հետեյալ տողերի մեջ.

Վազնորությունը չի ծախվում,
Ձեռագիրը ինչպե՞ս ծախել...

Պուշկինն իր տեսակետը լիովին բացատրեց Վորոն-
ցովի գրասենյակի կառավարչին՝ Կազնաչևին գրած
նամակում, վոր նա գրեց ծառայությունից հեռանալու
որերին. «Չկարծեք, վոր յես վոտանավոր գրելու վրանայում
եյի հանգեր թխողի մանկական փառասիրությամբ կամ վոր-
պես զգայուն մարդու հանգստի վրա: Իս պարզապես իմ ար-
հեստն ե, ազնիվ արդյունաբերության մի ճյուղը, վորն ինձ
ապրուստ և տնային անկախություն ե տալիս: Ինձ կասեն,
վոր 700 ռ. ստանալով, յես պարտավոր եմ ծառայել: Իուք
գիտեք, վոր միայն Մոսկվայում կամ Պետերբուրգում
կարելի յե գրքի առևտուր անել, վորովհետև միայն այն-
տեղ են գտնվում ժուռնալիստները, ցենզորները և գրավա-
ձանները. յես ամեն ըոպե պետք ե հրաժարվեմ ամենա-
շահավետ առաջարկություններից միմիայն այն պատճա-
ռով, վոր մայրաքաղաքներից 2000 վերստ հեռավորության
վրա յեմ գտնվում: Կառավարությունն ուզում ե վորոշ
կերպով փոխհատուցել իմ կորուստները, յես այդ 700 ռ.

ընդունում եմ վոչ վորպես աստիճանավորի ոտճիկ, այլ վորպես աքսորյալ կալանավորի որապահիկ»:

Բնական է, վոր ծառայութեան վերաբերմամբ այդպիսի հայացքներ ունենալով, նա Վորոնցովի մոտ յերկար մնալ չեր կարող: Յեւ 1824 թ. սկզբից Վորոնցովի նամակներում Պուշկինի նկատմամբ շղայնութուն է զգացվում: Մարտի 6-ին նա գրում էր Կիսելյովին (Ռուսաստանի հարավում աեղավորված յերկրորդ բանակի շտաբի պետին, վորն այդ ժամանակ մեկնեց Պետերբուրգ Ալեքսանդրին գեկուցելու համար). «յերկու շաբաթվա մեջ յես Պուշկինին չորս բառից ավելի չեմ ասում. նա ինձանից վախենում է, գիտնալով, վոր իր մասին հենց առաջին լուրն առնելուն պես յես նրան հետ կուղարկեմ, և այն ժամանակ արդեն վոչ վոք չի ցանկանա նրա հետ գլուխ դնել. յես ստույգ աեղեկացել եմ, վոր նա իրեն շատ ավելի լավ է պահում և խոսակցութունների մեջ անհամեմատ ավելի զուսպ է, քան եր բարեսիրտ Ինգովի մոտ, վորը ժամանակ եր կորցնում նրա հետ վեճի բռնվելով, ցանկանալով ուղղել նրան տրամաբանութեամբ, կամ թույլ եր տալիս նրան մենակ ապրել Ոգեսասյում այն ժամանակ, յեր ինքը գտնվում եր Իրիշինեվում: Դատելով այն բոլորից, ինչ վոր յես նրա մասին իմանում եմ Գուրևի, Կազնաչեևի և վոստիկանութեան միջոցով, նա այժմ չսփազանց զգուշ է և զուսպ, հակառակ դեպքում յես նրան կուղարկեյի, և անձամբ շատ ուրախ կլինեյի, վորովհետև նրա վարքը չեմ սիրում և հիացած չեմ նրա տաղանդից, առանց գիտելիքների իսկական բանաստեղծ լինել չի կարելի, իսկ նա վոչինչ չի սովորել»: Սրանից հետո շուտով Վորոնցովի համար Պուշկինի հարցն արդեն վորոշված եր և նա գիմեց մինիստր Նեսսելրոդեյին, ինչորելով հեռացնել Պուշկինին: Ապրիլի 8-ին Վորոնցովը գրում եր Լոնգինովին. «...Յես գրել եմ կոմս Նեսսելրոդեյին, ինչորելով վոր ինձ ազատեն բանաստեղծ Պուշկինից: Նախ նա վոչինչ չի ուզում անել և ժամանակն անց է կաց-

նում կատարյալ ծուլութեան մեջ, հետո՝ քաշ է գալիս յերիտասարդների հետ, վորոնք բազմապատկում են նրա ինքնապիբութունը, վորն առանց այն էլ նա շատ ունի»: Այսպիսով արդեն ապրիլի սկզբին Պուշկինի հեռացումը կանխորոշված եր: Հետագա դեպքերը միայն սրեցին գրութունը: Մայիսի վերջին Պուշկինին գործուղեցին մորելի գեմ պալատարելու. այդ գործուղումից նա նեղացավ, ընդունելով այն վորպես դիտավորյալ վիրավորանք: Գործուղումից վերադառնալով, նա հրաժարական ներկայացրեց: Ըստ յերևութիւն անհիմն չեն ծաղրական գեկուցապրի մասին յեղած պատմութունները, վորի (գեկուցապրի) մեջ Պուշկինը գրել է թվականները, իսկ նրանց դեմ լակոնաբար հաղորդել է. «Մորելը թռավ», «Թռավ», «և նստեց», «նստեց», «բոլորը կերավ», «ու նորից թռավ»:

Միաժամանակ վոստիկանութունը բռնել եր Պուշկինի մի նամակը, վորտեղ նա գրում եր. «Զուտ աֆեյիզմի (այսինքն՝ աթեյիզմի) դասեր եմ առնում: Այստեղ կա մի անգլիացի, խուլ փիլիսոփա, միակ խելացի աֆեյը (անաստեղծ, վոստեղ և 1000 թերթ, վորպես զի չի կարող լինել), միաժամանակ վոչնչացնելով հոգու անմահութեան թույլ ապացույցները: Մի սիւտեմ վոչ այնքան մխիթարական, ինչպես սովորաբար կարծում են, այլ դժբախտաբար ավելի ճշմարտաման»: Այս նամակը վճռեց գործը: Ալեքսանդր կալսեր կարգադրութեամբ Պուշկինն աքսորվում եր Միխայլովսկոյե, իր ծնողների կալվածքը, քաղաքացիական և հոգևոր իշխանութեանց հակոդութեան ամի: Անաստվածութունը հավասարեցվում եր պետական հանցագործութեան: Այս անգամ արդեն աքսորը վոչնչով չեր սքողված: Պուշկինը փորձեց փախչել արտասահման (այդ բանում նրան

ողնուս եր Վյազեմսկայան), բայց զբանից վոչինչ գուրս
չեկավ: Ոգեսասյից նա մեկնեց հուլիսի 30-ին և վոչ մի տեղ
կանգ չառնելով, ոգոստոսի 9-ին յեկավ Միխայլովսկոյի:

ՄԻՒԱՅԼՈՎՍԿՈՅԵ
(1824—1826)

Պուշկինի ընտանիքն այդ ժամանակ գտնվում էր
Միխայլովսկոյեյում: Հայրն իր վրա ընդունեց վորդուն
հսկելու վոստիկանական պարտականութունները: Դա
առաջացրեց ընտանեկան ծանր ընդհարումներ, վորոնց
հետևանքով հայրը մեկնեց: Մեկնեց նաև Պուշկինի փոքր
յեզբայր Լևը, իր վրա վերցնելով մի շարք հանձնարարու-
թյուններ: Այդ հանձնարարությունների մեջ էր մտնում
Պուշկինի արտասանման փախչելու նախապատրաստությու-
նը: Դրա համար յենթադրվում էր հավաքել միջոցներ հրա-
տարակության ճանապարհով: Յեզ Լև Պուշկինն էլ մի վորոշ
ժամանակով գտնում է Պուշկինի հրատարակչական գոր-
ծերի միջնորդն ու հավատարմատարը: Հրատարակչա-
կան այլ նախագծերի մեջ էր մտնում նաև «Ոսեզինի»
առաջին գլխի հրատարակությունը և բանաստեղծություն-
ների առաջին ժողովածուի նախապատրաստությունը,
վորի համար անհրաժեշտ էր ձեռք բերել ձեռագիրը, վորը
1820 թ. հանձնված էր Վսեվոլոսկուն: Սակայն յեզբոր
հանձնարարությունները Լև Պուշկինն անփուլթ էր կատա-
րում. զբաղված էր նրանով, վոր ուղարկված վտանավոր-
ները կարդում էր Պետերբուրգի բոլոր սալոններում և
տալիս էր նրանց արտագրելու, զբանով նախապատրաստ-
վող հրատարակության նյութական հաջողությունը վիժեց-
նում էր: Յեզբոր փողերը նա տնորինում էր ինչպես իր
սեփականը: Այս բոլորն ստիպեցին Պուշկինին հրաժարվելու
յեզբոր միջնորդությունից և հրատարակչական գործերը
հանձնել Պլեանյովին, վորը և այնուհետև Պուշկինի հրա-
տարակությունները մշտական հավատարմատարն է դառ-

նում: Պուշկինի հրատարակությունների մեծագույն մասը
լույս տեսավ հենց Պլեանյովի հսկողության տակ: Փախուս-
տի փորձը գլուխ չեկավ, վորովհետև բանաստեղծի բարեկամ-
ներ ժուկովսկին և Պլեանյովն ամեն կերպ աշխատում էին
արգելք հանդիսանալ: Ընտանիքի մեկնելուց հետո Պուշկինի
կյանքը խուլ գյուղում ընթանում էր հանգիստ, առանց
առանձին դեպքերի: Պուշկինի ամբողջ ժամանցը կազմում
էին զբոսանքները, հարևան Տրիգորսկի կալվածքը հաճա-
խելը, վորտեղ ապրում էր կալվածատիրուհի Պրասկովիա
Ոսիպովան իր զավակներով, արգեն հասուն աղջիկներով
(առաջին ամուսնությունից, վորոնք կրում էին Վուլֆ
ազգանունը): Պուշկինի կյանքում հյուրերի գալուստը
հատուկ գեպը էր հանդիսանում, որինակ՝ Ոսիպովայի վոր-
դի Ալեքսեյ Վուլֆի, նրա Դորբատի համալսարանի ընկեր՝
բանաստեղծ Յազիկովի, և, վերջապես, Պուշկինի լիցեյական
ընկերներ Պուշկինի և հաակապես Դելվիզի, վոր հյուր էր
նրա մոտ 1825 թ. ապրիլին:

Պուշկինը Միխայլովսկոյեյումն էլ նյութ էր գտնում
սրտի նոր հրապուրանքների համար: Դրան առիթ էին
ծառայում և հանդիպումները յերիտասարդ գեղջկուհիների
հետ (այդ շրջանին է վերաբերում նրա հրապուրվելը ճորտ
կառավարչի դուստր Ոլգա Կալաշնիկովայով) և Տրիգորսկի
որիորդներով: 1825 թ. հուլիսին նա հանդիպեց Ոսիպովայի
ազգականուհի Ա. Պ. Կերնին, վորն արտացոլվեց «Я помню
ЧУДНОЕ МГНОВЕНЬЕ...» («Հիշում եմ սքանչելի վայրկյանը...»)
վոտանավորում:

Խուլ գյուղում բռնի կերպով արգելափակվելը Պուշ-
կինին կտրում էր յերկրի գրական ու հասարակական
կյանքից: Դա շատ լավ էր հասկանում Պուշկինի աքսորի
մասին գրած Վյազեմսկին. «Ո՞վ է այս տմարդի սպանու-
թյան հեղինակը: Կամ թե սպանություն չէ՞ յեռուն ու
տաքարյուն յերիտասարդին ոռուսական գյուղում տարա-
գրված պահելը... Բացի զբանից, ըմբռնում են արդյոք

նրանք, ովքեր իշխանությանն այդ միջոցառումն անել
տվին, թե ինչ բան ե աքսորը Ռուսաստանի գյուղում:
Պեաք ե հոգով դյուցազն լինել այս շարչարանքին դիմա-
նալու համար: Սարսափում եմ Պուշկինի համար: Նրա
տարիքին, նրա հոգով, վորը նույնպես հրո յեռուն վիճե ե,
չի կարելի հույս ունենալ, վոր միմիայն զբաղումը, մի-
միայն մտքի գործունեությունը բավարարի նրան (Ա. Ի.
Տուրգենևիվին զրած նամակը, 1824 թ. օգոստոս 13): Բայց
Պուշկինը բավական ուժ գտավ իր մեջ՝ հաղթահարելու
համար աքսորի պայմանները:

Բնական ե, վոր Միխայլովսկոյեյում առանձնանալը
ուժեղ ստեղծագործության ե ուսումնասիրությունների
ժամանակ եր: Յեթե Պուշկինը դեռ ես Բիշինեում տեսավ
«լուսավորությանը դարին հավասար լինելու» անհրաժեշտ-
ությունը, ապա այնուամենայնիվ հաղիվ թե սխալ եր
Վորոնցովը, հայտարարելով, թե՛ «նա պետք ե լերկար կար-
գա ե սովորի»: Միխայլովսկոյեյում Պուշկինը, վերջապես,
ազատ ժամանակ գտավ: Այնինչ նրա սեփական զրական
բախտը տանում եր դեպի իր բանաստեղծական ստեղծա-
գործության ճիշտ իմաստավորման անհրաժեշտությունը,
վոր առանց թեորեաիկ զգացմունքների հնարավոր չեր:
Պուշկինը մեկնում եր հարավ դեռ ես իրեն նշանակալից
վոչ մի բանով ցույց չտված: Բայց արդեն «Ռուսլան ե
Լյուդմիլա»-յի յերեվան գալը ժուռնալներում առաջ բերեց
կատաղի բանավիճ մի կողմից «Вестник Европы» ամսա-
գրի քննադատների, վորոնք խիստ կերպով հարձակվում
եյին հեղինակի վրա նրա թեթեվամտության, կոպտության,
կլասիկ հնություն նկատմամբ ունեցած անակնածելի վե-
րաբերմունքի համար, ե մյուս կողմից՝ լերիտասարդության
միջև, վորը ջերմորեն վողջունում եր պոեման: «Կովկասի
գերին» արդեն միայն զրական կարծիքների հանդիպեց
ե հսկայական թվով նմանողություններ առաջացրեց: Պուշ-
կինի ուսմանտիղմը քննադատությանը հաստատվում եր

վորպես առաջադեմ յերեվոյթ ուս գրականության մեջ:
Վերջապես, «Բախչիսարայի շատրվանի» յերեվան գալը,
Վյազեմսկու առաջաբանով, վորտեղ կլասիկի ե հրատա-
րակչի մեջ տեղի ունեցու խոսակցության ձեվով շարա-
գրվում եր բանաստեղծական նոր դպրոցի ե հին ուղղու-
թյան ներկայացուցիչների վիճաբանության եյուլթյունը,
առիթ ծառայեց յերկարատե բանավեճի համար, վորի
մեջ ուսմանտիկ արվեստի հարցերը բազմակողմանի քննու-
թյան եյին յենթարկվում: Հեղինակն այդ բանավեճից
յերկար ժամանակով հեռու մնալ չեր կարող: Ռոմանտիզմի
հարցերն այդ ժամանակ յեռանդով քննվում եյին Արև-
մուտքում, իսկ Ռուսաստանում ժողովածուների ե արմա-
նախնների եջերում զրական պորբեմների քննության գոր-
ծում մի առանձին աշխուժացում եր նկատվում՝ Ռիլեևի ե
Բեստուժեվի «Полярная звезда»-ի ե «Мнемозина»-ի
տարեկան պրակներում, վորտեղ Կյուխելբեկերը հանդես
յեկավ ելեղիական ուղղության դեմ ի պաշտպանություն
ողայի բարձր լիրիկական վոճի: Պուշկինն ակամա-
յից ներգրավվեց այդ բանավեճի մեջ, նախ Վյազեմսկու,
Բեստուժեվի, Ռիլեևի ե մյուսների հետ նամակագրության
ձևով, իսկ հետո նաև մամուլում: Բայց զրական վեճերում
իր ձայնն ունենալու համար հարկավոր եր շատ կարգալ, ե
Պետերբուրգից Պուշկինը դուրս եր գրում Միխայլովսկոյե
իրեն անհրաժեշտ զրականությունը: Չուս զրական հար-
ցերի ասպարիզում այդ որերին նրան առանձնապես զբա-
ղեցնում եյին դրամատուրգիայի հարցերը: Հենց այդ ժա-
մանակ նա սկսեց ուսումնասիրել Շեքսպիրին ե հետաքրք-
րվել կլասիկ ե ուսմանտիկ վողբերգության շուրջը յեղած
վեճերով:

Բայց զրական քննադատական բանավեճը միայն ար-
տաքին արտացոլումն եր շատ ավելի խորը վիճաբանու-
թյունների: Ավելի ընդհանուր հարցերի լուծման համար

անհրաժեշտ էր իմանալ պատմութիւն: Յետե 1820 թ. մոտ հասարակական-քաղաքական աշխարհայացքը վորոշող գիտութիւնը համարվում էր քաղաքապետութիւնը՝ միացած իրավունքի ուսմունքի հետ, ապա քսանական թվականների սկզբում հասարակական գիտութիւնների սիստեմում առաջին տեղն անցավ պատմութիւնը: Ճրանսիայում հենց այդ տարիներին էր ստեղծվում պատմական նոր գալրոցը, վորի ներկայացուցիչները միաժամանակ հանդիսանում էլին նաև ակտիվ քաղաքական գործիչներ, վորոնք լիբերալիզմի դրոշի տակ պայքարում էլին հանուն բուրժուական հեղափոխութեան գաղափարի, վոր մոտ էր ուսական գաղտնի ընկերութիւններին: Թեև Ճրանսիայի յերիտասարդ պատմական գալրոցի գլխավոր յերկերը Պուշկինը մի փոքր ավելի ուշ կարգաց, բայց Ողեսսայում հետեվելով Ֆրանսիական ժուռնալներին և թերթերին, նա պետք է իր վրա կրեր այդ ուղղութեան կողմնակի ազդեցութիւնը:

Անհրաժեշտ է նշել Պուշկինի այդ վաղ «պատմականութեան» մի բնորոշ գիծը: Դա այն էր, վոր նա գիմում էր պատմութեանը պատմական գուգահեռներ և անալոգիաներ ստանալու համար: Նման վերաբերմունքը թելադրվում էր, իհարկե, վոչ թե Ֆրանսիական պատմաբանների աշխատութիւնների ծանոթութեամբ, այլ եպիկական պոեմներում և թատրոնում գրական գիմումով դեպի պատմութիւնը, վոր հաստատված էր դեռ ևս XVIII դարում: Պատմական սյուժեին սովորաբար հանդիսանում էր այլաբանութեան կեղև՝ ներկա ժամանակը պատկերելու համար: Այսպես կոչված «գործադրութիւնների» սիստեմը իշխում էր նաև պոեմում, դրամայում և նույնիսկ վեպում, մինչև վոր վ. Սկոտտի ազդեցութեան տակ պատմական վեպը նոր ձև կստանար:

1824 թ. Կարամզինի «История Государства Россий-

СКОГО» աշխատութեան X և XI հատորների յերեվալը, վոր ընդգրկում էլին Ֆեոդոր Իոհանովիչի, Բորիս Գորունովի և Դիմիտրի Ինքնակոչի թագավորութեան շրջանը, այն ժամանակ յտոյր դեպք հանդիսացավ: Այստեղ Պուշկինը վերջապես գտավ պատմական սյուժե, վորի մշակմանը նա նվիրեց 1824 թ. վերջը և համարյա ամբողջ 1825 թ.: Դա յերկու ուղուրպատորների (ըստ Կարամզինի մեկնաբանութեան) տիպարներ էլին, վորոնք հասել էլին գահի, մեկը՝ վոճրագործութեան, որինական ժառանգի սպանութեան միջոցով, մյուսը՝ ապստամբութեան ճանապարհով: Հեշտ է պատկերացնել, թե ինչ չափով Պուշկինին այդ սյուժեին կենսաթրթիւն թվաց: Իշխանութեան բոնագրավման թեման վաղուց համարվում էր վորդերգութիւնների սեփականութիւն (Շեքսպիրի, Ռասինի, Վոլտերի մոտ, դեռ չխոսելով ավելի մանր դրամատուրգների մասին), հետեվաբար, գրական մշակումը, բնականորեն թելադրված էր: Մյուս կողմից՝ դա ուսական պատմական սյուժե յեր, այսինքն այն, ինչ վոր մատնանշում էլին գրող-դեկարրիստները: Վերջապես, ուղուրպացիայի քաղաքական սլորելմն առանձնապես սուր էր այդ տարիներին, յերը պատմութեան ընթացքը կապում էլին յերկու անձնավորութիւնների՝ Ալեքսանդրի և Նապոլեոնի գործունեյութեան հետ, վորոնք իշխանութեան էլին հասել ուղուրպացիայի ճանապարհով. Նապոլեոնը, վոր հակահեղափոխական հեղաշրջման ճանապարհով իշխանութեան գավթումը միացրել էր Բուրբոններից մեկի վերացման հետ (Անգլիի հերցոգի, վորի գլխատումն իր ժամանակին յեռանդով քննվում էր), Ալեքսանդրը, վոր իր հոր բռնի վերացմանը սանկցիա յեր ավել, վորին ուղեկցել էր նրա սպանութիւնը: Այդպիսի պատմական թեման, անկախ վորեվե ռեալակնարկներից, շնորհիվ հնարավոր գուգահեռների հարտութեան, բացառիկ հետաքրքրութիւն էր ստանում, մանավանդ, վոր հնարավորութիւն էր տալիս ժողովրդական շարժման ֆոնի վրա ուրվա-

գծել քաղաքական պայքարը: Պուշկինն իր քաղաքական դիրքը վորոշեց ապստամբ Ինքնակոչի բանակում դուրս բերելով իր նախնիքներից մեկին: Վողբերգության մեջ այդ Պուշկինը քաղաքական ճառ է ասում հասարակական կարծիքի մասին, վորը վերջին հաշվով քաղաքական պայքարին լուծումն է տալիս:

Յես ջո դիմաց չեմ ել կեղծի,
Բայց ուժեղ ենք մենք, Բասմանով,
Վոչ լեհական ուժով, գործով,
Այլ կարծիքով ժողովրդի...

Այդ ֆորմուլան՝ «ժողովրդական կարծիքը» մեզ տա-
նում է դեպի XVIII դարի «լուսավորիչները» քաղաքական սխառեմները: Ակտուալ լինելու հետ միաժամանակ ընտ-
րած թեման վողբերգությունը ուժանտիզմի վողով վերա-
կենդանացնելու գրական փորձի հնարավորությունն էր
տալիս:

Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր Միխայլովսկոյեյում Պուշկինի հասարակական-քաղաքական համոզմունքները խորը վերակառուցման յենթարկվեցին. նրա հեղափոխական հայացքները կազմվեցին նրան շրջապատող Հարավային գաղտնի ընկերության անդամների անմիջական ազդե-
ցության և Արևմուտքում շարունակ աճող հեղափոխական շարժման տպավորության տակ: Բայց արդեն Ուդեսսայում գաղտնի ընկերության ազդեցությունը դադարեց: Յեվրո-
պայում հաղթանակեց ռեակցիան և հեղափոխական շար-
ժումները ճնշվեցին: Պուշկինի Միխայլովսկոյե գալուց հետո առաջին քաղաքական դեպքերից մեկն էր Ռիեգոյի մա-
հապատիժը, վորով ավարտվեց Իսպանիայի թագավորի հաղթանակը: Պուշկինի անձնական ճակատագիրն էլ նպաս-
տում էր հիասթափմանն ու սկեպտիցիզմին: Դեռ ևս Ուդես-
սայում Պուշկինը քաղաքական հիասթափության նշաններ էր ցուցաբերում (տես «Свободы сеятель пустынный» վոտանավորը): Միխայլովսկոյեյում նա իրեն ավելի ևս

զինաթափված էր զգում և ավելի քիչ էր հավատում հե-
ղափոխական պայքարի հաջողությունը:

Միխայլովսկոյե Պուշկինը բերեց «Յեվգենի Ունեզինի»
յերկու գլուխը: Միխայլովսկոյեյում ապրելու ընթացքում
նա գրեց ևս չորս գլուխ: Այսպիսով «Յեվգենի Ունեզինը»
«Բորիս Գոդունովի» հետ միասին հանդիսանում են Պուշ-
կինի գլխավոր ստեղծագործական աշխատանքը Միխայ-
լովսկոյեյում: Այդ տարիների ընթացքում վեպի պլանը խիստ
փոխվեց: Փոխանակ ռուսական հասարակության սատիրա-
կան պատկերի, վոր մասամբ տրված է առաջին գլխում,
վեպն անցավ կալվածատիրական կյանքի կենցաղային
ռեալիստական պատկերների նկարագրության: Հենց Միխայ-
լովսկոյեյում այդ կենցաղանկարագրական կողմն այնքան
վորոշվեց, վոր այնուհետև սյուժեյի ընթացքն սկսեց վո-
րոշվել իրեն՝ Պուշկինի թափառումներով: Միխայլովսկո-
յեյում գրված գլուխները նկարագրում են կալվածատիրա-
կան գյուղը, Մոսկվան այցելելուց հետո գրում է Մոսկվայի
մասին գլուխը և Պետերբուրգից վերադառնալուց հետո՝
Պետերբուրգի մասին:

Հենց Միխայլովսկոյեյում ավարտվեց վերջին «հարա-
վային պոեման», վոր սկսված էր Ուդեսսայում՝ «Գնչուները».
նրա մեջ Պուշկինն ամփոփում է քսանական թվականների
առաջին կեսի իր տրամադրությունները և զբանով բաժան-
վում նրանցից: «Յեվգենի Ունեզինը» գարգանում էր բոլո-
րովին նոր պլանով: Ընդհանրապես Միխայլովսկոյեյում յե-
ղած ժամանակը հանրագումարների ժամանակ էր. Պուշկինն
այստեղ սկսեց գրել իր հիշողությունները, վոր 1825 թ.
դեպքերից հետո վոչնչացվեցին: Այնտեղ նա պատրաս-
տեց իր վոտանավորների առաջին ժողովածուն և տվեց
իր լիրիկայի տասը տարվա հանրագումարը:

Այս ժամանակաշրջանը, վոր ավարտվեց Միխայլով-
սկոյե գյուղում 1825 թ., հանդիսանում է «բարձր» ար-
վեստի շրջան, յերբ Պուշկինի ստեղծագործության մեջ

գերիշխում են «վսեմ բաները»: Հենց 1825 թ. Ե Պուշկինը գրում.

Մուսաներին ծառայել ունայնութուն չի սիրում,
Գեղեցիկ վեհ պիտ լինի...

Այդ ժամանակաշրջանի համար բնորոշ են բարձր թեմաներն ու հարավային պոեմների պրոբլեմները, «Բորիս Գոդունով» բարձր վոդեբոգությունը: Բայց սրանով չէ սպառվում Պուշկինի ստեղծագործութայն բովանդակությունը: «Յեվգենիյ Ունեգին» վեպի առաջ ընթանալու հետ միասին Պուշկինի պոեզիայի պատկերակ շեշտն ավելի ու ավելի փոխարինվում է զգաստ, նույնիսկ հեղինական դիտողունակութայն շեշտով, իսկ եկզոտիկ արևելքի կամ հեռավոր անցյալի պատկերները փոխարինվում են մերձակա իրականութայն ուսլիստական պատկերմամբ:

Միխայլովսկոյեյում գրած վերջին մեծ յերկը «Կոմս Նուլին» զվարճալի պոեմն է: Նա թվադրած է 13 դեկտեմբերի 1825 թ.: Հետեվյալ որը Պետերբուրգում տեղի ունեցավ ապստամբություն, վոր ճնշվեց Նիկոլայ I զորքերով:

Այստեղ, Միխայլովսկոյե գյուղում Պուշկինին այցելեցին լիցեյի նրա յերկու ընկերները՝ Իվ. Պուշչինը և Ս. Դելվիզը: Պուշչինը նրա մոտ անցկացրեց 1825 թ. հունվարի 11-ը և իր հուշերի մեջ մանրամասն նկարագրեց այդ տեսակցությունը: Բարեկամներն այդ որը վերջին անգամ տեսնվեցին: Դեկտեմբերի 14-ից հետո Ի. Պուշչինն աքսորվեց Սիբիր: Ս. Դելվիզն այցելութայն յեկավ Պուշկինին ապրիլ ամսին: Պուշկինը տեսավ և իր յերրորդ ընկերոջը՝ Գորչակովին, վորն անցնում էր Միխայլովսկոյե գյուղի մոտից և կանգ առնում հարևան կալվածքում: Բայց ծառայութայն գծով արդեն հեռու գնացած այդ յերիտասարդ կարիերիստին հանդիպելը չուրախացրեց նրան:

Պուշկինի վրա շատ ծանր անդրադարձավ գաղտնի ընկերությունների ջախջախումը, վոր տեղի ունեցավ դրա-

նից հետո: Չերբակալվածների մեջ էլին Պուշչինի շատ բարեկամները—նրա լիցեյական ընկերները՝ Պուշչինն ու Կյուլխելբեկերը, յերկու Ռաևսկիները (յերկուսն էլ, սակայն, շուտով ազատվեցին), Բեստուժևը, Ռիլեևը և շատ ուրիշները:

Պուշկինը, վոր հեռու մնաց դավադրությունից և դատաստանից, հույս ուներ, վոր իր վիճակը կփոխվի: Բայց միաժամանակ նա ուզում էր պահպանել գործողությունների և համոզմունքների ազատություն: «Վճռականորեն ասում եմ ձեզ, վոր ինձ համար պատասխանատու չլինեք և չերաշխավորեք»,— գրում էր նա Ժուկովսկուն դեկտեմբերիստների վերաբերմամբ սկսված հետաքննութայն առթիվ: Տեսնելով, վոր իր դրության մեջ փոփոխություն չկա, նա 1826 թ. մարտի 3-ին գրում է Պլեանյովին. «Թող ինձ թույլ տան թողնել անիժլալ Միխայլովսկոյեն: Հարց ե. անմեղ եմ յես, թե վոչ. բայց յերկու դեպքումն էլ յես վաղուց պիտի Պետերբուրգում լինեյի: Ահա թե ինչ է նշանակում լինել հավատարիմ հպատակ. կմոռանան և քվիթ»: Միքանի որ հետո նա Ժուկովսկուն գրում է պաշտոնական նամակ այն նպատակով, վորպեսզի նա ցույց տա այն ում վոր հարկն է. «Գուցե նորին մեծությունը կցանկանա փոխել իմ վիճակը: Ինչպիսին էլ վոր լինի իմ քաղաքական և կրոնական մտածելակերպը, յես այն պահում եմ ինձ համար և մտադիր չեմ խելացնորությամբ հակառակելու ընդհանուրի կողմից ընդունված կարգին ու անհրաժեշտությանը»: Այսպիսի արտահայտություններով էր Պուշկինը պայմանավորվում Նիկոլայ I կառավարության հետ: Նա ընդունում է նրա հաղթանակը և պարտավորություն վերցնում գեներլ ցած դնել, բայց նախկին մտածելակերպից չի հրաժարվում:

Այնինչ դեպքերը բոլորովին այնպես չեղին զարգանում, ինչպես Պուշկինն իրեն պատկերացնում էր: Ժուկովսկին նրան գրում էր. «Դու վոչ մի բանում խառնված չես—դա ճիշտ է: Բայց գործողներից ամեն մեկի թղթերում քո

վտանաւորներն են գտնուում: Դա կառավարութեան հետ
բարեկամանալու վատ ձև է»: Յեւ Նիկոլայի կառավարու-
թյունը, գիտենալով, վոր Պուշկինը թշնամիներէ թվումն
էր, միանգամից չվորոշեց, թե նրան ինչ ձևով զինաթափ-
անի՝ պատժելու, թե ներման միջոցով: Բայց պատժելու
համար պահանջվում էին լրացուցիչ տվյալներ: Կառավարու-
թյանը տեղեկութիւններ էին հասել, վոր մայիսյան տոնավաճառին Սվյատիյե Գորի գյուղում (Միխայլովսկո-
յեյից յերեք վերստի վրա) Պուշկինը կարմիր շապով ման
գալիս, յերգում էր գյուղացիներէ հետ ինչ-վոր յերգեր և
այդ առթիւ ընդհարվել էր տեղական վոստիկանութեան
ներկայացուցչի հետ (այդ տեղի յեր ունեցել դեռ 1825 թ.):
1826 թ. հուլիսին գաղտնի քաղաքական գործակալ Բոշ-
նյակը գործուղված էր Պսկովյան նահանգը քննելու և
պարզելու այն հարցերը, թե ի՞նչ է ստում Պուշկինը կա-
ռավարութեան մասին և արդյոք գյուղացիներին ապստամբ-
վելու կոչ չի անում: Բոշնյակը լիազորված էր ձերբա-
կալելու Պուշկինին, այդ պատճառով էլ նրա հետ միասին
մեկնեց Փելլոյեզեր (ձերբակալվածին ուղեկցելու համար):
Բոշնյակը ուշի ուշով տեղեկութիւններ էր հավաքում, բայց
ամեն տեղից միայն «անբավարար տեղեկութիւններ» էր
ստանում: Ահա Բոշնյակի արձանագրութեան մեջ հարեվան
կալվածատիրոջ՝ Պ. Ս. Պուշկինի ցուցմունքը, վորը Պուշ-
կինին ձանաչում էր դեռ Քիշինևից և հանդիպում էր նրան
մասնական լոժայում. «Յենթադրում էին, վոր Պուշկինը
առաջվա համեմատութեամբ իրեն անհամեմատ զգուշ է
պահում, վոր նա շատախոս է, վոր հաճախ իր վրա չեղած
բաներ է բարդում, վոր չի կարելի յենթադրել, թե նա
կառավարութեան դեմ իրոք վորոշ դիտավորութիւններ
ունի, վորն ապացուցելու համար հենվում էին հենց այն
բանի վրա, վոր նա դավադրութեանը չի մասնակցել»
վորի մի քանի անդամները նրա հետ սերտ կապ ունեյին-
վոր նա այնքան շատախոսն է, վոր վոչ մի չարամիտ խրմ-

բակ չի վստահի նրան իրենը համարելու, վերջապես, վոր
նա մի մարդ է, վոր ցանկանում է աչքի ընկնել իր տարրի-
նակութիւններով, բայց բոլորովին անընդունակ է հաշիվ-
ներէ վրա հիմնված գործողութիւններէ»: Բոշնյակի գեղու-
ցազրի հիման վրա վորոշվեց Պուշկինի հետ այլ կերպ
վարվել: Սեպտեմբերին Պուշկինը Փելլոյեզերով ուղարկվեց
Մոսկվա Նիկոլայ առաջինի հետ տեսակցելու:

ՔՍԱՆՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՉԸ

Դեկտեմբերիստների դատավճիռն ի կատար անվեց 1826 թ.
հուլիսի 13-ին: Հինգ մարդ բարձրացվեց կախաղան,
մնացածներն աքսորվեցին կամ աստիճանազրկվեցին և
զինվոր ուղարկվեցին: Պուշկինը գրում էր Վյազեմսկուն.
«Կախվածները կախված են, բայց 120 բարեկամների,
յեղբայրների, ընկերների տաժանակիր աշխատանքը սոսկա-
լի յե»: Պուշկինն իր նամակներում զուսպ էր, լավ հիշե-
լով, վոր իր աքսորի առիթն իր անզգուշ նամակի բացումն
էր վոստիկանութեան կողմից: Վյազեմսկին այնքան զուսպ
չէր և գրում էր կնոջը. «Ինձ համար Ռուսաստանն այժմ
պղծված է, արյունոտված, յես այնտեղ խեղդվում եմ,
անտանելի յե»: Կատարված մահապատժի, բարեկամների,
յեղբայրների, ընկերների աքսորի միտքը Պուշկինից չէր
հեռանում: Զգալով դեկտեմբերիստների հետ ունեցած կապը,
նա իր պարտքն էր համարում նրանցից չհրաժարվել և
ամեն կերպ ոժտանդակել նրանց ազատելուն: Այդպիսի տրա-
մադրութեամբ նա թողեց Միխայլովսկոյեն: Այդ ժամանակ
Մոսկվայում թագադրութեան առթիւ (վոր տեղի ունեցավ
ոգոստոսի 22-ին) հանդեսներ էին տեղի ունենում: Թա-
գադրութեան առթիւ հրատարակված մանիֆեստը «վորո-
մածութիւններով» չտարածվեց դատապարտված դեկտե-
րիստների վրա: Պուշկինը Մոսկվա յեկավ սեպտեմբերի
8-ին և նույն օրն էլ ներկայացվեց Նիկոլայ Լ: Այդ տեսակ-

ցության վոչ մի մանրամասնություն չի մնացել: Արդյունքները հետեվյալներն եյին. Պուշկինը տեղափոխություններէ ազատություն եր ստանում. այնուհետև նրա յերկերը ներկայացվում եյին իրեն՝ Նիկոլայ I թուլլովության, իսկ միջնորդ նշանակվում եր ժանդարմների շեֆ Բենկեն-գորֆը:

Մոսկվա վերադառնալու Պուշկինի առաջին տպավորությունը ազատության զգայության ուրախությունն եր: Հանգիստումը բարեկամների հետ, ընդհանուրի համակրական ուշադրությունը, գրական ժողովները, վորտեղ Պուշկինը կարգում եր «Բորիս Գոգոլենովը», գրական ձեռնարկությունները, վորոնց մեջ եր նաև «Московский Вестник-ի» կազմակերպումը Մոսկվայի գրական յերիտասարդության ուժերով, վորին առանձին պատվավոր պայմաններով հրավիրվեց Պուշկինը, այս բոլորը Պուշկինի շուրջն ստեղծում եր խանդավառ մթնոլորտ, և այդ խանդավառ տրամադրությամբ վարակվեց նաև ինքր: Կասկած չկա, վոր նրա ազատությունը պայմանավորված եր ինչ վոր պարտավորություններով և այդ պարտավորությունների մեջ մտնում եր քաղաքական անխոս կապիտուլյացիան, քաղաքացիական քարոզից անպայման հրաժարումը: Բայց Պուշկինի համար, ինչպես իրեն թվում եր, «մաքուր արվեստի» ասպարիզում գրական գործունեյության լայն դաշտ եր բացվում: Այդ պատճառով ել նա դաշն կնքեց Մոսկվայի յերիտասարդության հետ, վորի մեջ իշխում եյին գերմանական իդեալիստական փրիլիսոփայության գաղափարները, վորին ինքը Պուշկինն սկեպտիկ վերաբերմունք ուներ: «Մաքուր արվեստի» բնագավառում այդպիսի դաշինքը նրան հնարավոր եր թվում: Պուշկինն ընդունում եր վորպես փաստ այն, վոր ոռուսական հասարակության քաղաքական ինքնագործունեյության շրջանն ավարտվեց և վոր միակ քաղաքական ուժը Նիկոլայ I ինքնակալկառավարությունն եր: Կառավարության միջոցառումները,

յեթե չհաշվենք դեկաբրիստների նկատմամբ տեսած դատաստանը, Պուշկինի համար վերջնականապես չպարզեցին Նիկոլայ I ծրագիրը. նա հույս ուներ, վոր նոր թագավորը կկարողանա իրականացնել ոռուսական լիբերալիզմի բարենորոգչական սպասելիքները: Դեկաբրիստների դեմ մեղադրական ակտն այնպես եր կազմված, վոր գաղանի ընկերությունների գործունեյության բուն քաղաքական կողմն ստվերի տակ եր թողնված: Դեկաբրիստները չեյին մեղադրվում իրենց քաղաքական համոզմունքների համար: Ամբողջ մեղադրանքն ընկնում եր ցարին սպանելու և ապստամբություն նախապատրաստելու փորձերի վրա: Այսպիսով, հույս կար, վոր ապստամբությունը ճնշելուց հետո կառավարությունն զգալի սոցիալական խավերի արտահայտիչներ հանդիսացող դեկաբրիստներին համակիր ընդարձակ շրջանների հետ հաշտվելու նպատակով քաղաքական զիջումներ կանի: Հենց այդպիսի զիջումներ եր տեսնում Պուշկինը Նիկոլայ I միջանի միջոցառումների մեջ և մտածելով պատմական անարդիաներով, Նիկոլայի գործունեյությունը համեմատում եր Պյոտր I ռեֆորմատորական գործունեյության հետ: Սրանից ել Պուշկինի ստեղծագործության մեջ ծագում ե Պյոտրի թեման, վոր կարմիր թելով անցնում ե նրա գրական մտահղացումների միջով: Պյոտրի թեման իմաստավորվում եր վորպես ինքնակալության հետ աշխատակցելու հնարավորության պրոբլեմ: Այդ աշխատակցության սահմաններում Պուշկինի դիրքը հաստատուն չեր: Նրա համար պարզ չեր նաև Նիկոլայ I քաղաքականությունը, և շատ ասիներ պետք յեղան, մինչև վոր նա համոզվեց, վոր Նիկոլայի անձնավորության մեջ պրապորշչիկը գերակշռում եր Պյոտրին:

Մտկայն հենց առաջին քայլերից Պուշկինը միջանի հիասթափություններ ապրեց: Սեպտեմբերին գործ ծագեց «Անդրե Շենյե»-ից վոտանավորները ձեռագրերով տարածելու մասին, վորոնք մեկնաբանվեցին վորպես վոտանա-

վորներ գեկտեմբերի 14-ի մասին: Պուշկինին հարցաքննում և պահանջում էյին բացատրությունը: Այդ գործը շարունակվեց 1827 թվին և անցնելով բոլոր ինստանցիաները մինչև սենատն ու պետական խորհուրդը, վերջացավ 1828 թ. հուլիսին՝ Պուշկինի վրա գաղտնի վոստիկանական հակողություն սահմանելով և նրանից ստորագություն առնելով, վոր մինչև ցենզուրայի քննելը նա իր գրվածքները ձեռագրով վոչ վոք չպիտի հայտնի:

1826 թ. նոյեմբերին Պուշկինը Մոսկվայից վերադառնում է Միխայլովսկոյե, Նիկոլայից առաջադրանք ստանալով գրել ժողովրդական դաստիարակութան մասին գեկուցագիր: Զեկուցագիրը պահանջված էր Պուշկինից, հավանորեն, «լիցեյական վոգու» մասին Բուլգարինի մատնության տպավորության տակ, վորի մեջ լիցեյական կրթությունը պատկերացվում էր համարյա վորպես գլխավոր պատճառ Ռուսաստանի հեղափոխական շարժման:

Պահանջի կատարումը Պուշկինի համար պետք է կրեք քաղաքական քննության բնույթ: Նա այդ գեկուցագիրը գրեց խուսափողական ձևով, աշխատելով բավարարել Նիկոլայի պահանջները և միաժամանակ ինքն իրեն չհակասել: Այդ գեկուցագրի վրա Նիկոլայը մակագրել էր, վորի բովանդակությունը Պուշկինին հաղորդել էր Բենկենդորֆը, թե՛ «Զեր ընդունած կանոնը, վոր իբր թե լուսավորությունը և հանճարը կատարելության համար բացառիկ հիմք են ծառայում, վտանգավոր կանոն է ընդհանուր հանգստության համար, վոր հենց ձեզ անդունդի ծայրը հասցրեց և այնքան յերիտասարգների անդունդը գլորեց: Բարոյականությունը, ջանասեր ծառայությունը, յեռանդը պետք է գերադասել անփորձ, անբարոյական և անոգուտ լուսավորությունից: Հենց այս սկզբունքների վրա պետք է հիմնվի վողջամիտ դաստիարակությունը»: Այս մակագրությամբ Պուշկինը ճանաչվեց վորպես քննություն չբռնած: Նրանից քաղաքական չեզոքություն չեյին պահանջում, այլ հավատա-

րիմ հպատակության յեռանդ: Սրանից քիչ առաջ Բենկենդորֆը նրան «Բորիս Գոդունովի» հրապարակային ընթերցման համար հակաողություն արեց: Պուշկինից պահանջեցին ձեռագիրը: Ստացվեց բոլորովին անսպասելի արդյունք. Նիկոլայը պահանջեց (ձեռագիրը նախապես տալով Բուլգարինին նրա կարծիքն իմանալու համար), վորպեսզի Պուշկինը վողբերգությունը վեր ածի վեպի «Վալտեր Սկոտտի ուրինակով»: Պուշկինը հրաժարվեց, և դրանով իսկ վողբերգությունը համարվեց բարձրագույն հրամանով արգելված: Վալտեր Սկոտտի ուրինակով այդ թեմայով վեպ գրելուն ձեռնարկեց ինքը Բուլգարինը:

Միաժամանակ Պուշկինին բացատրեցին ցարի կողմից գրաքննության յենթարկվելու վորոշման իմաստը: Նրան մատնանշեցին, վոր նա գրվում է ընդհանուր հիմունքներով վորևե բան տպելու իրավունքից, և նրա բոլոր գրվածքները պարտադիր կարգով հանվում են ընդհանուր գրաքննության իրավասությունից և Բենկենդորֆի միջոցով ներկայացվում են Նիկոլային ի քննություն: Այսպիսով հետագայում Պուշկինին հաջողվում էր խուսյա տալ Նիկոլայի գրաքննությունից, իր գրվածքները տպելով անոնիմ (անստորագիր) կամ կեղծանվան տակ:

1826 թ. գեկտեմբերին Մոսկվա վերադառնալուց հետո Պուշկինը գրեց «В надежде славы и добра» ստանսները: Պուշկինի այս վոտանավորում մի ամբողջ քաղաքական ծրագիր է գրված: Նիկոլայ I ցույց է տրվում մի պատմական իդյալ՝ Պյոտրը, ճշտորեն թվելով (վորբան այդ թույլ էր տալիս չափածո ձևը) Պյոտրի ունեցողների հիմնական տարբերը: Բայց ամբողջ վոտանավորն ուներ նշանակալից վերջավորություն՝ «անհիշաչար» լինելու կոչով, այսինքն՝ կոչ էր անում վերադարձնել գեկարրիստներին: Համարյա սրա հետ միաժամանակ գրեց և մի ուրիշ վոտանավոր՝ «Սիրիբ», վորի մեջ վողջունում էր գեկարրիստներին և համոզմունք հայտնում նրանց վերջնական

հաղթանակի համար: Թագավորին ուղղված ստանաները (հատ-
վածական բանաստեղծություններ) տպագրվեցին «МОСКОВ-
СКИЙ ВЕСТНИК»-ի 1828 թ. հունվարի համարում: Շատերն
այն հասկացան վորպես շողորթություն Նիկոլայ I հաս-
ցեյին. այլաբանության իմաստը չհասկացան: Այդ մեկնա-
բանություններին Պուշկինը պատասխանից յերկրորդ
ստանաներով՝ «Нет, я не льстец» («վոչ, յես քծնող չեմ»)
վերնագրով, վորոնց մեջ փորձում եր ավելի մեծ ճշտու-
թյամբ ձևակերպել իր վերաբերմունքը դեպի Նիկոլայ I:
Նիկոլայի քաղաքականության մեջ զբաղան մոմենտներ
նա համարում եր «պատերազմը, հուլյսերը, աշխատանք-
ները»: «Հուլյսերը» նա կապում եր «1826 թ. դեկտեմբերի
6-ի դադանի կոմիտեյի» գործունեյության հետ, վորին եր
վերագրվում լայն ռեֆորմների պլանը պետական կառավար-
ման մեջ և գյուղացիական գործում: Այդ հուլյսերից Պուշ-
կինը հիասթափվեց միայն 1832 թ.: Պատերազմը, դա
կովհասում մղվող պարսկական պատերազմն եր, վորի
անհրաժեշտությունն ընդունում ելին գեկաբերխտական
ըրջանները: 1826 թ. ստանաները դեռևս կանգնած են
Նիկոլայ I ձեռնարկումների լրերի մեկնաբանման տեսա-
կետի վրա:

Պուշկինի վերաբերմամբ կառավարության վարած
քաղաքականությունը թելադրվում եր նրան իր կողմը
գրավելու և վորպես արքունական գաղափարների մունետիկ
գործածելու ձգտումով: 1827 թ. հուլիսի 12-ին Բենկեն-
գորֆը գրում եր Նիկոլայ I. «Պուշկինը բավական մեծ
դատարկագորտ ե, բայց յեթե հաջողվի նրա գրչին և
նրա խոսակցություններին ուղղություն տալ, դրանով մենք
անմիջական շահ կունենանք»: Բենկենգորֆը Պուշկինի
համար Բուլգարինի դերն եր պատրաստում:

1827 թ. առաջին կեսը Պուշկինն անցկացրեց Մոս-
կվայում, իսկ մայիսին իրավունք ստացավ Պետերբուրգ

գնալու: Այստեղ նա ապրեց մինչև 1828 թ. հոկտեմբեր ամի-
սը, վորից հետո յերկու ամսով վերադարձավ Մոսկվա:

Նորից սկսվեց քաղաքի անկանոն կյանքը: Աշխարհիկ
ժամանցները, թղթախաղը, նոր հրապույրները Պուշկինին
կանոնավոր աշխատանքից հեռ եյին պահում: Այդ տարի-
ներին Պուշկինն արդեն մտածում եր ընտանեկան կյանք
կառուցելու մասին: 1828 թ. ե վերաբերում Աննա
Ուենինայի, գեղարվեստների Ակադեմիայի նախագահի և
գրական մեկենասի դասեր հետ ամուսնանալու փորձը:
Այդ փորձը խանգարվեց հենց իրեն՝ Պուշկինի մեղքով:

Այդ տարիներին լույս տեսան «Գնչուները», «Ավագակ
չեղբայրները», «Յեվգենի Ոնեգինի» առաջին վեց գլուխը,
վոր առանձին պրակներով լույս եյին տեսնում 1825 թվից
սկսած, «Կոմս Նուլինը»: Ամսագրերի գրական քննադատու-
թյունը համակրանքով եր դիմավորում Պուշկինի նոր յեր-
կերը:

Գովեստների ընդհանուր խմբում խիստ կերպով աչքի
եյին ընկնում միայն միքանի առանձին ձայներ, որինակ
«Աթենեյում»՝ 1828 թ. գետեղված «Յեվգենի Ոնեգինի»
IV և V գլուխների բժանդիր վերլուծությունը: 1828 թ.
ժուռնալային կարծիքների մեջ առանձին տեղ ե բռնում
Ի. Կիրեևսկու հոդվածը «МОСКОВСКИЙ ВЕСТНИК»-ում, վորի
մեջ հեղինակը տալիս ե Պուշկինի օտեղծագործության
սինթետիկ գնահատականը, բաժանելով այն յերեք ըրջանի-
«խալո-ֆրանսիական» («Ռուսլան և Լյուդմիլա»), բայրոնա-
կան (հարավային պոեմներ) և ռուսական-պուշկինյան
(«Գնչուներ», «Յեվգենի Ոնեգին» և «Բորիս Գոդունով»):
Կիրեևսկու հոդվածը, կառուցված՝ «պոեզիան իր ժամանակ-
վա արտացոլումն ե» սկզբունքով, ընդգծում ե Պուշկինի
պոեզիայի «իր ժողովրդի կյանքն իր մեջ արտացոլելու»
հատկությունը: Կիրեևսկու հոդվածը Պուշկինի փառքի
գազաթնակետի նշանն եր:

Այդ տարիներին Պուշկինը շարունակում եր գրել

«Յեզեզեհի Ոսեզինը», իսկ այդ ժամանակվա խոշոր յերկե-
րից պիտի հիշատակել «Պյոտր մեծի խափշիկը» անա-
վարա վեպը, գրած Վաչլտեր Սկոտտի ստիլով, և «Պու-
տավա» պոեմը, վոր գրվեց կարճ ժամանակում՝ 1828 թ.
հոկտեմբերին: Յերկու գրվածքներումն էլ առաջադրվում է
Պյոտրի թեման: Վեպում Պուշկինն ուզում էր գծագրել
Պյոտրի ռեֆորմատորական գործունեությունը և վորպես
հերոս ընտրեց իր նախնիք Հաննիբալին: «Պուտավայում»
նա շոշափում է Պյոտրի ռազմական պատմությունը: Թե
մեկ և թե մյուս յերկուսում Պուշկինը, զիջելով գրական
տրագիցիային, սյուժեն զարգացնում է սիրային պատմու-
թյուն մտցնելով միջոցով Հաննիբալի ամուսնությունը և
Մարիա (Մաարյոնա) Կոչուբեյի սերը Մազեպայի հան-
գեպ: Յերկու ղեպըումն էլ սիրային պատմությունը պա-
մական փաստերի վրա չեն հիմնված: Հաննիբալի պատմու-
թյունն ընդհանրապես հնարված է սկզբից մինչև վերջ,
իսկ Մազեպայի և Մարիայի հարաբերությունը բոլորովին
այնպես չի պատկերացված, ինչպես վոր այն յեղել է իրա-
կանության մեջ: Բայց սիրային տարրը զիջում էր տրագի-
ցիային: Յեզ մեկ, և մյուս ղեպըում գլխավոր թեման
Պետրոսի ժամանակվա պատմական ղեպերն են:

Հաննիբալը՝ նեգը կամ ավելի ճիշտ հաբեշ, վոր
Կաստանդինոպոլսից բերված էր Ռուսաստան և վորը խոշոր
ռազմական կարիերա յեր ստեղծել, Պուշկինի նախնիքն
էր մոր կողմից: Նրա թոռանը, մոր կողմից իր պապին
Պուշկինը տեսել էր Միխայլովսկոյեյում, յերբ առաջին
անգամ այնտեղ էր յեկել և այդ հանդիպումից մնա-
ցել են հատվածներ Պուշկինի հիշողություններից: Հան-
նիբալը Պուշկինի յերկրորդ նախնիքն էր, վոր դուրս էր
բերված նրա գրվածքներում: «Բորիա Գոչունով»-ում նա
դուրս էր բերել Պուշկիններից մեկին, վորը Բորիա Գո-
չունովի և Ինքնակոչի գարաշըջանի գործիչ էր: Պուշկինի
հետաքրքրությունը ղեպի իր նախնիքներն առանձնապես

նկատելի յե սկսած 1825 թվից: Նախ այդ հետաքրքրու-
թյունը ծագեց համարյա Վորոնցովի — «միլորդի», վոր պար-
ժենում էր իր տոհմիկ ծագումով և բարձրից էր
նայում ռազմոչինջիներին, վորոնց թվին էր դասում
նաև աքսորական աստիճանավոր Պուշկինին, — ղեպի նա
ունեցած արհամարհական վերաբերմունքից պաշտպան-
վելու կարգով: Պալատական բյուրոկրատիայի, վոր իր
յերբեմնի կասկածելի տոհմիկություն մեջ տեսնում էր հար-
գանք և պատիվ ստանալու իր իրավունքը, — արխատկրա-
տական հպարտությունը Պուշկինը հակադրում էր տոհ-
մի հնություն հավասար իրավունքները: Պուշկինը այդ ազնու-
վականությունը համարում էր վորպես գրողի հարգանք վա-
յելելու իրավունքների պաշտպանություն: «Մեզ մոտ գրող-
ներն առնված են հասարակության բարձր դասակարգից և
նրանց մոտ արխատկրատական հպարտությունը ձուլվում է
հեղինակի ինքնասիրություն հետ: Հավասարների կողմից հո-
վանավորվել չենք ցանկանում: Ահա թե ինչը չի հասկանում
սրիկա Վորոնցովը: Նա յերեվակայում է, թե ուսու բանաստեղ-
ծը կգա նրա նախասենյակը ուղերձով կամ ողբայով, իսկ նա
ներկայանում է պահանջելով հարգանք, վորպես վեց-
հարյուրամյա ազնվական — տարբերությունը զիվային է»
(Պուշկինի նամակը Բեսուսովին 1825 թ. հունիսին):
Այս խնդրում նա իր բարեկամներից վճռական զիմադրու-
թյան հանդիպեց. մասնավորապես Ռիլեևը Պուշկինին գրած
իր նամակներում 1825 թ. նրան խիտտ պատասխան
տվեց: Յեզ իսկապես այդ տարիներին Պուշկինի ազնվական
հպարտությունն իր նախնիքներով, վոչ մի կերպ չեր
ներդաշնակվում նրա հասարակական աշխարհայացքի հետ:
Մրան զուգընթաց, պատմություն ուսուսմասիրություն պրո-
ցեսում նա հետաքրքրվում էր իր տոհմի ճակատագրով:
«Պյոտր մեծի խափշիկը» արտացոլում է Պուշկինի այդ

հայացքները: Պուշկինն իր ծագումը Հաննիբրալից հաղորդում էր 1825 թ. լույս տեսած «Ռենգիներ» առաջին գլխի ընդարձակ ծանոթության մեջ:

«Պուլտավայի» գրելը զուգադիպեց Նիկոլայ I ռազմաբեմը մեկնելուն: Պատժական անալոգիան Պյոտրի և Նիկոլայի միջև, վոր գծագրված էր դեռ ևս առաջին ստանսներում, պոեմում կարծես իր հետագա զարգացումն էր ստանում: Պոեմի ռազմական իրադրությունը ներդաշնակում էր այդ ժամանակվա պատերազմական հանգամանքներին. պարսկական պատերազմը հենց նոր էր վերջացել և սկսվել էր թյուրքական: Պուշկինի առաջ քաշած Պյոտրի պատկերը, վորի մեկնաբանումը Պուշկինի կողմից Ռիլեյի վի տված գնահատականից չէր տարբերվում, կարծես կառավարութայն առաջ դնում էր այն պայմանները, վորով հնարավոր էր աշխատակցությունն ու պատերազմի ընդունումը: Այս բոլորը հաշվի առնելով, սխալ կլինի «Պուլտավան» գնահատել վորպես պաշտոնական – հայրենասիրական պոեմ, ինչպես սխալ էր «Ստանսներում» տեսնել վորպես Նիկոլայի հասցեյին ուղղված հաշվանկատ քծնանք: Պյոտրի ժամանակվա դեպքերի և թյուրքական պատերազմի պարագաների մեջ յեղած կոնտրաստը առաջ էր քաշվում վորպես «հույսեր» և կառավարութայն կողմից պարզութայն սպասում:

«Պուլտավան» լույս տեսավ 1829 թ. մարտին: Քննադատությունը «Պուլտավան» բոլորովին ել այնպիսի հիացմունքով չընդունեց, ինչպես Պուշկինի նախկին պոեմները: Ճիշտ է, Ն. Պոլևոյի «Московский Телеграф»-ի եջերում քննվում էր վորպես Պուշկինի ամենալատարյալ ստեղծագործությունը, բայց «Сын Отечества»-ում լույս տեսած կարծիքը խիստ զուսպ էր, իսկ «Вестник Европы»-ում Նադեժդինը հանդես յեկավ ծաղրով լի մի հոդվածով: Ավելի նվազ նպաստավոր էյին կարծիքները «Կոմս Նուլինի» մասին, վոր լույս տեսավ առանձին հրատարակություն: Վիպակը հայտարարվեց անբովանդակ և անբարոյական:

Յերբ Պուշկինը գրում էր «Պուլտավան», սկսվեց մի նոր գործ, վոր Պուշկինին շատ տհաճություններ պատճառեց: Կառավարութայն ձեռքը հասավ «Գավրիլիադան» և սկսվեց այդ «անաստված պոեմի» հեղինակի վորոնումը: Սկսվեց հետաքննություն և ոգոստոսին ու հոկտեմբերին Պուշկինին հարցաքննեցին: Այդ գործի առթիվ Պուշկինն իր տված գրավոր բացատրություններում հրաժարվեց հեղինակությունից և վերջիվերջո գրեց ինչ վոր նամակ ուղղակի Նիկոլայ I վոր մնացել է անհայտ: Կարելի յե յենթագրել, վոր այդ նամակը պարունակում էր Պուշկինի խոստովանությունը: Դրանից հետո գործը կարճվեց: Պետք է կարծել, վոր գործի կարճումը հետեվանք էր ցարի հանգեպ Պուշկինի վերցրած նոր պարտավորությունների:

Գրեթե միաժամանակ տեղի ունեցող հետաքննությունները «Անդրե Շենիե» և «Գավրիլիադա» բանաստեղծությունների վերաբերմամբ՝ պատրաստվող հալածանքների ախտանիշեր էյին, և Պուշկինը նոր վործանքներ էր նախագրում:

Նորից ամպեր գլխիս վրա
Կուտակվեցին խավարում,
Յեկ նախանձոտ բախտս անա
Չարիքով ե ինձ սպանում:
Արդյոք դեպ իմ բախտս կյանքում
Արհամարհանք կտածեն,
Համբերություն, զրպարտություն
Արդյոք նրան դո՞ բերմ:

Հետևյալ 1829 թ. Պուշկինը մեկնեց Մոսկվա: Այս անգամվա Մոսկվա այցելությունն է վերաբերում նրա խնամախոսությունը 17-ամյա Նատալիա Նիկոլաևնա Գոնչարովային, Մոսկվայի առաջին գեղեցկուհիներից մեկին, վորն այդ ժամանակ համարյա սնանկացած՝ թղթի հայտնի գործանատիրոջ թոռն էր: Այդ խնամախոսությունն աննպաստ ընդունելություն գտավ աղջկա ծնողների կողմից: Դրանից հետո շուտով Պուշկինը մեկնեց Կովկաս: Մեկնումն անսպա-

սելի լեր, և Պուշկինն այդ քայլն արեց հակառակ այն բանին, վոր Նիկոլայ I ուղղակի մերժել էր նրա խնդիրը՝ իրեն գործող բանակ նշանակելու ժամին, վորով նա դիմել էր 1828 թ. մարտին: Պուշկինն իր ճանապարհորդութունը նկարագրեց «Ճանապարհորդութուն դեպի Արզրուս» գրքի մեջ. իսկ պոեզիայում նրա ուղեվորութունն անդրագարձավ միայն կովկասյան բանաստեղծութունների ցիկլով: Իր վտանավորների մեջ նա չընդափեց պատերազմի ռազմա-քաղաքական նշանակությունը: Պահպանվել է միայն Ադրխանուպոլսի դաշնագիրը կնքելուց (1829 թ. սեպտ. 14, 26) առաջացած մի սևագիր օւրվագիծ, վորի մեջ, վորպես պատերազմի հիմնական հետեվանք, Պուշկինն ընդգծում է Հունաստանի ազատագրումը (վորին թյուրքերին՝ ըստ հաշտության դաշնագրի պայմաններին՝ ճանաչեց անկախ), նրա ապագա վերածնության գրավականը:

Նորից փառքով մենք պտակված,
Յե՛վ պարաված է չար թշնամին:
Երգրումում վեճն է լուծված,
Եղիբնեյում կապինք դաշինք:

Ռուսիան ելի առաջ շարվեց,
Յե՛վ հարավը շրջապատեց,
Կոո-Յե՛վքսինը վտաքի հանեց,
Իրեն գրկում ամուր սեղմեց:

Դո՛ւ, Հունաստան, յելիք կովի,
Իզուր չեյիք ուժեր լարում,
Դողում եյին կովի ժամին
Վոլիմպոսը, Թերմոպիլեն:

Հնչում եյին կրակոտ յերգեր
Յե՛վ Թիրթեյի, և Բայրոնի,
Քանդվում եյին կուռ շրթաներ,
Շողուն յերկրում հերոսների:

Յե՛վ սովերում դադաթների
Ազատութունն ջահել յելավ,
Պերեկուսի և Աթենքի
Շիրիմների վրա մարմար:

Միայն թյուրքական պատերազմին մասնակցելու ցանկությունը չէր, վոր գրավում էր Պուշկինին: Կովկասյան բանակը գեկաբերիստների և գաղանի ընկերութուններին վերաբերող գործի մեջ «խառնվածներին» քստորավայրն էր: Այնտեղ եյին ծառայում Պուշկինի բարեկամները: Այնտեղ էր Ն. Ռոսսակին, Պուշկինի լիցեական ընկեր Վոլխովսկին, Պուշկինի ծանոթ Ի. Գ. Բուրցեը և ուրիշները. այնտեղ էր ծառայում և Պուշկինի յեղբայր Աբր: Կովկասյան բանակն այցելելը զգալի չափով առաջ էր յե՛կել իր ընկերներին տեսնելու ցանկությունը: Պուշկինն անցավ Վլադիկավկազը, Թիֆլիսը և այնտեղից ճանապարհովեց բանակ, վորին հառավ արդեն Ղարսից այն կողմ, Սողանյուսի լեռների լեռնանցքում: Այստեղից նա ուղեկցեց բանակը մինչև Արզրուս: Այս կամպանիան նա կատարեց, ըստ նրա տեփական արտահայտությունը՝ կիսով չափ իբրև ճանապարհորդ, կիսով չափ իբրև զինվոր: Ռուսական բանակ դալու երեց առաջին որը Պուշկինը փորձում էր անձիջահանորեն մասնակցելու ռազմական գործողութուններին: Դա հունիսի 14-ին էր Ինչա-Սուսի հովտում: Առաջավոր պահակակետերի վրա հարձակվեցին թյուրքերը. Պուշկինը ռազմակայանից դուրս նետվելով ձի նստեց և սլացավ դեպի առաջապոստերը: «Ուշելով սպանված կողակներից մեկի նիզակը, նա նետվեց հակառակորդի ձիավորների դեմ: Կարելի չե հավատար, վոր մեր Դոնի կողակները խիստ զարմացած եյին, իրենց առջև տեսնելով կյոր գլխարկով և յափնջով մի անձանոթ հերոսի: Դա մուսաների տիրեցյալի առաջին և վերջին ռազմական դերյուսան էր Կովկասում» (Ушаков, История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 г. г.): Հունիսի 27-ին ուսու գորքերը մասն Երզրում (Արզրում):

Պուշկինն այստեղ գտնվում էր շաբաթում վորպես հյուր: Հստ յերևույթին Պուշկինի և Պասկեվիչի հարաբերութունները լարված եյին: Պասկեվիչը Կովկասում փո-

խարինեց այդտեղից հեռացված գեներալ Յերմոլովին, վորը գեկաբրիստների շրջանում ժողովրդականութուն եր վայելում: Կովկաս գնալիս Պուշկինն այցելեց Յերմոլովին, դրա համար մեծ պատուս գործելով և նրա հետ գրույցի ժամանակ լսեց Պասկևիչի վոչ գովական բնութագրութունը: Դեպի հայտնի ռեակցիոներ Պասկևիչը Պուշկինը չեք կարող համակրական վերաբերմունք ունենալ: Պասկևիչը Պուշկինին քաղաքական տեսակետից կասկածելի մարդ եր համարում: Նրանք շուտով բաժանվեցին և հուլիսի 21-ին Պուշկինը հետ դարձավ, ճանապարհին կանգ առնելով հանքային շրերում, հետո Մոսկվայի տակ, Վուլֆի կալվածքում, վոր գտնվում եր Տվերի նահանգում (Մալիննիկի), վորտեղ նա առաջ լինում եր:

Նրա վերադարձը Բենկենդորֆը գիմավորեց շատ մեծ շղատությամբ: Նիկոլայը Պուշկինից պահանջեց բացատրութուն և, ըստ յերևույթին, նրա բացատրութուններով չբավարարվեց: Յերը շուտով Պուշկինը դրանից հետո խնդրեց թույլ տալ իրեն արտասահման մեկնելու, նրան խիստ և վճռականորեն մերժեցին:

Նոր 1830 թիվը նշանավոր յեղավ Պուշկինի անմիջական մասնակցությամբ «Литературная газета»-յի հրատարակությամբ: Դա սեփական որդան ստեղծելու փորձ եր, վորի շուրջը համախմբվեցին այն գրողները՝ վորոնք Պուշկինին մոտ ելին: Պուշկինի հույսը, թե «МОСКОВСКИЙ ВЕСТНИК»-ը կարող ե նրա գրական խմբակի որդանը լինել, չարգարացավ: Նրան չհաջողվեց ժուռնալին աշխատակցելու ներգրավել իր գրական մոտիկ բարեկամներին, և ինքն ել կամաց կամաց հեռացավ ժուռնալի դեկավարներից, և թեև բացահայտ պառակտում չկար, բայց Պուշկինի մասնակցությունն այդ ժուռնալում ավելի ու ավելի անկանոն ե դառնում և 1829 թ. հունվարի համարից հետո բոլորովին դադարում ե:

Մինչդեռ 1829 թ. դեկտեմբերին Պետերբուրգում մտադրվեցին գրական նոր որդան հրատարակել: Խմբագիր ընտրվեց Դելվիզը, վորը 1825 թվից հրատարակում եր «Северные цветы» արմանախր, վորը Ռիլեեի և Բեստուժևի «Полярная звезда»-յի փակվելուց հետո ուս տարեգիր-ալմանախնների մեջ առաջին տեղը գրավեց: «Северные цветы»-ի շուրջն ստեղծվեց հաստատուն գրական խմբակ, վորին նպաստում ելին Դելվիզի տանը կանոնավորապես տեղի ունեցող ընկերական գրական յերեկոները: «Литературная газета»-ն վորոշվեց հրատարակել նույն գրական ուժերով, ինչ վոր «Северные цветы»-ն: Աշխատակցության հրավերվեց Վյադեմսկին, վորն այդ ժամանակ թագեց Պուլեյոյի «Московский телеграф»-ը, վորին առաջ աշխատակցում եր:

Պուշկինին բաժին ընկավ կարգի գցելու թերթը (վոր լույս եր տեսնում 5 որդմեկ անգամ) նրա առաջին համարներից, վորովհետև Դելվիզը հունվարի սկզբներին մեկնել եր Մոսկվա: Թերթը խմբագրելու համար մնաց Պուշկինը Սոմովի, թերթի գլխավոր աշխատակցի ոգնությամբ, վորը Դելվիզի հետ միասին խմբագրում եր «Северные цветы»-ն:

«Литературная газета»-յի ժամանակաշրջանը հանդիսանում ե ամենակատաղի բանավեճի և մյուս թերթերի կողմից Պուշկինի և նրա գրական դաշնակիցների վրա ամենադաժան հարձակումների շրջան:

Բանավեճն առաջին հերթին սկսվեց «Северная пчела»-յի հետ: Դա միակ մասնավոր լրագիրն եր: Նրա հրատարակիչը, Քուլզարինը, մութ անցյալի տեր մի մարդ, մի ժամանակ մոտ եր գեկաբրիստներին, Ռիլեեին և Գրեբոյեգովին, բայց 1825 թ. դեկտեմբերյան դեպքերից հետո նա միանգամից կտրեց ամեն մի կապ լրբերալիզմի հետ և կանգնեց պաշտոնական տեսակետի վրա: Նա փորձված ժուռնալիստ եր, բոլորովին անսկզբունք մի մարդ, վոր

միայն առեվտրական նպատակներ եր հետապնդում: Նա մտա հարաբերութիւնների մեջ մտալ Բենիկենդորֆի հետ» սպասարկում եր III բաժանմունքը (գաղտնի քաղաքական վստիկանութիւնը) տեղեկատու ղեկուցագրերով. դրա համար նրա թերթը դարձելց օֆիցիոզ, և փաստորեն նրան եր հանձնրված քաղաքական լրագրի հրատարակութեան մենաշնորհը: Շուտով Բուլգարինը դաշն կնքեց Գրեչի հետ և դառաւ «Сын отечества» ժուռնալի սեփականակիցը: Մոշոր ժուռնալի և թերթի միացումը մեկի ձեռքում նպաստեց Բուլգարինի հսկայական գրական ազդեցութեանը: Նրանից եր կտրված շատ գրքերի և շատ հեղինակների բախտը. «Северная пчела»-ի և «Сын отечества»-ի սեպենդիաները, վորոշում եյին հրատարակութիւնների առևարական հաշտութիւնը: Բուլգարինն իր այդ ազդեցութիւնից ոգարվում եր անսկզբունքաւորեն, անձնական շահերից յեկնելով: Յերկար ժամանակ Պուշկինը Բուլգարինի հետ նորմալ հարաբերութիւններ եր պահպանում, թեև արհամարհանքով և զգվանքով եր վերաբերվում դեպի նրա գրական և քաղաքական արարքները: Բայց Պետերբուրգում նր, թեկուզ և զուտ գրական, թերթերի յերեման գալը Բուլգարինի համար մրցակից եր ստեղծում: «Литературная газета»-ն շուտով արժանացաւ «Северная пчела»-ի անբավականութեանը, և Բուլգարինն սկսեց սխտեմատիկաբար հալածել Պուշկինին: Ահա որինակ, «Северная пчела»-յում ինչպիսի արտահայտութիւններով եյին գրում «Մնեգինի» VII գլխի մասին, վոր լույս եր տեսել 1830 թ. մարտին. «Մի հատիկ միտք չկա այդ ջրալի VII գլխում» վոչ մի զգացմունք, դիտելու արժանի և վոչ մի պատկեր: Անկումը կատարյալ ե: Յեմ այսպես, մեր հույսերը խորտակվեցին: Մենք կարծում եյինք, թե «Ռուսկան և Ալուգմիլայի» հեղինակը սլացաւ կովկաս, պոեզիայի բարձր զգացմունքներով համակվելու, նոր տպավորութիւններով հարստանալու և քաղցրանուշ յերգերով

ժամանակակից ուռս հերոսների մեծ սխրագործութիւնները հաշորդներին հազորդելու համար: Մենք կարծում եյինք, վոր արևելքի մեծ դեպքերը, վորոնք աշխարհը զարմացրին և Ռուսաստանի համար ձեռք բերին բոլոր լուսավորված ժողովուրդների հարգանքը, կզրգուն մեր բանաստեղծների հանձարը — և մենք սխալվեցինք: Հռչակավոր քնարները մնացին լուռ, և մեր պոյեզիայի անապատում նորից յերևաց Ռնեգինը, դժգույն, թույլ... Մարդու սիրտ ե ցավում, յերբ նայում ես այդ անզույն պատկերին»: Պուշկինի և Բուլգարինի 1830 թ. ընդհարումից առանձնահատուկ նշանակութիւն ունեն յերկու եպիգրաֆ: «Литературная газета»-ի № 20-ում «Մնեգինի» VII գլխի մասին «Северная пчела»-ի հայտնած կարծիքի աւթիվ Դելվիգի գրած դիտողութիւնից անմիջապես հետո զետեղված եր Պուշկինի անստարագիր թղթակցութիւնը Փարիզի խուզարկու Վիգոկի հիշատակարանի մասին: Վիգոկի մասին կարծիք հայտնելու ձևի տակ Պուշկինը տվեց Բուլգարինի ջախջախիչ բնութագիրը: Այդ բնութագիրն այնքան հաշոգ եր, վոր բոլորը Վիգոկի խզձալի պատկերում տեսան Բուլգարինի դեմքը, և այդ որվանից Վիգոկ ածականը (սովորաբար «Ֆիզյարին» մակդիրի հետ միացած) ամուր կպաւ Բուլգարինին:

Բուլգարինն իր հերթին «Северная пчела»-յում տպեց հետևյալ պատկերը. «Բայրոնի լորդութիւնը և նրա արխտոկրատական արտառոց վարմունքները աստված գիտե, թե ինչպիսի մտածելակերպի հետ միասին դանազան յերկրներում շատ պոյետները և բանաստեղծների խելքահան արին, և նրանք բոլորն ել սկսեցին խոսել 600-ամյա ազնվականութեան մասին: Բարի հաշտութիւն ենք ցանկանում: Տա աստված, վոր դա ծնեցներ հռչակավոր նախնիքներին (յեթե վորևե մեկն այդպիսին ունի) արժանի լինելու ցանկութիւնը. սակայն դա վոչ արձակը

և վոչ ել վոտանավորներն ավելի հարթ և խելացի չեյին գարձնում: Բացահայտ կերպով պատմում են, վոր ինչ վոր բանաստեղծ, նույնպես Բայրոնի հետեւողներէց, իսպանական Ամերիկայում ծագելով մուլատից կամ, չեմ հիշում, մուլատուհուց, սկսեց ապացուցել, թե իր նախնիքներից մեկը նեգրերի արքայորդի յե լեղել: Քաղաքի խորհրդարանում վորոնումներէց հետո գտան, վոր հին ժամանակ այդ նեգրի համար դատ ե յեղել մի նավապետի և նրա ողնականի միջև. նրանցից յուրաքանչյուրն ուզում եր յուրացնել այդ նեգրին. նավապետն ապացուցում եր, վոր նա այդ նեգրին գնել ե մի շիշ ումով: Այն ժամանակ արդյոք մտածում եյին, վոր այդ նեգրին ընդունում ե մի բանաստեղծ: Vanitas vanitatum (ունայնությունն ունայնությանց)»: Այդ փոքր հողվածում Բուլգարինը ակնարկում ե Պուշկինի 1825 թ. Բեստուժեվին գրած մասնավոր նամակը, Պուշկինի գրած ծանոթությունը «Ռնեգինի» և գլխի առթիվ, վորտեղ խոսվում ե Հաննիբալի և ժուռնալային քննադատության մասին, վորը հենց այդ ժամանակ ուժեղ կերպով քննում եր Բայրոնի և Պուշկինի պոյեզիաների հարաբերակցության հարցը: Պուշկինը խիստ հիմանդազին կերպով ընդունեց այդ հողվածը և շուտով պատասխանեց «Моя родословная» վոտանավորով, վորը տարածեց ձեռագրով: Այս հարվածի հետ միաժամանակ Բուլգարինը հարձակում սկսեց «Литературная газета»-ի «արխատուկրատական» ուղղության դեմ, վորտեղ աշխատում եյին բարոն Դելվիգը և իշխան Վյազեմսկին: Վորովհետև գեկաբրիստների ապստամբությունը ազնվականների շարժում եր, ուստի կառավարությունն այդ տարիներին առանձնապես վախենում եր ազնվականների խմբավորումներից և ազնվականների ոպողիցիայից, վորոնք կշարունակեյին գեկաբրիստների գործը: Բուլգարինը, առևտրական ժուռ-

նախատիկայի ներկայացուցիչը, իր հույսը դրել եր ազնվականությանը թշնամի սոցիալական շրջաններէ վրա, վորոնք դեռ ևս քաղաքականապես չեյին ձեւակերպվել և ընդունում եյին արքունի պատրիոտիզմի իդեոլոգիան: «Литературная газета»-ի ազնվական բնույթի վրա կատարած հարձակմանը ուղեկցում եր քննադատությունն ալից և քաղաքական մատնության բնույթ եր կրում: Այս ժուռնալային կովում, վորպես Բուլգարինի դաշնակից, հանդես յեկավ Ն. Պուլեվոյը, «Московский телеграф»-ի հրատարակիչը: Դա արմատական ժուռնալ եր, վորի քաղաքական դիրքերն ավելի ձախ եյին, քան Պուշկինի դիրքերը: Պուլեվոյը վաճառականի վորդի յեր և արդեն կանգնած չեր ուս ազնվական լիբերալիզմի դիրքերի վրա: Մինչև 1830 թ. նրա ժուռնալին Պուշկինը համակրում եր. «Московский телеграф»-ին աշխատակցում եր Վյազեմսկին: Բայց 20-ական թվականների վերջին Վյազեմսկին Պուլեվոյից բաժանվեց, իսկ 1830 թ. «Литературная газета»-յում յերեվաց միքանի հողված, ուղղված Պուլեվոյ-պատմաբանի դեմ: Պուշկինն ու նրա բարեկամները խորը հարգանք եյին պահպանել դեպի Կարամզինը, վորպես պատմաբանի: «Ռուս ժողովրդի պատմությունը» գրելու Պուլեվոյի փորձն ընդունվեց վորպես վոտնձգություն Կարամզինի հեղինակության դեմ: Վեճը Կարամզինի մասին միմիայն սքողում եր ավելի խոր տարածայնություն պատմական հայացքների եյության, մասնավորապես ուսական ֆեոդալիզմի հարցի վերաբերյալ: Մակայն Պուլեվոյի դեմ ուղղված ժուռնալային բանավեճում վոչ Վյազեմսկին, վոչ ել Պուշկինը իրենց դիրքերը ճշտորեն չեյին ձևակերպում: Այդ հողվածներն արագացրին Պուշկինի և Պուլեվոյի հարաբերությունների խզումը: Պուլեվոյը դեռ ևս տարեակզբին քննադատում եր «Ռնեգինի» VII գլուխը հասարակական ձախ դիրքերից. «Յեթե Պուշկինը լիներ այսպիսի

գրականութեան մեջ, այնպիսի հասարակութեան մեջ, վորտեղ ամեն ինչ վերապրած է, բացատրված ամեն ինչ, վոր հանգամանքներն ստիպում են մտցնել իր պոեզիայի մեջ նա շատ բարձր աստիճանի վրահղանգներ: Մենք և քաղաքացիական կենցաղում, և բանաստեղծական զգայութիւններում գեռ ևս յերելսա յենք: Իսկ Պուշկինը ուստական զգացմունքներից կարող է ազատվել, յեթե իր հայացքն ուղղի հասարակական կյանքի վրա, այդ պատճառով էլ Բայրոնի համեմատութեամբ նա այնքան թույլ է յերևում»: Այդպէս Պուշկինը դրվեց ուստական հասարակական կարգի հետաքննաց ձևերի մակարդակին, և նրան մեղադրում է ինչ, վոր նա չի ցանկանում այդ կարգից բարձր լինել, հակառակ Բայրոնի, վորի քաղաքական գործունեությունը հայտնի յեր: Պուշկինի հոգվածներից վերափորված, Պուշկին ավելի խստորեն հանդես յեկավ:

Նա Պուշկինի դեմ գրեց մի քանի պարողիաներ, իսկ «Послание к вельможе» վոտանավորի առթիվ Պուշկինին մեղադրեց աշխարհիս հզորներին հաճոյանալու ձգտման մեջ:

Հարտ նայեց նա աղմուկին,
Յե՛վ տնքոցին ուստի գագան,
Ուշ չարձրեց նա՛ բողբոհն,
Ձա՛հել, խիզախ արծվի նման:
Նա լաբերին խփեց վոսկի,
Յերկրից հեռու վեր սավառնեց,
Իշխանի տան շեմքին նստեց,
Յե՛վ հոյակապ յերգեր անգին
Հիացմունքով ուրախ յերգեց:

Այսպէս 2 տարի անց Պուշկինը շարունակում էր իր պարողիաները, վոր սկսել էր գեռ I ևս 1830 թ.: «Литературная газета»-ի «արիստոկրատիզմի» հարցում Պուշկինը դաշն կնքեց Բուլգարինի հետ: Բայց յեթե Բուլգարինը այս հարցում Պուշկինի վրա հարձակվում էր աջից, Պուշկինը նրա դեմ գուրս յեկավ ձախից:

1830 թ. կեսերին հասարակական-քաղաքական գրությունը խիստ փոխվեց: Հուլիսին Փրանսիայում տեղի ունեցավ հեղափոխութիւն, վորը վերացրեց Բուրբոնների Ֆեոդալական կղերական ուստիւմը և իշխանութիւնը հանձնեց խոշոր բուրժուազիայի ձեռքը: Այդ հեղափոխութիւնն արձագանքեց Յեվրոպայի շատ յերկրներում:

Նիկոլայ I յեվրոպական դեպքերից շատ վախեցավ և պատրաստվում էր խառնվել հոգուտ Բուրբոնների տապալված ուստիւմի: Դրան խանգարեց լեհական ապստամբութիւնը, վոր պայթեց 1830 թ. նոյեմբերի վերջին և առաջ բերեց յերկարատև պատերազմ, վորը վերջացավ 1831 թ. սեպտեմբերի 21-ին Նիկոլայի զորքերի հաղթանակով:

Պուշկինն առանձին ուշադրութեամբ հետեւում էր Արեմուտքի հեղափոխական շարժման գարգացմանը: Հուլիսյան հեղափոխութիւնն ավարտեց այն պատմական դարաշրջանը, վոր սկսվել էր 40 տարի առաջ Փրանսիայում հին ուստիւմի տապալումով: Այն դեպքերը, վորոնց Պուշկինն իր ամբողջ նախորդող կյանքում ականատես էր յեղել, կարծես բնական լուծման հանգեցին: Պուշկինը, վոր 1830 թ. ապրում էր մերթ Մոսկվայում, մերթ Պետերբուրգում, առաջին տեղեկութիւնները հեղափոխութեան մասին ստացավ Պետերբուրգում:

Նույն 1830 թ. խոշոր փոփոխութիւն տեղի ունեցավ Պուշկինի անձնական կյանքում: Ապրիլին Պուշկինը նոր առաջարկութիւն արեց Նատալիա Նիկոլանա Գոնչարովային և այս առաջարկութիւնն ընդունվեց: Ճիշտ է, Գոնչարովայի հարազատները Պուշկինից պահանջեցին պաշտոնական վկայական ներկայացնել Բենկենդորֆից, վոր ինքը վոստիկանական հսկողութեան տակ չի գտնվում, և հետո սկսվեցին յերկար բանակցութիւններ նյութական ապահովութեան մասին: Այդ նպատակով հայրը Պուշկինին ավեց իր նիժեգորոզսկի կալվածքի մի մասը՝ կիստենեկա գյուղը, վոր Աերգեյ Նիկոլանային պատկանած Բուլգինո գյուղից հեռու չէր գտնվում: Նյու-

Թական գործերը կարգի բերելու և սեփականութիւնն ընդունելու համար Պուշկինը Մոսկվայից մեկնեց Բոլդինո 1830 թ. սեպտեմբերի 1-ին: Մեկնելուց առաջ նա ընդհարձեց Գոնչարովայի մոր հետ և ամուսնութեան հարցը նորից բաց մնաց:

1830 Թ. ԱՇՈՒՆԸ ԲՈԼԴԻՆՈՅՈՒՄ

Բոլդինոյում Պուշկինը մնաց մինչև զեկտեմբեր ամսի վերջերը, անցկացնելով այդտեղ համարյա լրիվ յերեք ամիս: Բոլդինոյում նրան ստիպեց մնալ խոլերան, վոր բռնել էր ամբողջ մերձվոլգյան շրջանը: Մահմանված է յին կարանտիններ, վորոնցով անցնելը շատ դժվար էր: Խոլերան առաջ բերեց գյուղացիական խռովութիւններ, վորոնց վկա յեղավ Պուշկինը: «Ժողովուրդը ճնշված է և զրգոված: Այս 1830 թ. մեզ համար տխուր տարի յե»,— Մոսկվա վերադառնալով գրում է Պուշկինը Յե. Խիտրովոյին:

Աշունը Պուշկինի համար միշտ էլ առանձնապես լարված ստեղծագործութեան ժամանակ էր: Բոլդինոյի աշունը, վոր զուգահեռեց Պուշկինի նյարդային չափազանց լարված շրջանին, աչքի յե ընկնում բացառիկ բեղմնավորութեամբ: Այդ յերեք ամսում գրած յերկերի ցուցակը միայն տալիս է պատկերացում նրա բացառիկ ստեղծագործական աշխատանքի մասին: «Իեզ կասեմ (վորպես գաղտնիք), — գրում էր Պլեսնյովին Մոսկվա վերադառնալուց հետո, — վոր Բոլդինոյում յես գրում է յի այնպես, ինչպես վաղուց արդեն չե յի գրել: Ահա թե ինչ էմ բերել այստեղ. Ոնեգինի վերջին յերկու գլուխները, 8-րդն ու 9-րդ տպագրութեան համար լրովին պատրաստ: Մի վիպակ, զրված ոկտավներով (400 տող), վորը կտանք anonyme: Միքանի զրամատիկական պատկերներ կամ փոքրիկ վողբերգութիւններ, այն է՝ «ժլատասպետը», «Մոցարտն ու Սալլերին», «Խնձուկը ժանտախտի պահին» և «Դոն ժուանը»:

Բացի զրանից գրել էմ մոտ 30 մանր վոտանավորներ: Լավ: Սա զեռ բոլորը չե (խիստ գաղտնի, միայն քեզ համար), յես գրել էմ արձակով հինգ պատմվածք, վորոնցից Բարատինսկին վրնջում է և ցատկոտում, և վորոնք նույնպես կտպագրենք anonyme: Իմ անունով չի կարելի վորովհետև Բուլգարինը կհայհոյի»: Պուշկինի ցուցակը զեռ լրիվ չե. նա թվում է միայն տպագրութեան համար պատրաստ գործերը: Փաստորեն այդ ցուցակին պետք է ավելացնել անավարտ՝ «Գորյուխինո գյուղի պատմութիւնը», վոր հղացումով կապված է «Բեկլինի պատմվածքների» հետ, «Ոնեգինի» 10-րդ գլուխը, վոր այրվեց նույն Բոլդինոյում, և մեծ թվով հոգվածներ և զիտողութիւններ «Литературная газета»-ի համար, վորոնց թվում մի մեծ հոգված, վոր մնացել է սեագիր և հանդիսանում է պատասխան վերջին տարիների իր քննադատներին:

Նման արտադրողականութիւնը կարելի յե բացատրել միայն նրանով, վոր Բոլդինոյում Պուշկինը վերանայեց իր հին մտահղացումները և վերջնականապես մշակեց նախկին տարիների ուրվագծերը (ըստ յերևույթին, մանավանդ 1828 և 1829 թ. թ.): Բոլդինոյի աշնանով բնականորեն փակվում է Պուշկինի ստեղծագործութեան մի ամբողջ շրջան և ճանապարհ է հարթվում նոր շրջանի համար:

Բոլդինոյում գրած յերկերի հիմնական ցիկլը, — փոքր վողբերգութիւնները, — կապված է Պուշկինի զրամատուրգիական փորձերի հետ, վորոնք հասնում են մինչև 1825 թ. «Բորիս Գոգունովի» ստեղծման տարին: Բազմաթիվ մերժումներից հետո Նիկոլայի կողմից այդ վողբերգութիւնը վերջապես թույլատրվեց տպագրելու և, յերբ Պուշկինը Բոլդինոյում էր, տպագրվում էր Պլեսնյովի հսկողութեամբ: Տպագրութեան վերաբերմամբ վերջին ցուցմունքները Պուշկինը Պլեսնյովին ուղարկում էր Բոլդինոյից:

«Բորիս Գոգունովը» նա հղացել էր արևմտա-յեվրո-

պական (ավելի ճիշտ՝ ֆրանսիական) ուսմանտիկական բա-
նավեճի շրջանում: Տիրապետող գրական ժանրն այն ժա-
մանակ վողբերգությունն էր և ուսմանտիկները վերջ-
նական հաղթանակ կարող ելին տանել միայն թատերա-
կան ճակատում հաղթելուց հետո: Պուշկինը կողմնակից էր
ուսմանտիկներին հայացքներին, համամիտ էր նաև Շեքսպիրի
առաջ նրանց խոնարհվելուն: Պուշկինը «Բորիս Գոգոլենովը»
գրեց մինչև Ֆրանսիայում ուսմանտիկական վաղբերգու-
թյունների փորձերը: Քանի ղեռ Պուշկինի վողբերգու-
թյունը արգելքի տակ էր գտնվում, շատ բան փոխվեց:
Արգեն 1827 թ. վ. Հյուգոն հանդես լեկավ «Կրոմվյուր»
ուսմանտիկական վողբերգությամբ, վորը հրատարակեց մի
յնգարձակ առաջարանով, մի յուրատեսակ գրական մանի-
ֆեստով: Այդ փորձի առթիվ յեղած կարծիքների փոխա-
նակումը և նրա տեսական հիմնավորումը շատ բան պար-
զեց: 1829 թ. և վերաբերում վ. Հյուգոյի «Նոնանի» պիեսը,
վոր բեմադրվեց 1830 թ. փետրվարի 25-ին: Իրանից առաջ
բեմի վրա յերեվաց Ա. Դյումայի «Հենրիխ III» դրաման և
Շեքսպիրի «Սթեյվոյի» թարգմանությունը, վոր կատարել
էր Ալֆրեդ դե Վլյնյին: «Նոնանի» հաղթանակը փոխեց
գրական իրադրությունը: Փոխվեց նաև հենց ուսմանտիզմի
բնույթը: 20-ական թվականների սկզբին ֆրանսիական
ուսմանտիզմը հակվում էր զեպի քաղաքական ունակցիան
և տոգորված էր կրոնական և միապետական տենդենցներով:
20-ական թվականների կեսին տեղի ունեցավ նրա
վերածնունդը, վորը նրան նոր ճանապարհի վրա դրեց և
ապահովեց նրա հաղթանակը գրական և հասարակական
ճակատում. ուսմանտիկները, հանձինս վ. Հյուգոյի և նրա
ժերձավոր համախոհների, դաշն կապեցին լիբերալիզմի հետ
և ուսմանտիզմը հայտարարեցին լիբերալիզմ գրականու-
թյան մեջ: Այսպիսով, 1830 թ. մտտ ուսմանտիկական դրա-
մայի ըմբռնումն այն չէր, ինչ վոր էր 1825 թ.: Վերջապես

յերեվան յեկան ուսմանտիկական դրամայի նոր ձևեր,
մասնավորապես յերիտասարդ Ա. Մյուսսեյի ստեղծագոր-
ծության մեջ, վորի յերկերին Պուշկինը մեծ համակրան-
քով էր վերաբերվում: 1827 թ. մտտ Պուշկինը լուրջ կեր-
պով ուսումնասիրեց անգլերեն լեզուն և հնարավորութուն
ստացավ լայն չափով բնագրերով ծանոթանալու անգլիա-
կան գրականության նոր ուղղություններին: Ըստ յերե-
վույթին 1830 թ. և վերաբերում նրա ծանոթությունը
անգլիական միջանի բանաստեղծների, վորոնց թվում
նաև Բարրի Կոբնուոլին, վորի դրամատիկական փորձերը
մտտնում էին դրամայի այն պատկերացմանը, վոր այդ
տարիների ընթացքում ստեղծվել էր Պուշկինի մտտ: Չնա-
յած իր բոլոր համարձակ շեղումներին «կանոններից»,
«Բորիս Գոգոլենովը» կախումն ունեւր կլասիկ տրագիցիա-
ներից: Գոգոլենովի պատկերը ըստ տրագիցիայի թատե-
րական էր: Հակադիր գղացմունքների պայքարը, դեպքերի
ճակատագրական ընթացքը, — այդ բոլորն արձագանքում
էր կլասիկ թատրոնի ձևերով: Այդ տարիների ընթացքում
Պուշկինի գրական հայացքները խիստ փոխվեցին: Յերբ
«Գոգոլենովը» լույս տեսավ, նա կարդալով իր վողբերգու-
թյունը, գրում է վ. յագեմսկուն. «Տարորինակ է թվում,
յերբ մարդ կարդում է շատ բան իր տպագրած գործերից»:
Բնական է, վոր Բոլդինոյում Պուշկինը մշակեց իր
դրամատիկական մտանդացումները, տալով վողբերգա-
կան յերկեր, վորոնք ավելի համապատասխան էին իր այդ
ժամանակվա համոզմունքներին: Ըստ յերևույթին այդ
վողբերգությունների (բացի թարգմանական «Մնճուք
ժանտախտի պահին»-ից) հղացումը համում է ղեռ ևս
մինչև 1826 — 1828 թ. թ., բայց հազիվ թե Պուշկինը
շատ բան գրած լինելու: Այդ գործերն ամբողջովին վերա-
բերում են հենց Բոլդինոյի աշնանը: Նրանց մեջ արտացոլ-
վել է վողբերգական բնավորությունները նոր ձևով պատ-

կերելու Պուշկինի ձգտումը: Իոն-ժուանը և ժլատը բեմի վրա նոր տիպեր չէին: Այդ պիեսներում Պուշկինը իբր մշակումը հակադրում է հաստատուն տրագիցիային, մասնավորապես այդ պատկերների Մոլիերի գրամատիկական տրակտովիային: Միասնական կրթի կլասիկ սկզբունքին Պուշկինը հակադրում է բնավորութայն լայն պատկերման սկզբունքը, վորի մեջ գերիշխող կերքը համակցվում է հոգեկան կազմի բազմազան կողմերի հետ: Սրանից բխում է Պուշկինի գրամատուրգիայի հոգեբանական ուղղությունը: Այդ փոքր վողբերգությունների հիմնական պրոբլեմը մարդու անհատական վարմունքն է: Պուշկինի համար կենտրոնական տեղ է բռնում բանաստեղծ-արվեստագետի վարմունքի պատկերման խնդիրը («Մոցարտն ու Սալերին»): Բողբինյան լերկերի մյուս ցիկլը, վոր նորություն էր Պուշկինի գրական սխտեմում, հանդիսանում են «Բեկիների պատմվածքները»: Մինչև 1830 թ. Պուշկինն արձակվել էր դիմում, իսկ այստեղ նա միանգամից տվեց հինգ պատմվածք, վորպես նախաբան տալով յերեվակայական պատմող Իվան Պետրովիչ Բեկիների ֆիկտիվ կենսագրությունը, վոր մի համեստ կալվածատեր էր և պարզասրտորեն գրի յեր առել իր լսած՝ ուշադրության արժանի պատմվածքները: Պատմվածքի մեջ յերեվակայական հեղինակ մտցնելու սովորությունը նոր գրականութայն մեջ ծագում է Վոլտեր Սկոտից, իսկ 20-ական թվականների վերջին այդ ձևն արդեն լայն տարածվեց, մանավանդ ֆրանսիական գրականութայն մեջ: Այդ գրական կենսագրությունները սովորաբար հեղնական բնույթ էին կրում, և նրանց մեջ յերգիծաբանորեն դուրս էր բերվում դարաշրջանի համար բնորոշ վորևե տիպ: Ֆրանսիայում այդ տեսակ կենսագրութայն առաջաբաններին, վորպես քաղաքական սատիրայի, դիմելը սովորական էր: Պուշկինն իրեն հերոս ընտրեց միջակ, պարզամիտ, վոչ մի բանով աչքի

չընկնող մի կալվածատիրոջ: Ռուսական ճորտատիրական գյուղի պատկերները, վոր նա տեսել էր Նիժնի Նովգորդի նահանգի հարավային մասի շրջանում, դրդեցին նրան ընտրելու իր հերոսը: Ինչ վերաբերում է բուն պատմվածքներին, ապա նրանք Բեկիների պատկերի հետ անմիջական կապ չունեն, ուստի Պուշկինը կանխապես մատնանշեց, վոր Բեկիները միայն գրի չե առել ուրիշներ յպատմվածքները և համառոտակի, մի բնորոշումով բնութագծեց առանձին պատմվածքների յուրաքանչյուր պատմողին: Այդ ժամանակ նորավեպը համեմատաբար յերիտասարդ ժանր էր: Պուշկինյան տիպի կենցաղային պատմվածքները, իհարկե, վոչ մի ընդհանուր բան չունեցին խրատական կամ բարքազրական բնույթի կարճ պատմվածքների հետ, վորոնք ծագում էին XVIII դարում: Նրանց չի կարելի նույնիսկ ծագած համարել այնպիսի համեմատաբար գրական յերեվություններից, ինչպիսին Կարամզևի սենտիմենտալ պատմվածքներն էին («Бедная Лиза» և այլն):

Տեսածի հիշողությունների տիպի նման պատմվածքները, դեպի շարադրածը մի փոքր հեղնական վերաբերմունքով, յերևում են միայն 20-ական թվականների վերջերին ումանտիկ պատմվածքի զարգացման հետ գուրգրնթաց: Ֆրանսիայում այդ ժամանակ խիստ տարածված էին Նապոլեոնի արշավանքների մասնակիցների հիշողությունների ձևով գրված պատմվածքները: Ռուսաստանում մինչև 1830 թ. արդեն հաջողություն ունեն Մալինսկու (Ալեքսանդր Բեստուֆեվի) համապատասխան պատմվածքները: Պուշկինի այս պատմվածքները նրանցից տարբերվում են ումանտիկ մի հետքերի կատարյալ բացակայությամբ: Նրանց մեջ համակցվում են ֆարուլայի (մեծ մասամբ վոչ նոր) հետաքրքրակա՞նությունը պատմելու հատուկության և կենցաղի պատկերման պարզության հետ: Դեպքերը նրանց մեջ վոչնչով նշանավոր չեն և բնավորու-

Թյուններն ընդհանրապես սովորական են: Այս բոլորը զարմանալի կերպով հակասում էր հարավային պոյեմներէ ումանտիկ ուղղութեանը:

Ի. Պ. Բելկինի պատմվածքներէ պլանի մեջ Պուշկինը միաք եր հղացել և նույն Բելկինի անունից մասամբ գրել էր «Գորյուխինո գյուղի պատմութեանը», վորի մեջ պատմվածքի պարզիական բնույթն արդեն ամբողջովին մերկացված է և վեր է ածվում սոցիալ-քաղաքական սատիրայի: «Գորյուխինո գյուղի պատմութեանը» պարոդիայի յէ յենթարկում «Պատմութեանների» ընդհանուր պլանը: Հնարավոր է, վոր Պուշկինն ամենից առաջ ինկատի ուներ Ն. Պոլեվոյի «История русского народа» աշխատութեանը, բայց հակառակ իր կամքի նա պարոդիա յեր գրում ամեն մի պատմութեան վրա, այդ թվում նաև Կարամզինի «История государства Российского» աշխատութեան վրա: Ծիշան ասած դա ընդհանրապես Ռուսաստանի պատմութեան պարոդիան էր, ճորտատիրական Ռուսաստանի պարոդիան իր ավանդութեաններով, վերցրած մի գյուղի պատկերացումով: Գորյուխինոն շատ է նման Բոլդինոյին, և Պուշկինն այստեղ անսահմանափակ կերպով ոգտվել է իր անմիջական դիտողութեաններից այն գյուղերի վրա, վոր ավերվում էին կալվածատիրական կառավարման հեռանքով: Այդ «պատմութեանից» մնացել է միայն սկիզբը. մնացածի մասին կարելի չէ դատել պահպանված պլաններով. ըստ յերհույթին շարունակութեանը գրված չեր: Բայց արդեն այն քիչը, վոր Պուշկինը գրել էր, տալիս է գյուղացիական ճորտատիրական գյուղի վառ պատկերը, ընդհանրացրած մինչև ամբողջ Ռուսաստանի պատկերացումը:

Պարոդիական պատմվածքի նույն պլանով Պուշկինը գրել է «Տնակը Կոլոմնայում» պատմվածքը ոկտավներով, վորը Պուշկինը պատրաստվում էր նախապես տպագրել անո-

նիմ: Այդ պատմվածքը մտածված էր վորպես պատասխան քննադատներին, մտանավորապես «Северная пчела»-յին, վորը պահանջում էր, վորպեսզի Պուշկինը յերգի ռազմական հերոսներին: Ծիշտ այնպես, ինչպես վոր «Բելկինի պատմվածքներ»-ում Պուշկինը խուսափեց մողա դարձած ռազմական հիշողութեաններից, փոխարինելով այն քաղքենիական կենցաղի պատկերներով, այնպես էլ «Տնակը Կոլոմնայում» պատմվածքի մեջ նա կանգ առավ մի անեկ դոտի վրա, վոր վերագրվել էր Պետերբուրգի մանր քաղքենիական կենցաղին: Պատմվածքի պոլեմիկական բնույթը մերկացված է մի յերկար շեղումով, վորի մեջ Պուշկինը պատկերում է ժուռնալային կյանքի պատկերը: «Տնակը Կոլոմնայում»-ով Պուշկինը պաշտպանում էր սեփական կամեցողութեամբ գեղարվեստական թեմաներ ընտրելու իր իրավունքը: Հետագայում նա վերադարձավ այդ հարցին և այն ավելի պարզ կերպով ձևակերպեց, յերբ տշխատում էր «Պղնձե ձիավորի» և «Յեզիպտական գիշերների» վրա:

Բողիկոսյում Պուշկինն ավարտեց «Յեվգենի Ռենգինը»: Յերկի յերկարատև ստեղծման ընթացքում այդ վեպի բնույթն ու պլանը խիստ փոփոխվում էր. դեռ ևս վեցերորդ գլուխն ավարտելով Պուշկինը վեպի շարունակութեան պլանը թողրովին այլ կերպ էր պատկերացնում, քան այն իրականացվեց: Առաջին հրատարակութեան մեջ վեցերորդ գլխից հետո գրված էր՝ «վերջ առջին մասի», այսինչև կարելի չէր կարծել, վոր դրանց կհաջորդի ևս մի այդպիսի վեց գլուխ պարունակող մաս: Հնարավոր է, վոր յոթերորդ գլխի անհաջողութեանն ստիպեց Պուշկինին կրճատելու պլանը: Այս պատճառով կամ թե նրա համար, վոր Պուշկինը տվյալ մտահոգացման սահմաններում թողր գեղարվեստական հնարավորութեաններն սպառված էր համարում, բայց նա կանգ առավ իններորդ գլխի վրա:

իսկ հետո վերջնական խմբագրութեան մեջ նա գրածից
դուրս հանեց մի գլուխ, հասցնելով վեպը ութը գլուխ-
ների (դուրս պցած գլխից մնացել են հատվածներ՝ «Ոսե-
գինի ճանապարհորդութիւնները»)։

Այդ վերջին յերկու գլուխը տալիս է յին՝ Ոսեգինի
Ռուսաստանում կատարած ճանապարհորդութեան պատկերը՝
ճանապարհորդութիւնը Ոսեգինին բերեց Պետերբուրգ, և
այստեղ Պուշկինը պատկերեց Պետերբուրգի բարձրաշ-
խարհիկ հասարակութիւնը՝ արդյունք 1828—1830 թ. թ.
իր Պետերբուրգում ապրելու։ Այսպիսով «Յեզգենի
Ոսեգինում» արտացոլվեց Պուշկինի ամբողջ անձնա-
կան կենսագրութիւնը, սկսած իր առաջին անգամ
հարավ աքսորվելուց առաջ Պետերբուրգում ապրելուց,
այսինքն 1819 թվից։ Սակայն զրանից չի հետևում, վոր
«Յեզգենի Ոսեգինը» ինքնակենսագրական յերկ է։ Պուշ-
կինի ինքիբն եր՝ տալ իրեն ժամանակակից Ռուսաստանի
լայն պատկերը ավելի տիպիկ ուրվագծերով։ Այդ ուրվա-
գծերը կազմում են պատմական նշանակութիւն ունեցող
ամբողջական բնութագիր։ Բայց Պուշկինն իր ձգտման
մեջ ղեպի կոնկրետութիւնը և ունիւրով գլխավորապէս
գրել է տեսածների մասին, այն մասին, վորին նա ինքը
վկա յե յեղել։ Իբր դիտողի՝ նրա բացառիկ սրտեսու-
թիւնը թույլ եր տալիս լայն ընդհանրացնող բնույթի
պատկերներ տալ։ Իրան Պուշկինը հասնում եր և՛ վեպի
հիմնական գործողութեան զարգացման, և՛ իր հերոսները
ուրվագծման, և՛ կենցաղի նկարագրման մեջ՝ բառի նեղ
իմաստով։ Հենց այդ պատկերումները, վոր հանդիսանում են
շեղումներ գործողութիւնից, կազմում են վեպի գլխա-
վոր մասը։ Հետագայում բարեկամներին ուղղված ուղեր-
ձի սեղանութիւններում, վորոնք նրան վեպը շարունա-
կելու խորհուրդ էլին տալիս, նա այսպէս է բնորոշում իր
աշխատանքը «Ոսեգինի» վրա. «Նրա ազատ մեծածախք

ըջանակի մեջ դու կտեղավորես մի շարք պատկերներ,
բաց կանես գիարաման» կամ՝

Իու նկարի պերճամոլին,
Քո սիրելի որիորդներին,
Կամ պատերազմ, պալատ, խրճիթ,
Ձեղուն ու խուց, հարեմ ու պար...

Հերոսի հոգսը նրան ավելի քիչ եր զբաղեցնում
Պուշկինը Ոսեգինին խելքով և վորոշ գրական հատու-
թիւններով ոժտելով, վոր անհրաժեշտ եր վեպի մեջ նրան
հատկացրած դերի համար, միևնույն ժամանակ նրան բնու-
թագծում է վարպետ «Հարուղչան թիկնոցով մոսկվացու»,
«Նորածե բառերի լիակատար բառարան» և նույնիսկ պար-
զապետ վորպետ «պարողի»։ Մի փոքր այլ կերպ է հղաց-
ված Տատիանայի պատկերը, մի պատկեր, վորին Պուշկինը
ձգտում եր ավելի մեծ գրավչութիւն տալ։ Այդ պատկերն
աստիճանաբար, վեպի շարժման ընթացքում, հետ է մղում
և իրենով ծածկում Ոսեգինին, վորի մեջ Պուշկինը սյուժեյի
զարգացման գուզնթաց լիակատար ներդաշնակութիւն
է պահպանում. վեպի առաջին գլուխներում Ոսեգինի ուն-
ցած գերազանցութեանը հակադրված է Տատիանայի բա-
րոյական իշխանութիւնն ու հաղթանակը վերջին տեսա-
րանում։

Պուշկինի սկզբնական մտահղացման մեջ «Ոսեգինը»
չեր վերջանում Տատիանայի հետ ունեցած նրա բացառ-
ութեան տեսարանով։ Իրան հաջորդում եր «տասե-
րորդ գլուխը», վորի մեջ Ոսեգինը հանդիպում է ղեկա-
րիստներին։ Այդ տասերորդ գլուխը Պուշկինն այրեց
Ֆոլդինոյում։

Բողոքիչան աշնան լերիքական վոտանավորները ներ-
դաշնակում են Պուշկինի ընդհանուր տրամադրութեանը։
Նրանք նույնպէս հանրագումարային բնույթ են կրում,
Վարձես թե ամփոփում են վերջին տարիների նրա գրա-
կան աշխատանքի արդյունքները։ Նրանց մեջ արտացոլ-

վեցին Ֆրանսիական, անգլիական, իտալական գրականութ-
թյան ուսումնասիրությունը: Յերևում է, թե վերջին տա-
րիներում Պուշկինը վորջան շատ է կարգացել և ուսում-
նասիրել: Բայց այդ ուսումնասիրությունը չէր տանում
գեպի այն նմանողությունը, վոր մենք գտնում ենք նրա
վաղ յերկերում:

Բնորոշ է այն, թե վորջան նույնիսկ ուսական գյու-
ղի բնության պատկերներն այդ ժամանակ ներգաշնա-
կում էյին այն վիատ տրամադրությանը, վոր արտացոլ-
վել էր «Գորյուխինո գյուղի պատմության» մեջ տրված
ճորտատիրական Ռուսաստանի բնութագրի մեջ: Այդ տե-
սակետից չափազանց բնորոշ է «Իմ կարմրաթուշ քննա-
դատ» վոտանավորը, վորի մեջ ուսական գյուղը պատկե-
րացված է վոչ այն իղիլիական տոնով, ինչպես «Յեվգենի
Ռենգլինի» յերկրորդ գլխում:

Պուշկինական բնույթ է կրում «Իմ տոհմագրությու-
նը» վոտանավորը, վոր բուլգարինյան պատկերի պատաս-
խանն է հանդիսանում: Այստեղ Պուշկինը «Литературная
газета»-յի վրա «գրական արխատկրատյա» ծագրական
մտղիբրի տակ հարձակվող ժուռնալիստները գեմ բանա-
վեճի պատրվակի տակ պաշտպանում է իր «գրական քաղ-
քենիությունը»: Վերջապես այստեղ նա ձևակերպում է
այն գրույթը, վորին հետագայում նա գանազան տեղե-
րում նվիրեց միքանի փոքր հոդվածներ ուսական կայ-
սրենբրի արքունիքում առաջադիմող բյուրոկրատական ազ-
նրվականության, վորի արխատկրատիզմը հաճախ կասկածելի
յեր, — հակադրումը հին ուսական քայքայված և անազդե-
ցիկ ազնվականությանը, վորի շարքերից հավաքագրվում
էր ուսական ինտելիգենցիան: Բուլգարինին տված պատաս-
խանը մեծացավ և դարձավ քաղաքական պամֆլետ ընդ-
գեմ ուսական հասարակության վերնախավերի, ընդգեմ
հասարակական և քաղաքական սխտեմի: Բնորոշ է

այն, վոր Պուշկինն ոգտվում է իրեն համար սովորական
քաղաքական հասկացողություններով: Նա չի մոռանում
մատնանշելու Ռոմանովների ընտրության պատմական
փաստը, հիմնվելով պետական իշխանության պայմանա-
գրային ծագման քաղաքական թեորիայի վրա: Նա չի մո-
ռանում նորից առաջ բերել Պյոտրի պատմական պատկե-
րը, վորը նա շարունակ հակադրում է Նիկոլայի պատկե-
րին: Այստեղ գուգահեռն առանձնապես ուժեղացրած է
նրանով, վոր Պուշկինը կանգ է առնում իր նախնիքների
և Պյոտրի հարաբերությունների վրա: Այս հարաբերու-
թյունների կոնտրաստն է հանդիսանում «խաղաղված քաղ-
քենու» տիպարը, ինչպես վոր նա պատկերացնում է իրեն:

Յես գրագետ եմ և բանաստեղծ,
Պուշկինն եմ յես, Մուսինը չեմ,
Հարուստ չեմ յես, դրանիկ չեմ կեղծ,
Յես ինքս եմ, կամ մի քաղքենի...

Այս քաղաքական պամֆլետը, ինչպես և «Ռենգլինի»
տասերորդ գլուխը տպագրել հնարավոր չէր: Բայց Պուշ-
կինն այն չայրեց: Ընդհակառակը, նա ամեն ջանք թափեց
վորպեսզի այդ պատասխանը Բուլգարինին տարածվի ամե-
նամեծ չափով:

Բուլգինոյում նա համոզվեց, վոր կարվածքը քայքայ-
ված է և լքված: Նա տեսավ, վոր իր ապագան կարվածքի
հետ չի կապված: Նրան չէր հաջողվի դառնալ կարվածա-
տեր, ասենք՝ նա այդ բանի համար կոչված էլ չէր:
Պուշկինի ապագան այն էր, վոր նա «գրագետ եր և բա-
նաստեղծ»: Բուլգինոն իր համար ստեղծագործության
վայր էր և վոչ թե կարվածատիրական հոգսերի:

Բացի գեղարվեստական յերկերից Պուշկինը Բուլգինո-
յում շատ քննդատական և հրապարակախոսական հոդված-
ներ է գրում, վորոնք նույնպես անցածի ամփոփման
բնույթ էյին կրում: Իր հակառակորդներին պատասխանե-
լով, Պուշկինը տվեց իր սեփական ստեղծագործության

տեսութիւնը: Իր սեփական գրվածքները մասին նրա գրած հոդվածների մեծ մասը վերաբերում են հենց 1830 թ. Բուրժինյան աշնանը:

ՅԵՐԵՍՈՒՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պուշկինը Բուրժինոյից վերադառնալուց հետո, վոր հենց նոր եր կալվածատեր դարձել, շուտով շտապեց այդ կալվածքից ազատվել: «Փոխանցագրի» պայմանների համաձայն նա հոր կենդանութիւն ժամանակ այդ կալվածքը ծախել չեւ կարող: Յեւ Պուշկինը վարվեց այնպես, ինչպես վարվում եր սնանկացած կալվածատերերի մեծ մասը. նա դիմեց խնամակալական խորհրդին, վորտեղ կալվածքն ընդունեցին գրավով 40,000 ռուբլի թղթագրամով (կալվածքը գնահատված եր 80,000 ռուբլի), վոր տարեկան տուկոսները դուրս գալուց հետո մնաց կանխիկ 38,000 ռուբլի: Կալվածքը կառավարելը Պուշկինի պարտականութիւնն եր, վորը և նա կատարում եր իր կառավարիչների միջոցով, նախ իր մոր ձորա Միխայիլ Կալաշնիկովի, իսկ հետո, յերբ պարզվեց, վոր Կալաշնիկովն անամոթաբար սկսեց կողոպտել և ավերել կալվածքը, նրան փոխարինեց Պենկովսկին, վորին հանձնարարել եր Ոսիպովան: 1835 թ. կալվածքից ստացված յեկամուտը հանձնեց իր ամուսնացած քրոջը և կալվածքը կառավարելուց բոլորովին ազատվեց:

Մոսկվա վերադառնալուց հետո սկսվեցին հարսանիքի պատրաստութիւնները, վորը տեղի ունեցավ Մոսկվայում 1831 թ. փետրվարի 18-ին: Կնոջ ծնողների հետ միասին անցկացրած կյանքը մշտական ընդհարումների առիթներ եր տալիս, և Պուշկինն շտապում ե նրանցից բաժանվել: Մալխին նա տեղափոխվեց Յարսկոյե-Սելո, վորտեղ անցկացրեց ամառը: Խորեւրայի հետեանքով, վոր այդ ժամանակ տարածված եր Պետերբուրգում, Պուշկինը մնում

և այնտեղ և տեղափոխվում ե Պետերբուրգ միայն հոկտեմբերին՝ խորեւրան վերջանալուց հետո: Այդ ժամանակվանից Պուշկինն իր ընտանիքով հաստատվում ե Պետերբուրգում:

1831 թ. աշնանը Պուշկինը նշանակվում ե ծառայութեան արտաքին գործոց կոլլեգիայում և Պետերբուրգում նրա մնալը դառնում ե պարտադիր:

Պուշկինի ամուսնութիւնից վոչ շատ առաջ մեռավ նրա լիցեյական և վերջին տարիների գրական աշխատանքի մերձավոր ընկերը՝ Դելվիգը: Դրանով իսկ խորտակվեցին Դելվիգի յերկու գրական ձեռնարկները՝ «Северные Цветы»-ն և «Литературная Газета»-ն, վոր մի փոքր մնացել եր 1830 թ. նոյեմբերին ժամանակավորապես դադարեցվելու պատճառով այն բանի համար, վոր գետեղել էլին Դելվիգի յառյակը հուլիսյան հեղափոխութեան գոհերի մասին և «Северная Пчела»-յում տպագրած կառավարական հաղորդագրութեան հետ բանավեճի բռնվելու համար: Դեռևս Դելվիգի կենդանութեան ժամանակ Պուշկինը յերագում եր «Литературная газета»-ն քաղաքական որդան դարձնելու մասին: Դա նրան կարևոր եր թվում վոչ նրա համար, վոր նա հույս ուներ ստեղծելու որդան իր քաղաքական կարծիքներն արտահայտելու համար: Նա շատ լավ հասկանում եր, վոր Նիկոլայան ռեժիմի պայմաններում հնարավոր չեւ անկախ լրագիր հրատարակել և վոր Ռուսաստանում ամեն մի քաղաքական որդան կարող եր իր գոյութիւնը պահպանել անպայմանորեն ոֆիցիոզ դառնալու պայմանով: Բայց լրագրի մեջ քաղաքական ինֆորմացիայի բաժին ունենալը նրան անհրաժեշտ պայման եր թվում ընթերցողների շրջան ստեղծելու համար. իր լրագրի համար լախ տարածում ձեռք բերելով միայն Պուշկինը կարող եր հաջողութեամբ պաշարել Բուրգարինի ազդեցութեան դեմ: 1831 թ. Պուշկինը հարց հարուցեց իրեն քաղաքական որդան — լրագիր կամ ժուռնալ հրատարակելու իրավունք

տալու մասին, բայց այդ խնդիրը հեռանք չունեցա՞վ։
Միայն մի տարի հետո, 1832 թ. հուլիսին վերջապես
թուլլովություն արվեց, բայց Պուշկինը դրանից չոգտվեց՝
Յերբ նա Պոգոդինին գրում էր այդ թուլլովության
մասին և դեռ ևս հույս ուներ ձեռնարկելու այդ թերթի
հրատարակությունը, նա այսպես բնութագրեց այն, ան-
վանելով առևտրական ձեռնարկություն. «քաղաքական մա-
սը — պաշտոնական աննշան» (սեպտեմբերյան մեջ ավելի
մանրամասն է. «արտասահմանյան լուրեր առանց բարո-
յախոսական ծանոթությունների և խորհրդածություն-
ների, վորքան կարելի յե անգույն, առանց շարժման»
առանց նպատակի. ներքին լուրեր անձրևների, բերքի մա-
սին և այլն»): Այսպիսով, Պուշկինը յերբեք չէր մտածում
գառնալ կառավարական քաղաքականության բացահայտ-
իզեցողոգ, և յերբ 1832 թ. առիթ ներկայացավ լրագիր հրա-
տարակելու, այստեղ էլ նա չվորոշեց քաղաքական դեպքե-
րը պաշտոնապես իր վրա վերցնելու անհրաժեշտություն-
ը և, ըստ յերեվոլյութին, ռֆիցիոգ հրապարակախոս գառ-
նալ չցանկանալը անվճռականության պատճառներից մեկն
էր, վոր խանգարեց նրան լրագրի պլանն իրականացնել։
Այնինչ այդ տարվա դեպքերը Պուշկինին ստիպում
էին մերձենալ կառավարության հետ և քաղաքական, և
անձնական կարգով: 1831 թ. ձգձգված լեհական պատե-
րագմը Պուշկինի մեջ առաջացրեց հակալեհական զգացում-
ներ, վոր արտահայտվեց վոտանավորներով, վորոնք մեկնա-
բանվեցին վորպես հավատարիմ հպատակության պատրիո-
տիզմ, արքունի փութաջանություն: Վյագեմակին, վոր իբ
ժամանակին ծառայել էր Վարշավայում և պահպանել էր
լեհական համակրանքները, Պուշկինի և ժուկովսկու վո-
տանավորներն անվանեց «չինելային» (այսինքն պաշտո-
նական — շնորհավորական, համեմատելով բանաստեղծնե-
րին կիսամուրացիկ գրագետների հետ, վորոնք Մոսկվայում

չինելներ հազած բարինները տները շնորհավորական վո-
տանավորներ են տանում մի բան ստանալու հույսով):
Ժուկովսկու և Պուշկինի համատեղ յելույթը, վորի հետ
Պուշկինն անցկացրեց Յարսկոյե-Սելոյում 1831 թ. ամ-
ռան յերկրորդ կեսը, յերբ այնտեղ էր նաև Նիկոլայ I
արքունիքը, ըստ յերեվոլյութին նպաստեց նրանց քաղա-
քական հայացքների վորոշ մերձեցմանը: Ժուկովսկին
ավելի հաճախ սկսեց միջնորդել Նիկոլայ I առաջ Պուշկինի
համար: Կառավարությունն սկսեց ավելի ներողամտաբար
վերաբերվել դեպի Պուշկինը, թեև նախկին անվստահու-
թյամբ: Նատալիա Նիկոլանայի հանդես գալը բարձր աշ-
խարհում փայլուն հաջողություն ունեցավ: Նիկոլայը ցան-
կացավ տեսնել նրան վորպես իր պալատական պարա-
հանդեսների զարդ:

Կատարվող դեպքերի քաղաքական իմաստավորման
անհրաժեշտությունը Պուշկինին ստիպեցին դիմելու պատ-
մական նոր ուսումնասիրությունների:

1831 թ. Յարսկոյե-Սելոյում նա մտածում է գրե-
լու Փրանսիական հեղափոխության պատմությունը և
սկսում է ուսումնասիրել Փրանսիական պատմաբաններին:
Ըստ յերեվոլյութին, այդ տարվան է վերաբերում Թիերի,
Մինյեյի, Գիգոյի և Ո. Թիերրի և մյուսների աշխատու-
թյունների ավելի հիմնավոր ուսումնասիրությունը: Այդ
ուսումնասիրությունը նրա ուշադրությունը գրավում է
Փեոդալիզմի և հեղափոխության սոցիալական արմատ-
ների վրա, բուրժուազիայի՝ արիստոկրատիայի դեմ վա-
րած պայքարի վրա: Ֆրանսիայում կատարվող դեպքերի
պերերի — ժառանգական արիստոկրատիայի ներկայացուց-
չության վերին պալատի նկատմամբ վեճերի և որենս-
զրական միջոցառումների կապակցությամբ ազնվակա-
նության պատմական դերն սկսում է նրան ավելի ու-
ավելի զբաղեցնել: Սրա կապակցությամբ ծագում է Ռու-

աստուանի և Արևմտյան Յեզրուպայի պատմական զարգացման գուղտհեռականության և արխատոկրատիայի այնտեղ և այստեղ ունեցած համեմատական դերի հարցը: Նրա հետաքրքրութիւնը դեպի տոհմական ազնվականության ունեցած դերի հարցերը բնական յելք է գտնում պատմական և սոցիալապետութիւնների մեջ: Նրա ծառայութիւնը հանգում էր արխիվներ հաճախելուն, վորտեղ նա նյութեր էր վորոնում իր պատմական հետաքրքրութիւնները բավարարելու համար:

Այն ինչ նրա գրական գործերը բոլորովին էլ փայլուն չէին: Պ. Ա. Վյազեմսկին հետադայում գրել է. «Իր տաղանդի աճման և ուժեղացող առնականության չափով էլ նա համաչափորեն կորցնում էր իր այն հրապույրը, վորով հարբեցնում էր յերիտասարգ սերունդներին և մեր անգիտակից ու թուլագլուխ քննադատութեանը»: 1831 թ. սկզբին լույս տեսած «Բորիս Գոգոլնովը» հաջողութիւն չունեցավ: Բողոքներով կատարած աշխատանքից հետո չիրականացված գրական մտահղացումների պաշար քիչ էր մնացել: Նրա «Յեվգենի Ռնեգին» վեպը 1831 թ. ամռանը վերջնականապես մշակվեց, և Պուշկինը դրանով ավարտեց իր գլխավոր յերկը, վոր զբաղեցնում էր նրա ստեղծագործական ժամանակը: 1831 թ. վերջը և ամբողջ 1832 թիվը համարյա վոչ մի նոր գեղարվեստական յերկ չեն տալիս: Ժուռնալային քննադատութեան ասպարեզում Պուշկինը հանդես յեկավ յերկու պամֆլետներով, ուղղված Բուրգարինի դեմ «Փետրիլակտ Կոսիչկին» կեղծանվան տակ: Այս շրջանի ամենանշանակալից գրական յերկերից պետք է հիշել նրա չափածո հեքիաթները, վոր նա գրում է առաջուց սկսած ուսական հեքիաթային դրամա «Հավերժահարսի» վրա աշխատելուն գուղընթաց:

Պուշկինի հեքիաթները հանդիսանում են նրա յերկերի մի առանձին տեսակը, վորոշ չափով կապված «Արև-

մըտյան սլավոնների յերգերի» հետ, վորոնք վերաբերում են նույն շրջանին:

Ռուսական ժողովրդական հեքիաթներով հափշտակվելը վերաբերում է 1824 թ. նրա Միխայլովսկոյեյում ապրելու ժամանակին: Յեղբորը գրած նամակում նա այսպես է նկարագրում իր պարապմունքները. «Մինչև ճաշ գրում եմ իմ հիշատակարանը, ճաշում եմ ուշ, ճաշից հետո ձիով գրոսնում եմ, յերեկոյան լսում եմ հեքիաթներ—և դրանով վարձատրում եմ իմ անիծյալ դաստիարակութեան թերութիւնները: Ի՞նչ հրաշալիք են այդ հեքիաթները: Ամեն մեկը մի պոեմ է»: Պուշկինի հեքիաթներն իրենց առաջ խնդիր չէին դնում բուն ուսական ժողովրդական հեքիաթների մշակումը: Ռուսական հեքիաթի վոճը պահպանելով, Պուշկինն ազատորեն դիմում էր արտասանմանյան աղբյուրներին, ըստ յերեվույթին, ընդունելով, վոր հեքիաթը միջազգային է: Ակներև են գրական փոխառութիւնները Գրիմի յեղբայրների ժողովածուից նրա հետագա հեքիաթներում («Հեքիաթ ձկնորսի և ձկնիկի մասին» և այլն), Վ. Իրվինգից («Վոսկե աքլորիկի հեքիաթը»)՝ «Արևմտյան սլավոնների յերգերը» զգալի չափով թարգմանված են Մերիմեյի «Գուլլա» զբբից, վորը գրական միտիֆիկացիա դուրս յեկավ:

Նա միննույն ժամանակ զբաղվում էր նաև ժողովրդական յերգեր հավաքելով: Ըստ յերեվույթին վոստիկանութեան ուղագրութիւնը դեպի նրա հարաբերութիւնները գյուղացիների հետ Սվյատիյե Գորիում հետևանք էր ուսական գյուղացիական յերգերի ուսումնասիրութեան և գրի առնելուն: Իսկ Պուշկինը վոչ միայն հետաքրքրվում էր գեղջկական պոեզիայով և գեղջկական կենցաղով, այլև կարող էր կիս մոտենալ գյուղացիութեանը: Նաշոկինայի յեղբայրը պատմում է նրա մասին. «Բանաստեղծը ճամբորդելիս չէր կարող կայարաններում սպասել մինչև

ձիերը թամբեն, այլ ճամբով առաջանում եր և վոչ մի գյուղացու կամ գեղջկուհու բաց չէր թողնում՝ առանց զրուցելու նրա հետ տնտեսութեան, ընտանիքի, կարիքների մասին, մանավանդ սիրում եր խառնվել բանվորական արտերների խոսակցություններին: Ժողովրդական լեզուն նա զիտեր կատարելապես և չափազանց շուտ կարող եր դեպի իրեն տրամադրել գյուղացիական գորշ ամբոխին՝ այնքան, վոր մուժիկները բոլորովին ազատ խոսում ելին նրա հետ ամեն բանի մասին»:

1831 թ. ե վերաբերում մեծ վեպ գրելու առաջին փորձը: Այդ փորձից մնացել են միայն առաջին գլխի պլանները և ուրվագծերը: Վեպի գործողությունը պետք ե կատարվեր կովկասյան հանքային շրերում: Վեպի հերոսներից մեկը վեպում կրկնակի կյանք ե վարում. նա ապրում ե յեվրոպական հասարակութեան մեջ, վոր յեկել են հանքային շրեր, և միաժամանակ լեռներում ավազակություն ե անում լեռնցիների հետ: Վեպը մնաց թերավարտ, բայց 1832 թ. Պուշկինն ավազակ-ազնվականի թեմայով սկսեց մի նոր վեպ գրել — «Դուբրովսկի» — մի դասական գործի նյութերի հիման վրա, վորի մեջ մի հարուստ կալվածատեր մի չքավոր կալվածատիրոջից անորինաբար խլում ե նրա կալվածքը: Դատարանի իսկական դատավճիռը Պուշկինը մտցրեց իրեն վեպի մեջ: Պուշկինը մեծ վոգեվորութեամբ աշխատում եր իր այդ նոր յերկի վրա 1832 թ. հոկտեմբերից մինչև 1833 թ. հունվարը: Սակայն վեպը չվերջացրած թողեց այն: Այն ժամանակ, լերք նա աշխատում եր Դուբրովսկու վերջին եջերի վրա, նրա մեջ արդեն նախապատրաստվում ե մի նոր վեպի հղացում: Կանգ առնելով Պուզաչեվի մոտ ծառայող ազնվական Շվանվիչի պատմական ֆիգուրայի վրա, նա միտք հղացավ գրելու մի վեպ, առնված Պուզաչեվի ապստամբութեան պատմութեանից: Ազնվականի նույն պատկերը, վոր դա-

Վաճանում ե իր դասակարգին, Պուշկինը մտցրեց գյուղացիական ապստամբութեան պատմական դարաշրջանի շրջանակների մեջ: Հետաքրքրությունը դեպի գյուղացիական «բունտը» Պուշկինի մեջ ծագեց 1830 թ., լերք նա ականատես եր խոլերային խոտվություններին: Դրանք նրա վրա առանձին տպավորություն թողին: Բայց գուցե նրա ուշադրությունն ավելի մեծ չափով գրավեցին Նովգորոդի արակչեկյան զինվորական բնակավայրերում (ВОЕННЫЕ ПОСЕЛЕНИЯ) տեղի ունեցած խոտվությունները, վորոնց ժամանակ կոտորվեցին սպաներ: 1831 թ. հուլիսին կատարված այդ խոտվություններին մասնակցեցին հարևան գյուղերի գյուղացիները: Գյուղացիական ապստամբութեանների պատկերները և խորհրդածությունները ուսու կալվածատեր ազնվականութեան ճակատագրի մասին, պատմական անալոգիաների կարգով, Պուշկինին մտովի փոխադրեցին 1773—1775 թ. թ. պուզաչեվյան շարժման գաղաշնանը, վորի հիշատակը դեռ ևս կենդանի յեր: Հենց այստեղ ել նա գտավ իր հերոս-ազնվականին, վոր անցել եր ազնվականութեան թշնամիների կողմը: Պատմական վեպի այն ձևը, վոր մշակել եր Վ. Սկոտը, վորի գրվածքներով Պուշկինը խիստ հափշտակվում եր, նրան ավելի հարմար եր թվում, քան ժամանակակից վեպի ձևը:

1833 թ. փետրվարին նա դիմեց զինվորական մինիստրը Չերնիշևին, խնդրելով թույլ տայ իրեն ոգտվելու Պուզաչևի մասին լեղած արխիվային նյութերից, պատճառաբանելով, թե մտադիր ե գրել Սուվորովի պատմությունը, վոր մասնակցում եր Պուզաչեվի ապստամբութեան ճնշելուն: Ըստ յերեվույթին, արդեն առաջին քայլերից Պուշկինի մեջ միտք հղացավ, վեպից բացի, գրել նաև Պուզաչեվի շարժման պատմական հետազոտությունը: Նա ձեռնարկեց «Պուզաչեվի պատմությունը», վորը մայիսին բավականին առաջ եր գնացել: Հուլիսին նա վորոշեց մեկնել

պուգաչևշչինայի տեղը և չորս ամսով արձակուրդ խնդրեց աշխատելու համար «վեպի վրա, վորի գործողության մեծ ժառը կատարվում է Որենքուրգում և Կազանում»: Ոգոստոսի կեսին Պուշկինը Մոսկվայով մեկնեց Կազան, Որենքուրգ և Ուրալսկ: Կազանում և Ուրալսկում նա պուգաչևշչինայի վերաբերյալ ուժեղ թափով նյութ էր հավաքում, դիմելով տեղացի ծերերին՝ ապստամբության վկաներին: Պուշկինին շատ ոգնեցին նաև տեղական գիտնական հնաբնակաները, որինսակ, Կազանի բժիշկ և գաղառագետ Կ. Ֆուկսը: Ուրալ կատարած ուղևորությունից Պուշկինը վերադարձավ Բուրգինո, վորտեղ անցկացրեց ամբողջ հոկտեմբերը և նոյեմբերի կեսը: Բուրգինյան այդ յերկրորդ աշունն արդյունավետ էր, թեև վոչ այնքան բեղմնավոր, ինչպես վոր 1830 թ. աշունը: Այստեղ Պուշկինը վոչ միայն ավարտեց «Պուգաչևի պատմությունը», այլև գրեց «Պոնձե ձիավորը», «Ձկնորսի և ձկան հեքիաթը», «Անջելոն», «Մեռյալ արքայադստեր հեքիաթը», շատ վտանավորներ և յերկու թարգմանություն Միցկեվիչից («Воевода» և «Будрыс»): Միցկեվիչից կատարած այդ թարգմանութունները նշանավոր են նրանով, վոր ցույց են տալիս այն հատուկ հետաքրքրությունը զեպի լեհացի բանաստեղծը, վորը Պուշկինի յերբեմնի անձնական բարեկամն էր: Պուշկինը նրա հետ ծանոթացավ 1826 թ. Մոսկվայում և հետո հաճախ հանդիպում էր Պետերբուրգում, վորտեղ Միցկեվիչը մոտ էր Դելվիզի գրական խմբակին:

Նույն այդ ժամանակվան է վերաբերում աշխատանքը «Пиковая дама» պատմվածքի վրա, վոր լույս տեսավ «Библиотека для чтения»-ում 1834 թ. մարտին: Այս պատմվածքը, վորը կարող է «Բեկինի պատմվածքների» շարքում դասվել, Պուշկինյան պրոզայում հանդիսանում է հետագա ետապը և նրա արձակի բարձր արվեստի որի-

նակն է հանդիսանում: Լույս տեսնելուց հետո նա չափազանց մեծ հաջողություն ունեցավ, մի բան, վոր չի կարելի ասել «Բեկինի պատմվածքների» մասին: «Пиковая дама» պատմվածքում արտացոլվեց Պուշկինի հետաքրքրությունը զեպի նրան ժամանակակից արևմտայեվրոպական պրոզան, վոր այդ տարիներին չափազանց բարձր զարգացման էր հասել:

Ըստ յերեվույթին, միշտ նույն գյուղացիական հարցի կապակցությամբ Պուշկինը դիմում է Ռադիշչևի և նրա «Путешествие из Петербурга в Москву» գրքի (1790 թ.) ուսումնասիրությանը, վորի մեջ ճորտատիրության դեմ ուղղված լիբերալ քարոզի մեջ հեղինակը դուշակում էր գյուղացիական հեղափոխություն, վորի համար և Յեկատերինա II նրան աքսորեց Սիբիր: Ռադիշչևին դիմելու արդյունքը յեղավ Պուշկինի մեծ հուզվածը ավյալ գրքի մասին, վոր նա գրեց մեծ ընդհատումներով 1833—1834 թվերի ընթացքում:

Պուշկինի գիրքն այս հարցում ըմբռնելու համար անհրաժեշտ է համառոտակի բնութագծել նրա քաղաքական հայացքներն այնպես, ինչպես վոր նրանք նրա մոտ կազմվել էին այդ ժամանակ: Ընդունելով Ֆրանսիական լիբերալներին համոզմունքները, վորոնց մեջ էին Պուշկինի ամենից շատ գնահատած քաղաքական գրողները (զե Ստալ, Բ. Կոնստան) և պատմաբանները, նա հարում էր «իշխանությունների բաժանման» քաղաքական թեորիային, վորի մարմնացումը դեռ ևս XVIII դարում Ֆրանսիայի քաղաքական մտածող Մոնթեսքյոն հայտարարել էր Անգլիային: Պուշկինն անհրաժեշտ էր համարում գործադիր իշխանության բաժանումը որենսդրականից և այն անհրաժեշտ էր գտնում հանձնել պետության ժառանգական պետի ձեռքը: Այսպիսով զեպի հանրապետական սխտեմը յերևուտն թվականներին մոտ Պուշկինը կազմել էր բացասական վերաբերմունք, վոր նկատելի յե Ֆրանսիական հե-

դափոխութեան պատմութեան առթիվ նրա կազմած ուր-
վագծերում: Վճռականորեն դատապարտելով հեղափոխու-
թյամբ տապալված ֆեոդալական կարգի ռեստավրացիայի
ամեն մի փորձ, և համակրանքով ընդունելով բուրժուական
հեղաշրջումը Ֆրանսիայում, Պուշկինը, լիբերալների հա-
մոզմունքներին համաձայն, քաղաքական պայքարի մեջ չեր-
կու սկզբունք եր տեսնում՝ պրոգրեսի և ստաբիլիզացիա-
յի («գրոնի» և «հակահարվածի»), ինչպես վոր նա գրում
էր «К ВЕЛЬМОЖЕ» ուղերձում), վորոնց միջի հավասարա-
կշուությունը նա համարում էր պետական զարգացման
նորմալ պայման: Պրոգրեսի գաղափարի ներկայացուցիչ
նա համարում էր դեմոկրատիային, վոր ներկայացված էր
յեվրոպական պարլամենտների ստորին պալատներում:
Մտաբիլիզացիայի, կոնսերվատիվ սկզբունքի ներկայացու-
ցիչներ նա համարում էր հողային արխատոկրատիային,
վոր ներկայացված էր վերին պալատում: Վորպեսզի այդ
վերին պալատը լիներ անկախ ցարից (կամ թագավորից)
և դեմոկրատիայից, Պուշկինը ժխտում էր նշանակման
սկզբունքը, վորը վերին պալատը յենթարկում էր միա-
պետին, և ընտրությունների սկզբունքը, վորն այն յեն-
թարկում էր ժողովրդին: Պուշկինը յեղը տեսնում էր ժա-
ռանգական սկզբունքում, վորը հնարավոր էր բուժուա-
կան կարգի դեպքում, պահպանելով ժառանգական հողա-
տիրությունը, վորն ապահովում է վերին պալատի ան-
գամների կարծիքների անկախությունը: Այդ հայացքն ընդ-
հանուր առումով համապատասխանում էր ֆրանսիական
չափավոր լիբերալների քաղաքական դպրոցին: Անցնելով
Ռուսաստանին և նրա քաղաքական զարգացումը համե-
մատելով արևմտայեվրոպականի հետ, Պուշկինն ընդգծում
էր ռուսական ուղու յուրահատկությունը, մասնավորա-
պես ժխտելով հին Ռուսիայի ուղեղական կարգի և Արև-
մուտյան Յեվրոպայի ֆեոդալիզմի նմանությունը: Պուշկինը

«պատմութեան» առթիվ գրած իր պոլեմիկական հոդված-
ներում նա աշխատում էր այդ բանն ապացուցող պատ-
մական նյութ հավաքել: Մյուս կողմից, նշելով քաղաք-
ների զարգացման այլ բնույթը և Ռուսաստանի կապիտա-
լիզացիայի ալլ ընթացքը, ռուսական բուրժուազիայի մեջ
Պուշկինը չէր կարող տեսնել այն դասակարգը, վորն ընդու-
նակ էր գլխավորելու ֆրանսիական հեղափոխութեան նման
հեղափոխական շարժումը: Ռուսական բուժուազիայի մեջ
նա չէր տեսնում նաև ռուսական ինտելիգենցիայի իդեոլո-
գիայես առաջավոր խավ ստեղծելու առհավատչյան, վորն
իր ժամանակ գլխավորապես հավաքադրվում էր հողազրկ-
ված ազնվականութեան միջից: Չհավատալով հերթական
պատմական պրոբլեմի, վորպիսին նրա համար ճորտատի-
րական իրավունքի վոչնչացումն էր, հեղափոխական լուծ-
մանը, Պուշկինը անվստահությամբ էր վերաբերվում դեպի
ազնվականութեան վերնախավը, վորոնց, ինքնակալ իշխա-
նութեան թուլանալու դեպքում, կանցներ քաղաքական իշ-
խանությունը և վորոնք այդ իշխանությունից կոզապե-
լին գյուղացիներին ազնվի մեծ չափով ճորտացնելու հա-
մար: Վորպես ազնվականութեան ներկայացուցիչ, վորի գո-
յությունը նա հիմնավորում էր արևմտայեվրոպական
հասարակարգի իր անալիզի հիման վրա, նա հավասա-
րապես վախենում էր խնդրի գյուղացիական ապստամ-
բութեան միջոցով լուծումից: Պուշկինի համար սրա հե-
տևանքը հանդիսանում էր կամ ինքնակայութեան հետ աշ-
խատակցելու անհրաժեշտությունը, պայմանով, վոր թա-
գավորը կընդունի ռեֆորմների ծրագրերը, և հաղթահարելով
տարերքը «յերկրորդ Պյոտրի» դերը կխաղա, կամ թե չե
հնարավոր էր թվում մի ալլ ուղի՝ դիմելու ինչ վոր լայն
շրջանների, վորոնց Պուշկինն իրեն չափազանց մոլթն էր
պատկերացնում, վորոնց, յերկարատե պրոպագանդայի մի-
ջոցով կարելի յեր նախապատրաստել իրենց կարծիքով

հանդես գալու (իսկ «հասարակական կարծիքի» հաղթանակին վերջին հաշվով Պուշկինը հաստատ հավատում էր) և դառնալու պատմական ակտիվ գործոն: Բայց պարզ չլինելու պատճառով, թե ինչ շրջաններից կարող էր կազմվել պատմական այդ նոր ուժը, Պուշկինն իրեն, վորպես ուսական քաղաքական ուղղիցիայի կազմակերպչի, վատ էր պատկերացնում: Նա մտում էր ինքնակալության հետ հաշտվածի դերում և աշխատում էր իր խոսքի ուժը ուղտագործել ինքնակալության վրա ռեֆորմների ուղղությամբ ներգործելու և ղեկարրիստներին վերադարձնելու ուղղությամբ, վորոնք ազատվելուց հետո կարող էյին նրա դաշնակիցները հանդիսանալ:

Չէր թուլանում նաև Պուշկինի հետաքրքրությունը դեպի արևմտայնվրոպական դեպքերը և քաղաքական դրության փոփոխությունները: Այստեղ էլ դեպի ընդհանուր իրադրությունը ունեցած նրա վերաբերմունքի մեջ նկատելի յե մշտական սկեպտիցիզմը: Վորքան շերմորեն նա դիմավորեց հուլիսյան հեղափոխությունը, այնքան էլ սառեց դեպի նա, յերբ այն բացահայտորեն արտահայտված բուրժուական բնույթ ընդունեց: Մասնավորապես նա չէր կարող համաձայնվել «պերերի» (վերին պալատի անդամների) ժառանգականության վոչընչացմանը, վորովհետև այդ հակասում էր նրա քաղաքական սխտեմին, վոր նա ընդունել էր իր ուրուցիչներից — դարի սկզբի ֆրանսիական լիբերալներից: Բնորոշ է Պուշկինի հետաքրքրությունը դեպի պետականության քաղաքական նոր ձևերը, վոր գծագրվում էյին Ամերիկական Միացյալ Նահանգներում: Դեռևս 1830 թ., հավանորեն Պուշկինի միջնորդությամբ «Литературная Газета»-յում գետեղվեց հին արգամասական Պ. Պոլետիկի հոդվածը՝ «Հասարակության վիճակը Ամերիկական Միացյալ Նահանգներում» վերնագրով: 1836 թ. Պուշկինը Ջոն Տենների գրքի շարադրանքի առաջաբանում տվեց Ամերիկական հասարակության բացասական բնութագիրը:

Պուշկինի պատմական ու քաղաքական հայացքները վորոշվում էյին նրան ժամանակակից ուսական ու արևմրտյան լիբերալիզմի հոսանքներով, բայց բարդանում էյին յերեսնական թվականների ուսական շրջապատման կատարյալ մենակության զգացումով: Յեվ Պուշկինի փորձերը իրականության հետ հաշտվելու, և նրա սկեպտիկ վերաբերմունքը շրջապատող յերեվույթների նկատմամբ վոչ միայն Ռուսաստանում, այլև արևմուտքում (տես «Պինգոմոնտից» վոտանավորը) հավասարապես ծնունդ էյին առնում այն բանից, վոր Պուշկինն իր առջև, իր սոցիալ-քաղաքական իդեալների իրականացմանը տանող ուղիղ ճանապարհ չէր տեսնում, չէր տեսնում այն ուժերը, վորոնք ապահովում էյին դրանց մերձակա հաղթանակը: Իսկ Պուշկինի իդեալները հիմնվում էյին «լուսավորչության» ու հեղափոխության դարաշրջանի մարդկանց վոզևորող առողջի ու հառաջադիմականի վրա, յերբ անցյալի ճնշումից մարդկությունն ազատագրելու խնդիրները դեռ չէյին քարդացել իշխանության բաժանման և դրության տերերի միջև համերաշխություն կայացնելու գործնական խնդիրներով: Պուշկինի լիբերալիզմը հիմնվում էր լուսավորության ազատագրական նշանակությանը, ժողովրդի ստեղծագործական ուժերին, մարդու՝ դեպի մարդկությունը առած սիրուն հավատալու սկզբունքների վրա: Իսկ այն «բարի զգացումներն» էյին, վորոնք արտացոլում էյին նաև նրա գեղարվեստական ստեղծագործության մեջ և վորոնք նա իր արժանիքն էր համարում իր «չուշարձանում»: Վոչընչեցիվ արդյունաբերության ու ինդուստրիայի նոր դարը, «չուզունե ճանապարհների, շոգենավերի» դարը, մենամարտի նախորդակին մտահոգված լինելով «Սովրեմենիկ»-ի մեջ շոգեմեքենաների մասին հոդված գետեղելով՝ Պուշկինը չէր կարող հաշտվել կապիտալիզմի աչն «հետնակողմով», վորը տանում էր դեպի մարդը մար-

գու ձեռքով անխնա կերպով շահագործելուն և նոր ստրկութեան. «Կարգացեք գործարանային աշխատողներէ՛ գանգատները—մագերը կիշաքաղվեն: Ինչքան զգվելի խոշտանգումներ, անհասկանալի տանջանքներ, ինչպիսի սառնաբարբարոսութիւն մի կողմից, մյուս կողմից ինչպիսի անավոր աղքատութիւն: Դուք կկարծեք, վոր հարցը փարավոնների բուրգերը կառուցելու և յեգիպտացիների խաբազանների ներքո աշխատող հրեաների մասին ե: Բնավ ել չե—հարցը պարոն Շմիդի չուխանների կամ Պ. Տոմպոնի ասեղների մասին ե» («Մոսակցութիւն անգլիացու հետ»):

1835 թվին ե վերաբերում արևմտայեվրոպական գյուղացիների XIV դարի պատմութիւնից առնված մեծ սոցիալ-պատմական պլեսի չափարտված մտահղացումը («Տեսարաններ ասպետական ժամանակներից»), վորի մեջ արտացոլվեցին Պուշկինի պատմական հետաքրքրութիւնները և ֆրանսիական հեղափոխութեան արմատների ուսումնասիրութիւնը: Այս պլեսում վորոշ չափով արտացոլվեցին ֆրանսիական պատմական ժամանակագրութիւնները, մասնավորապես Մերիմեյի «Ժակերիան»:

Պուշկինի կյանքի վերջին տարիներին են վերաբերում բազմաթիվ արձակ հղացումներ, վորոնցից մեզ հասել են միայն հատ ու կտոր գլուխներ ու պլաններ. իսկ այս բոլոր հատվածներից վորոշ չափով ավարտված են միայն «Յեգիպտական գիշերները»: Մյուսների մեջ մենք պատահում ենք ուրվագծեր հին հունական կյանքից վերցված մի վիպակի, ուր պատկերվում ե Պետրոնիոսը, և մի նամակաձև վիպակ՝ «Մարիա Շոնինգը», վորի հիմքում դրված ե 1787 թ. Նյուրեմբերգում տեղի ունեցած քրեական դատավարութիւնը, իսկ զրա եյութիւնը հանգում ե հետևյալին. աղքատութիւնից հուսահատութեան հասած յերկու աղջիկներ իրենք իրենց զրպարտում են հանցանքի մեջ

ու դատապարտվում մահապատժի: Այս վիպակում Պուշկինը նկարագրել ե գերմանական մանր արհեստավորների կենցաղը: Այս տարիների համար բնորոշ ե հետաքրքրութիւնը դեպի պատմական տարբեր դարաշրջանները, դեպի վոշ միայն ուսսական, այլ նաև արևմտյան թեմաները, չերբ պատմական զբաղումները դառնում են Պուշկինի համար սովորական աշխատանք, իսկ պատմական շահագրգռութիւնները զեղարվեստական յերկերի թեմաներ են թելադրում նրան:

Մինչ այդ Պուշկինի անձնական կյանքում նոր փոփոխութիւններ կատարվեցին: Ահա թե ինչպես ե գրանցել այդ իր որագրում 1834 թ. հունվարի 1-ը թվականով. «Յերրորդ որն ինձ շնորհեցին կամեր-յունկերի կոչում (վորիմ տարիքի համար բավական անվայելուչ ե): Բայց արքունիքը ուզում ե, վոր Նատալիա Նիկոլանան պարի Անիչկովում»: Կամեր-յունկերը—ստորին պալատական կոչումը—իսկպես իրենց պալատական կարյերան սկսող յերիտասարդների սեփականութիւնն եր: Պուշկինն այդ ընդունեց վորպես վիրավորանք, ըստվորում իր պալատական նշանակումը՝ վոչ առանց հիմքի՝ համարեց արդյունք կնոջ հաջողութիւնների, վորին ցանկանում եյին զրավել պալատական պարահանդեսների Անիչկովյան պալատում: Իր անբավականութիւնը Պուշկինն արտահայտում եր բավական բարձրաձայն, վորի հետեանքով վատացավ նրանձնական հարաբերութիւնը Նիկոլայ I հետ: Այդ հարաբերութիւններն առանձնապես սրվեցին հունիսին, յերբ Պուշկինի իր կնոջը զրածնամականից մեկը փոստում բռնրվել և հանձնվել եր Նիկոլայ I-ին, վորը Պուշկինի նամակում իր կամեր-յունկերութեան մասին համեմատաբար խիստ կարծիքի առթիվ անբավականութիւնն եր արտահայտել: Պուշկինը կատարվածից խիստ վրդովվել եր և հրաժարական ներկայացրեց: Նրան հասկացրին, վոր հրա-

ժարականը միաժամանակ շնորհագրկուճն կլինի. մասնա-
վորապես նրանից խլվում էր արխիվներում աշխատելու
իրավունքը: Հաշտեցնողի դերով գործին միջամտեց ժու-
կովսկին, վորը Պուշկինին ստիպեց հետ վերցնելու իր հրա-
ժարականը և մի կերպ գործին վերջ տվեց: Սեպտեմբե-
րին Պուշկինը նորից մեկնեց Բուրգինո, վորտեղ մնաց մոտ
մի ամիս: Այս անգամ Բուրգինոյում նրա մնալը քիչ էր
արդյունավետ. նա այնտեղից բերեց միայն «Վոսկե աք-
լորի հեքիաթը»:

Պետերբուրգ վերադառնալուց հետո Պուշկինի առաջ ծա-
ռացավ իր հետագա նյութական գրության հարցը: Գրական
փոքր արտադրողականությունը գրական փոքր ել յեկամու-
նեք էր խոստանում. միայն վերահրատարակությունները Պուշ-
կինին չէին ապահովում: Արքունիքում գտնվելը գրական
աշխատանքի համար անբարենպաստ պայմաններ էր ստեղ-
ծում: Ընտանիքը մեծացավ: Այդ ժամանակներում ծնվեց
Պուշկինի դուստր Մարիան (մայիս 1832), վորդի Ալեք-
սանդրը (հուլիս 1833 թ.): Հետագայում ծնվեցին և մի վոր-
դի Գրիգորին (մայիս 1835) և դուստր Նատալիան (մա-
յիս 1836): Կինը ծնողների մոտից վերադարձավ իր յեր-
կու քույրերի հետ միասին, վորոնք բնակվեցին Պուշկինի
ընտանիքի հետ միասին: Այդպիսի մեծ ընտանիք պահե-
լու և այն ել աշխարհիկ լայն կյանք վարելու հնարավո-
րություն տալու համար Պուշկինը դիմեց փոխառություն-
ների, թանգագին իրեր գրավ դնելու և այն: Վերջապես
1835 թ. հուլիսին Պուշկինը վճռեց խնդրել չորս տարով
արձակուրդ իր գործերը կարգի գցելու համար: Արձակուր-
դը նորից մերժեցին: Պուշկինը վորոշեց լծի տակ մտնել: Այդ
ժամանակ նրա պարտքը մոտ 60,000 ռ. էր: Պուշկինը խընդ-
րեց տալ իրեն կանխավճար ի հաշիվ ոտճիկի՝ 30,000 ռ.: Ար-
դեն առաջ նա պետությանը պարտ էր 20,000 ռ., վոր ծախս-
ված էր «Պուզաշեվի բունտի պատմութան» (Նիկոլայի կար-

դադրությամբ «Պուզաշեվի պատմությունն» այդպես էր վե-
րանվանված) տպագրության վրա: Այդ 30,000 ռ. նրան տվին
և դրանով նա վերջնականապես ազատվելու առանց վորևե
հույսի, կապվեց պալատական Պետերբուրգին: Մինչդեռ նրա
քաղաքական համոզմունքները փոխվեցին ինքնակալության
հետ աշխատակցելու գաղափարից հեռանալու ուղղությամբ:
Նիկոլայ I ռեակցիոն քաղաքականությունը բավականա-
չափ պարզվեց, վորպեսզի Պուշկինը հրաժարվեր «նոր
Պյոտրի» մասին ունեցած իր մտքից: Նա անցնում է քաղա-
քական ոպողիցիայի շարքերը, բայց առանց հաստատուն
ծրագրի, առանց հաստատուն պատկերացումն ունենալու
այն միջավայրի մասին, վորտեղ նա գաշնակիցներ կգտնի:
Կատարվում է Պուշկինի աստիճանական մեկուսացումը:
Պալատական բյուրոկրատիայի շրջապատում նա բավակա-
նաչափ միայնակ էր: Նա շրջապատված էր ուժեղ հակա-
ռակորդներով: Նրանց մեջ էր նրա պետը՝ արտաքին գործոց
մինիստր Նեսսեյլոդեն և մանավանդ մինիստրի կնոջ սա-
լոնի հաճախորդները: Եռտով նրա հակառակորդներին հա-
րեց լուսավորության մինիստր Ուվարովը, վոր մի ժամանակ
«Արզամասի» նախկին անդամ էր: Ուվարովը, լինելով
կրթված և վորոշ չափով տաղանդավոր, բայց բուրոկրին
անսկզբունք և բարոյական տեսակետից անկայուն մարդ,
այդ ժամանակ իրեղևիգիապես գլխավորում էր նիկոլաե-
վյան ռեակցիան: 1833 թ. ստանձնելով մինիստրի պաշտո-
նը, Ուվարովը հայտարարեց «պաշտոնական ժողովրդա-
կանության» ֆորմուլան, ցարական ռեժիմի յերեք հիմքե-
րի՝ «ուղղափառության, ինքնակալության, ժողովրդակա-
նության» հուշակավոր գուղակցությունը: Ուվարովի միջո-
ցառումներից մեկը գրաքննական խստությունների ուժե-
ղացումն էր: Այդ միջոցառումները վերաբերվեցին նաև
Պուշկինին, վորը մինչև այդ ժամանակ գրաքննական տե-
սակետից յենթարկվում էր ժանդարմական ցարական գրա-

քննութեան հատուկ ռեժիմի: 1835 թ. ոգոստոսին գրաքննութիւնը Բենկենդորֆի մի հավաստիացման հիման վրա հրատարակեց թույլ տալ Պուշկինի յերկերի տպագրութիւնը, և Ուվարովը պնդում եր, վորպէսզի Պուշկինի յերկերը, բացի ցարական գրաքննութիւնից, յենթարկվեյին նաև ընդհանուր գրաքննութեան: Պուշկինը գրա դեմ բողոքեց և միաժամանակ վրեժ լուծեց Ուվարովից «На выздоровление Лукулла» անձնական խիստ սատիրայով, վորի մեջ մերկացնում եր Ուվարովի անվայել վարմունքը: Ուվարովը գանգատվում եր և այդ որվանից հարեց Պուշկինի անձնական կատարի թշնամիների բանակին:

1836 թ. մարտին մեռավ Պուշկինի մայրը՝ Նադեժդա Ոսիպովնան: Նրանից հետո մնաց Պսկովյան կալվածքը՝ Միխայիլովսկոյեն, վորը ժառանգութեան կարգով անցավ Պուշկինին, նրա յեղբոր և քրոջ հետ միասին: Այդ ժառանգութեան բաժանումը Պուշկինին մեծ գլխացավանք պատճառեց, վորովհետև նրա քրոջ շահերի պաշտպան եր կանգնել նրա ամուսին Ն. Պավլիշչևը, վորը չափազանց մեծ պահանջներ եր ներկայացնում: Նյութական իր սուղ դրութեան հետևանքով Պուշկինն այդ պահանջները բավարարել չեր կարող: Ժառանգութեան բաժանման գործը ձրգձգվեց մինչև Պուշկինի մահը, ասենք՝ ժառանգութեան մեջ հաստատվելը նրա կենդանութեան ժամանակ դեռ տեղի չունեցավ:

1835 թ. վերջին Պուշկինն իրավունք ստացավ հրատարակելու «Современник» անունով յեռամսյա ժուռնալի տիպի (տարեկան չորս պրակ) պարբերական ժողովածու: 1836 թ. ապրիլին լույս տեսավ «Современник»-ի առաջին համարը: Թեև Պուշկինը հայտարարում եր, թե «Современник»-ը լինելու յե «Литературная Газета»-ի շարունակութիւնը և զրանով արդեն վստայվում եր նրա ծրագիրը, բայց փաստորեն «Литературная Газета»-ի խմբակն

այդ ժամանակ քայքայվեց: Ստիպված յեղան կազմակերպելու մերձավոր աշխատակիցների խմբագրական կազմ: Նրանց թվումն ելին Վյազեմսկին, Ուոսսեյկին և ուրիշները: Իսկ առաջին համարներում ամենամոտ մասնակցութեան հրավիրվեց Գոգոլը: Սակայն Գոգոլի խիստ հողվածներն սպառնում ելին սրել «Современник»-ի հարաբերութիւնը առևտրական հիմունքներով հրատարակվող «Библиотека для чтения» ժուռնալի հետ, վոր հրատարակում եր Սմիրդինը, Սենկովսկու խմբագրութեամբ: Պուշկինն շտապեց սահմանափակել Գոգոլի լիազորութիւնները և ժուռնալը վարելու գործն իր ձեռքն առավ: Տարվա վերջին նա յերագում եր ժուռնալի կողմը գրավել յերիտասարդ քննադատ Բելինսկուն: Գրական տեսակետից ժուռնալը գլխավորապէս պահվում եր իրեն՝ Պուշկինի յերկերով: Պուշկինն այստեղ տպագրեց վերջին տարիների իր ամենախոշոր գործը՝ «Կապիտանի աղջիկը» վեպը: Հենց այստեղ տպագրեցին «Ճանապարհորդութիւնը դեպի Արզըրուժը», «Փլատ ասպետը» և մի շարք վոտանավորներ: Բացի դրանից Պուշկինը տպագրեց նոր, առավել հետաքրքիր գրքերի առթիվ գրած իր միջանի գրական ռեֆերատների տիպի գուտ ժուռնալային աշխատանքները: Ժուռնալը քաղաքական բաժին չուներ, բայց Պուշկինը այդ բացն աշխատում եր ծածկել Ա. Տուրգենևի փարիզյան նամակներով, վորոնց մեջ հաղորդում եր Փարիզի հասարակական կյանքի խրոնիկան: Բացի դրանից, ժուռնալը մեծ տեղ եր տալիս գիտական աշխատութիւններին, ճանապարհորդութիւններին, մեմուարներին և այլն: Ժուռնալն ստիպված ելին հրատարակել ամենադաժան ցենզուրային պայմաններում: Հողված հողվածի հետևից արգելվում ելին, մյուսները յենթարկվում ելին առանձին կտորների մասնակի արգելումներ: Ընթերցողների մեջ ժուռնալը հաջողութիւն չուներ: Պուշկինն ամեն կերպ հող եր տանում բարձրացնե-

դու ժուռնալի նկատմամբ յեղած հետաքրքրութիւնը, շո-
շափելով ընթերցողներին իր ընդարձակ շրջանը:

Պուշկինի մահը վրա հասավ ծրագրի և խմբագրու-
թյան կազմի վերակառուցման փորձերի շրջանում: Այս
ջանքերը վկայում են, վոր Պուշկինը ձգտում էր պոկվել
այն մենակութիւնից, վորի մեջ ընկել էր: Պալատական
թշնամական միջավայրի շրջապատման մեջ՝ այս իրեցու-
ղիական մենակութիւնն էլ պայմանավորեց Պուշկինի այն
ներվայնութիւնն ու դյուրագրգռութիւնը, վորի ժամանակ
նվազագույն առիթն էլ կարող էր աղետ առաջացնել: Յերբ
համոզում չկար, վոր իր հասարակական գործն արգասա-
վոր է, յերբ բացակայում էր լայն համակրանքն ու արձա-
գանքը, ապա անձնական բնույթի յուրաքանչյուր կոնֆլիկտ
պետք է վողբերգական վախճան ունենար:

Պուշկինին թվում էր, վոր կյանքի փոթորկոտ շրջանն
արգեն անցավ և ինքը մոտենում է յերկար սպասած հան-
դարտութեան: 1835 թ. սեպտեմբերից մեկում նա
գրել է.

Յես հասակ առա փոթորկի ժամին,
Յեզ իմ որբի հոսանքը պղտոր
Ննջել է կարծես կարճ ժամանակով,
Արտացոլելով կապույտը յերկնի:
Բայց արդյոք յերկնք . . . կարծես թե անցան
Փոթորկի որբը, դառնագին տանջանք . . .
.

Այնուամենայնիվ Պուշկինը հանգստութիւն չգտավ,
գնդհակառակը, դրութիւնն էլ ավելի լարվեց ու վողբեր-
գական լուծումը մոտեցավ:

Պուշկինի մենամարտի անմիջական առիթը, վորի ժա-
մանակ նա մահացու վերք ստացավ, յերիտասարդ Ֆրանս-
սիացի Դանտեսի կողմից Պուշկինի կնոջը հետապնդելու
շուրջը յեղած բամբասանքներն էյին: Դանտեսը հուլիսյան
հեղափոխութիւնից հետո Ֆրանսիայից հեռացած միակե-
տական յերիտասարդներից էր: 1834 թ. հունվարին նա

ընդունվեց ռուսական զինվորական ծառայութեան, կապա-
լերգարդյան գնդի կորնետի աստիճանով: Նրա կարչերային
նպաստեց նրա ծանոթութիւնն ու հետագա մերձեցումը
Ռուսաստանի հոլանդական դեսպան բարոն Հեկկերենի հետ:
1836 թ. սկզբին բարոն Հեկկերենը Դանտեսին վորդեգրեց:
Դանտեսի կողմից Պուշկինի կնոջ հետապնդումն սկսվեց
1835 թ.: Նատալիա Նիկոլաևնան, վոր ընդհանրապես զգա-
յուն էր դեպի աշխարհիկ հաշտութիւնները, չէր մերժում
հետաքրքիր յերիտասարդ Ֆրանսիացու իրենով հետաքրքր-
վելու փորձերը: Տեսակցութիւնները կատարվում էյին աշ-
խարհիկ շրջապատում, վոր դեպի Պուշկինն անբարյացակամ
վերաբերմունք ուներ և չարախնդութեամբ հետևում էր Դան-
տեսի և Պուշկինայի հարաբերութիւնների զարգացմանը:
Ստեղծված դրութեանը Պուշկինը շղայնոտ վերաբերմունք
էր ցույց տալիս: 1836 թ. նոյեմբերի սկզբին անոնիմ
նամակների ձևով տարածվեց մի պատկեր, վորի մեջ
ծաղրական արտահայտութիւններով Պուշկինը համարվում
էր «կոտորավորների (пороговец) որդենի պատմա-
բան», այսինքն վորոշակի ակնարկվում էր կնոջ
դավաճանութիւնը: Սակայն պատկերը ի նկատի ունեւր
վոչ թե Դանտեսին, այլ Նիկոլայ Լ. սա շեշտվում
էր նրանով, վոր անստորագիր նամակում որդենի Նա-
խագահը Նարըշկինն էր, Ալեքսանդր Լ Ֆափորիտկաչի
ամուսինը: Պատկերը տարածելու մեջ Պուշկինը կասկածեց
Հեկկերենին և Դանտեսին մենամարտի հրավիրեց: Մենա-
մարտի առաջն առավ ժուկովսկու միջամտութիւնը: Ըստ
վորում Պուշկինը պնդեց, վոր իր վարմունքն արդարաց-
նելու համար Դանտեսն ամուսնանա Նատալիա Նիկոլաև-
նայի քրոջ հետ, վորը սիրահարված էր Դանտեսին: Հար-
սանիքը տեղի ունեցավ հունվարի 10-ին: Բայց ամուսնու-
թիւնից հետո էլ Դանտեսը չէր դադարեցնում իր հետա-
պնդումը Նատալիա Նիկոլաևնայի նկատմամբ: Պուշկինը

շուտով իմացավ Նատալիա Նիկոլանյայի և Դանտեսի տե-
աակցութեան մասին, վոր տեղի ունեւր միջնորդ՝ բարձրաշ-
խարհիկ կին Իգալիա Պուլետիկի տանը, վորն անձամբ ա-
տոււմ եր Պուշկինին: Վերջապես, վորոշելով ամբողջ գործը
վերջացնել, հունվարի 25-ին Պուշկինը Հեկկերենին մինամակ
գրեց, վորի մեջ ամենախիստ ու վերավորական արտահայ-
տութեաններով նկարագրեց թե՛ նրա սեփական, թե՛ Դան-
տեսի դերը: Այս նամակն այլևս վորևէ հաշտութեան տե-
ղիք չեւր թողնում: Մյուս ուր Հեկկերենը Պուշկինին ուղար-
կեց պատասխանը, վոր պարունակում եր Դանտեսի հետ
մենամարտելու մարտահրավեր: Նամակը բերեց Դանտեսի
վկան՝ Փրանսիացի դիպլոմատ դ'Արշիակը: Բանակցու-
թեանները շարունակվեցին հունվարի 26-ին և 27-ին: Պուշ-
կինը հունվարի 27-ի առավոտյան պատահմամբ հանդիպե-
լով իւր լեցեյի ընկեր Դանզասին՝ առաջնորդեց նրան
դ'Արշիակի մոտ. տեղի ունեցավ բացատրութեան, վորի հե-
տևանքն այն յեղով, վոր Դանզասը հանձն առավ Պուշկի-
նի վկան լինելու պարտականութեանը և մենամարտը տե-
ղի ունեցավ հունվարի 27-ին Չլորնայա գետակի ափին,
Կոմենդանտսկի ամառանոցի մոտ: Դանտեսի գնդակով Պուշ-
կինը մահացու վիրավորվեց: Յերբ նրան տուն բերին և
բժիշկներ կանչեցին, նրանք միայն կարող եյին արձանա-
գրել վիրավորի անհուսալի դրութեանը:

Մեռնող Պուշկինի անկողնու մոտ անընդհատ հերթա-
պահութեան եյին անում նրա մոտիկ բարեկամները՝ Ժու-
կովսկին, Վյադեմսկին, Ալեքսանդր Տուրգենևը, բժիշկ Դա-
լը (հայտնի գրող) և ուրիշները: Պուշկինի վիրավորվելու
լուրն արագորեն տարածվեց քաղաքում. հետևյալ ուր նրա
ապրած տան մոտ սկսեց հավաքվել ամբոխը: Ծանոթներն,
ու անծանոթները մտնում եյին Պուշկինի բնակարանն
իմանալու նրա առողջութեան վիճակի մասին: Յեկողներն
աղնքան շատ եյին, վոր Ժուկովսկին թերթիկները վրա

նկարագրում եր Պուշկինի դրութեանը և այդ բյու-
լետները կախում բնակարանի դռնից: Հունվարի 28-ի
ամբողջ ուր Պուշկինն անցկացրեց տանջանքներով: Այ-
նուամենայնիվ նա ուժ ունեցավ միքանի կարգադրութեան-
ներ անելու համար: Հետևյալ ուր Պուշկինն սկսեց գիտակ-
ցութեանը կորցնել: Հունվարի 29-ին (նոր տոմարով փե-
տրվարի 10-ին) 2 ժ. 45 րոպեյին նա մեռավ:

Վոստրիկանութեանը միջոցներ ձեռք առավ կանխելու
Պուշկինի մահվան առթիվ սպասվող մանիֆեստացիանե-
քը: Պուշկինի մահվան առաջ բերած հասարակական տրա-
մադրութեաններն անդրադարձան մի շարք փաստաթղթե-
քի մեջ, որինակ, պրուսական դեսպան Լիբերմանը գրել ե
իւր կառավարութեանը, վոր «բոբբոբված են և հատուցման
աղաղակներ են լսվում». «Այս զգացումը յերևան չեկավ
մայրաքաղաքի բնակչութեան ստորին շերտերում ավելի
մեծ ուժով, քան թե բարձր հասարակութեան շարքերում...
Հասկանալի յե, վոր Պուշկինն ավելի ժողովրդական եր ու
ավելի պաշտամունք ունեւր ուսական ստորին շերտերում...
Պուշկինի մահն այստեղ ներկայացվում ե. վորպես անո-
րինակ կորուստ յերկրի համար, վորպես հանրային աղետ:
Ազգային ինքնասիրութեանն առավել ևս զրգուված ե այն
բանից, վոր բանաստեղծից հետո վերապրած թշնամին
ոտարերկրյա ծագում ունի... Կարծում են, վոր Պուշկինի
մինչմահու ժամից մինչև նրա աճյունը յեկեղեցի փոխադ-
րելը՝ նրա տանը յեղել են բոլոր դասերին պատկանող
մոտ 50,000 հոգի, բազմաթիվ ընկերութեաններ թույլ-
տրվութեան են խնդրել կրելու հանգուցյալի աճյունը: Նույ-
նիսկ հարց կար դիակառքի ձիերն արձակել և մարմնի փո-
խադրութեանը հանձնել ժողովրդին: Յեվ, վերջապես, խո-
շորագույն անասովածի հոչակ ունեցող մարդու մահվամբ
առաջացած ցույցերն ու ովացիաները հասան այնպիսի ա-
տիճանի, վոր իշխանութեանը վախենալով հասարակական

կարգ ու կանոնի խանգարվելուց, հանկարծ հրամայեց փոխել վայրը, ուր պետք է տեղի ունենար հանդիսավոր թաղումը և մարմինը դիշերով չեկեզեցի փոխադրել: Վշտի այս անսովոր արտահայտությունները, իհարկե, պատկերում են պ. Պուշկինի բարեկամներն ու հովանավորները, վորպես հարգանքի տուրք՝ անպայման արժանի նրա տաղանդի բարձրությունը, և վորպես զարմանալի ու փայլուն ապացույց այն հաջողությունների, վոր վերջին տարիներս արել է Ռուսաստանում գեպի պոեզիան ու գրականությունը տածված սերը: Բայց յես անհրաժեշտ չեմ գտնում թագցնել, վոր կան բազմաթիվ պատճառներ յենթադրելու, թե Պուշկինի մահվամբ առաջացած ովացիաների մեծ մասը կարող է և պետք է վերադրվի այն ժողովրդականությունը, վոր հանգուցյալը ձեռք եր բերել վորոշ շրջանակներում շնորհիվ նորագույն լիբերալիզմի գաղափարների... Վառ հայրենասիրության պատրվակով վերջին որերս Ս.՝ Պետերբուրգում արտասանվում են ամենատարրինակ ձառեր, վորոնք պնդում են, թե պ. Պուշկինը, ժողովրդական ազատության գրեթե միակ հենարանը, միակ ներկայացուցիչն էր, և այլն, և այլն»: Սուսվել ևս կարևոր են Լիբերմանի խոսքերը նրանով, վոր դա թշնամու վկայություն է (վողջ դիվանագիտական մարմնից միմիայն Լիբերմանը չուզեց ներկա լինել Պուշկինի հոգեհանգստին): Յեմբիրոք, Պուշկինի մահն առաջացրեց այնպիսի վրդովմունք, վորը վերածվեց քաղաքական դժգոհության պոռթկումի: Այս քաղաքական տրամադրություններն արտահայտեց Լեբմոնտովը «Պուշկինի մահվան առթիվ» բանաստեղծության մեջ (վորը ցրվում եր ցուցակների ձևով):

Նման տրամադրություններ բացահայտորեն արտահայտելուց խուսափելու համար կառավարությունը բոլոր միջոցները ձեռք առավ, վոր հասարակությանը թույլ չարվի մասնակցել Պուշկինի թաղմանը:

Փետրվարի 3-ի կես գիշերին Պուշկինի մարմինը մի ժանդարմի ուղեկցությամբ կոնյուշեննայա չեկեզեցուց ուղարկվեց Միխայլովսկոյե դյուղը: Պուշկինի բարեկամներից միմիայն Ալեքսանդր Տուրգենևիլին թույլ տրվեց ուղեկցել մարմինն մինչև թաղման վայրը: Պսկովի նահանգապետին կարգադրություն եր արված, վոր վոչ մի գիմավորություն, վոչ մի ճարարություն չլինի: Թաղումը տեղի ունեցավ փետրվարի 5-ին Սվյատոգորսկ վանքի գերեզմանատանը:

176

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| Մանկութուն և լեցեյ (1799—1817) | 5 |
| Պետերբուրգում (1817—1820) | 22 |
| Հարավում (1820—1824) | 36 |
| Միխայրովսկոյե (1824—1826) | 60 |
| ✓ Բաճախական թվականների վերջը | 71 |
| 1830 թ. աշունը հոլդինոյում | 92 |
| Ֆերեսունական թվականներ | 104 |

Յեթ. Խճրագիր՝ Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Պրոպագենդ. Խ. ԱՅՎԱԶՅԱՆ
 Գլխավորի լիազոր՝ Տ-1604
 Հրատ. 4523, պատվեր 199, ամբողջ 4000
 Հանձնված և արտադրության 1938 թ. մարտի 4-ին
 Պատրաստված և ապագրության 1938 թ. դեկտեմբերի 31-ին

Պետերբուրգի 2-րդ ապարան, Յերեվան, Նալբանդյան 8



«Ազգային գրադարան»

NL0328045

